Երևան
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն
2020

□□□□
□□□□□□□□□□□ □□□□□

Վարդան Գրիգորեան

ԵԿԵՂԵՑԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Աստվածաշնորհ
հարատև գոյություն

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Գ 880

Վարդան Գրիչենց
Գ 880 Եկեղեցի-Պետություն. Հայություն. Պետություն- Եկեղեցի/ Վարդան Գրիչենց, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020, 180 էջ:

Գրքում անդրադարձ է կատարվում այն իրողությանը, որ վերջին հարյուրամյակում հայոց պետության վերակերտման գործընթացներում Հայ առաքելական սուրբ եկեղեցու դերի անտեսումն ու առավել ևս՝ խոչընդոտումը և նույնիսկ թշնամական արգելակումը հակահայկակա՛ն էր ու հակապետակա՛ն:

Հեղինակը զարգացնում է այն միտքը, թե հայության և հատկապես նրա պետականակերտման համար անհրաժեշտ են ո՛չ միայն եկեղեցի-պետություն համագործակցային սերտ հարաբերություններ, այլև ազգանպաստ ու պետականանպաստ հատուկ միություն և փոխլրացում: Նա միաժամանակ շարադրում է հայության հոգևոր ու դրանով նաև աշխարհիկ վերազարթոնքի միջոցով ազգովին վերափոխվելու, վերահաստատվելու և ըստ այնմ՝ պատասխանատվությամբ ու հմտությամբ գործելու ուղիների իր տեսլականը՝ այն դարձնելով գրքի բովանդակության գաղափարական եզրահանգումը:

Եվ քանի որ, ըստ հեղինակի, Հայոց հավատամք և Հայոց պետություն հասկացություններն ու ըմբռնումը հայ ժողովրդի տոհմիկ, սուրբ ժառանգություն են, ապա գիրքն ուղղված է յուրաքանչյուր հայի և հայուհու՝ անկախ տարիքից, դիրքից, կոչումից, պաշտոնից ու ապրելավայրից:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1406-0

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020

Քրիստոնեությունը 17 դար առաջ
ազգովի պետականորեն ընդունելուց, հռչակելուց և
դրանով ապրելուց հետո, երբ վերջին մեկդարյա մեր
վերապետականացման ջանքերում, գործընթացներում,
այն անտեսելով, էլ չասած՝ ուրանալով, այլևս ի՞նչ է՝
քրիստոնեությունը պետականորեն չե՞նք ընդունում և
չե՞նք հռչակում ու համարում պետական կրոն:
Ապա ի՞նչ ենք անում, հրաժարվո՞ւմ ենք, հե՞տ ենք հռչակում:
Կամ եթե քրիստոնեությունը պետականորեն չենք ընդունում,
ապա ի՞նչ ենք անում, պետականորեն մերժո՞ւմ ենք...
և «մասնավո՞ր» կարգով ենք ընդունում:
Այս հարցերը մեր ժողովրդի համար պետք է պարզվե՛ն,
որովհետև դրանք վերաբերվում են
մեր ազգային հոգևոր տոհմիկ հավատարմությանը, որով և
գնահատվում ու որոշվում է մեր ո՛վ լինելը,
մեր ազգի հոգևոր, գաղափարական ու բարոյական արժե՛քը:
Հետևապես այդ հարցերի հստակեցումը մեր նախնիք ու նաև
Աստվա՛ծ է պահանջում:
Եվ կպահանջեն մեր սերունդնե՛րը:
Կարո՞ղ ենք դրանք անկեղծորեն հստակեցնել:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ

Մ Ո Վ Ս Ե Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի

«Հ Ա Յ Ո Ց Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն»

«Ո Ղ Ք»

Պ ա պ մ ա հ ո ր խ ո ս ք ը՝

«Ողբում եմ քեզ Հայոց աշխարհ,
ողբում եմ քեզ,
բոլոր Հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ,
որովհետև վերացան
թագավորդ ու քահանադ,
խորհրդականդ և ուսուցանողդ.
վրդովվեց խաղաղությունը,
արմատացավ անկարգությունը,
խախտվեց ուղղափառությունը,
հիմնավորվեց պգիպտությամբ չարափառությունը»:

Աստված մի՛ արասցե հասնենք այդ օրին
մեր արարքներով և կամ պարտազանցությամբ:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայոց ազգային եկեղեցու և պետության միջև հարաբերությունների՝ պետության ու եկեղեցու անջատ լինելու իմաստով 1918 թվականին դրված հարցը Հայաստանում կրկին արծարծվեց 1991 թվականին՝ անկախության նորոգ վերահաստատումից անմիջապես հետո, երբ որպես ժողովրդավարական հռչակված պետություն՝ ոմանց հասկացողությամբ մենք պետք է անպայման սովորեինք Արևմուտքից ու առաջին հերթին՝ Միացյալ Նահանգներից, որը եկեղեցին և պետությունը միմյանցից անջատելու ջատագովն էր դարձել: Եվ Հայաստանի այդօրյա ղեկավարությունը, ըստ երևույթին, մտածեց, թե քանի որ ժողովրդավարական, հզոր, հարուստ Ամերիկան այդպիսին է, ապա նորանկախ և նոր ժողովրդավար դարձող Հայաստանն էլ պետք է անվերապահորեն պատճենի, կրկնի՛ նրա այդ դրվածքը, սակայն առանց հարցադրելու, թե արդյո՞ք հայոց պետությունը, պետական կառույցը՝ թեև նոր, իսկ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին՝ դարավոր, միմյանցից անջատ պահելը համապատասխանում է հայի ու հայության ոգուն, նկարագրին, անցած պատմական ճանապարհի փորձառությանն ու իր ապագայի հանդեպ տածած հույսին:

Ու նաև հարց չդրվեց. եթե չանջատվի՛ եկեղեցին պետությունից, ի՞նչ է, քաղաքական-սոցիալական ջրհեղե՞ղ է լինելու Հայաստանում, և ստրկանալո՞ւ է Հայաստանի քաղաքացին: Եվ նույն վիճակում էլ գտնվելու է հայ ազգի շուրջ երկու երրորդը կազմող արտերկրի հայությո՞ւնը:

Խորհրդայնացված Հայաստանի 70 տարիներին ***«միացած կամ անջատ»*** լինելու հարց գոյություն չուներ, քանի որ «աչքը հանված՝ աչքացավից պրծնելու» խնդիր էլ չկար: Բոլշևիկների բռնազավթած Ռուսաստանի նոր իշխանությունն արդե՛ն իսկ պաշտոնապես հրապարակել էր իր բռնորոշումը պե-

տության և եկեղեցու հարցում՝ 1918 թվականի հունվարի 20-ին (նոր տոմարով՝ փետրվարի 2-ին) ժողովրդական կոմիսարների խորհրդի (խորհրդայնացված Ռուսաստանի կառավարության) կողմից ընդունելով հայտնի դեկրետը (օրենքը)՝ «Եկեղեցու՝ պետությունից անջատման և դպրոցի՝ եկեղեցուց անջատման մասին»: Սա Խորհրդային Ռուսաստանի առաջին ու հիմնարար դեկրետներից էր, կարծես թե դեռ Առաջին աշխարհամարտի մեջ՝ քաղաքացիական պատերազմի ու սովի ճիրաններում հայտնված Ռուսաստանն ու ռուս ժողովուրդն ուրիշ հոգս ու ցավ չունեին, բացի եկեղեցու մեկուսացումից ժողովրդի կյանքից՝ պետական բռնօրենքով:

Ու անհասկանալի մնաց. Մենք 1991 թվականին (և մինչև այդ՝ 1918 թվականին) անկախություն հռչակելով՝ փոխանակ մե՛ր գիծը բռնելու, մենք նոր Արևմուտքի՞ն, թե՞ բոլշևիկյան Ռուսաստանին հետևեցինք:

Եվ մինչև խորհրդային կարգերի բռնահաստատումը շատ դարերի ընթացքում ևս եկեղեցին պետությունից անջատելու հարցը չկար, քանի որ հայոց քիչ թե շատ հարատև պետությո՛ւն չկար, և ժողովրդի համար էլ այդպիսի հարցադրո՛ւմն իսկ խորթ, անհասկանալի, անընդունելի էր:

Եվ այդ հարցը հայոց թագավորությունների ժամանակ առավե՛լ ևս չկար, որովհետև պարզապես չէ՛ր կարող այդպիսի հարց լինել մի ազգի մեջ, որն աշխարհում առաջինն ի՛ր իսկ պետության գործուն մասնակցությամբ էր քրիստոնյա մկրտվել ու անմիջապես Հայրապետություն ստեղծել և Մայր տաճար ու այլ սրբավայրեր կառուցել...

Եվ ի մի բերելով այդ զարգացումների վերաբերյալ տասնամյակների ընթացքում թղթին հանձնված մեր մտածումները՝ այս օրերին ձեռնարկեցինք սույն գրքի հրատարակումը, որովհետև եկեղեցի-պետություն հարաբերությունները՝ միմյանցից անջատված լինելու առումով, դարձյա՛լ մեր պետական օրակարգի հարց է դարձել՝ չնայած որ այդ մասին քննարկումներ, առաջարկներ եղել էին 1990-ականների սկզբին: Ու թեև այս ընթացքում մենք ևս անդրադարձել էինք այս հարցին մի շարք

գիտագործնական սեմինարներով, այնուամենայնիվ հարկ համարեցինք մեր նախկին ու նոր մտքերը, գաղափարները, տեսակետները հրատարակել այն համոզմամբ և հույսով, որ դրանք կարող են օգտակար լինել մեր պետությանը, ազգային եկեղեցուն ու հասարակությանը՝ Հայոց եկեղեցի-պետություն հետագա հարաբերությունների հարցում արդար ու հստակ կողմնորոշվելու և ճիշտ՝ ազգօգուտ ու Աստվածահաճո որոշման հանգելու համար:

Մինչ այդ՝ մեր խորին համոզմամբ, հայության ազգային ժառանգական հարազա՛տ զգացումները, հիմնական շահերը և ներկա ու հեռագնա ամեն տեսակի բարեկեցությունը պահանջում են ***«Հայ եկեղեցի-պետություն. ուրույն միություն» դրության ստեղծումը:*** Այլ բան, որ դրա համար պետք է ըստ այնմ պատրաստված ազգ լինենք...

Ուրեմն՝ պատրաստվե՛նք անձնապես, ազգովին, Եկեղեցիով և պետականորեն, որը կլինի նաև հօգուտ մարդկության և ի փառս մեր 17 դար առաջ սրբագործված հավատքի:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, ԹԵ՞ ԱԶԳԱՆՊԱՍՏ ՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՄԵՏ

ՀԱՏՈՒԿ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԽԱԽՏԵԼԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

301 թվականին հայությունը քրիստոնեացավ պետականորեն, թեև մինչ այդ Քրիստոսի հետևորդ շատ հայեր կային:

Այդ նշանակում է, որ հայ պետության հպատակ (քաղաքացի) հայը, ինչպես նաև ոչ հպատակ, սակայն հայության ու Հայաստանի հետ հոգեպես, գաղափարապես և բարոյապես կապված որևէ վայրում ապրող հայը ***քրիստոնյա՛ է:***

Տասնյոթ դար առաջ տեղի ունեցավ հայ ազգին պատկանողների Աստուծո հավատքով պետության ու եկեղեցվո նախաձեռնած մկրտությունը՝ Քրիստոսի անվամբ: Ու առաջացավ հայ պետական առումով քրիստոնեություն և հայ պետականորեն քրիստոնյա ազգ: Ու այդ իրականության ըմբռնումով, երբ ծնվող մանուկը հայ ծնողներից է ու հայ է, ապա նա ***քրիստոնյա՛ է:*** Եվ դրա հաստատման շատ իմաստավորումների հետ ի հայտ եկավ նաև բոլոր հայերի և քրիստոնեական կրոնի փոխառնչությունն առավելապես շեշտող ժողովրդական երկխոսությունը. «Հա՞յ ես: Հա՛յ եմ և տերտերի՛ էլ տղա եմ». քանի որ նա հայ լինելով նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո զավակ է:

Եվ դարերի ընթացքում պետական թե պետականազուրկ վիճակում, հայրենի հողի վրա թե տարագրության մեջ՝ հայն ի ծնե ***քրիստոնյա էր,*** ի ծնե Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո զավակ էր՝ ժառանգաբար ֆիզիկապես, իսկ մկրտվելով՝ նաև հոգեպես:

Քրիստոնեության այս պետահիրավական ու հոգեկան կարգավիճակը հայության համար երբե՛ք չի խախտվել՝ անկախ նրա պետականության ու պետության վիճակից, դրությու-

նից, պայմաններից: Պատմության մեջ չի՛ եղել հայի և հայության այդպիսի պետահիրավական ու հոգեկան խախտում՝ բացառությամբ օտար կողմերի ագրեսիվ ոտնձգությունների հետևանքով առանձին ու մասնավոր ընդհատումները, մասնատումները ***հայ ազգային պատկանելությունից և հոգևոր ինքնությունից՝ քրիստոնեությունից:*** Եվ դա եղել է հայ ազգային ինքնիշխանության ֆիզիկական և կամ հոգևոր ընդհատումների արդյունքում, հատկապես 19-20-րդ դարերում՝ առաջացած իրավիճակների պատճառով ու նաև տարբեր մեթոդներ, խայծեր գործածող «քրիստոնեական» որոշ կողմերի խարդավանքներով, ինչպես նաև հայտնի կամ թաքնված, անաստված ուժերի բռնաճնշումներով:

Այս հարցի պատմական, իրավական, ընկերային ու այլ առումներով ուսումնասիրումը, քննարկումն ու պարզաբանումը նոր կենսատու հորիզոններ կբացեն հայ ազգի, նրա հայրենիք Հայաստանի, պետության ու ամեն հայի համար՝ թե՛ երկրային և թե՛ երկնային իմաստով:

15 - 10 - 1992թ.

ԷԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայ ազգն ինչո՞ւ կորցրեց իր պետականությունը, ազատությունը, տառապեց, կորուստներ կրեց և ինչո՞ւ կրկին դարձավ ազատ ու պետականացավ: Կհարատևի՞ և կզարգանա՞ այս ձեռքբերումը, այլևս կորուստներ չե՞ն լինի: Ինչի՞ց է կախված:

Հայ ազգի կորուստների և տառապանքների պատճառները մինչև հիմա սովորաբար տեսել ենք մեր ազգի սակավաթվության, տկարության ու անմիաբանության մեջ, աշխարհագրական դիրքի և հզորների արշավանքների խաչմերուկում լինելու մեջ, դաժան թշնամիներով շրջապատված լինելու և մեծ երկրների անգթության, կեղծավորության, շահամոլության ու նման այլ պատճառների մեջ:

Վերջին հարյուրամյակում մեր կորուստների ու տառապանքների պատճառները սկսեցինք տեսնել նաև մեր ազգի միամիտ կամ անգրագետ քաղաքականության և քաղաքական գործիչների հմտության պակասի ու անփորձության մեջ: Բայց զարմանալիորեն չտեսանք կամ շատ քիչ ու հպանցիկ տեսանք մեր միջի անազնվության, եսակենտրոնության, անհավատության, ագահության, ամբարտավանության, անպատասխանատվության, նյութապաշտության, կոռումպացվածության և նման այլ պատճառները:

Այս ու երբեմն նաև այլ պատճառների մասին բավարար կամ պակաս հիմնավորվածությամբ քիչ թե շատ ուսումնասիրություններ, կարծիքներ ու տեսակետներ եղել են, սակայն մեր կարծիքով բացարձակապես անբավարար է եղել դրանց թե՛ նպատակադրումը և թե՛ ձգտումը՝ պարզելու մեր տառապանքների և կորուստների՝ մեր ազգից կախված ա՛յն պատճառները,

որոնք պատմականորեն և ընթացիկ կյանքում առնչվում են մեկ կողմից մեր հավատքի, որով և գաղափարականության տկարացման ու բարոյական արժեքների արժեզրկման, իսկ մյուս կողմից՝ մեր մեջ տարբեր ախտերի ներթափանցման ու դրանց վրա մեր կողմից էլ ավելացման հետ:

Այդուհանդերձ, նույնիսկ երբ խոսել ենք հավատքի և նրանով ազգային գաղափարականության ու բարոյականության նվազեցման, տկարացման կամ ընդհանրապես կորստի պատճառով մեր ընկրկումների մասին, ըստ երևույթին մենք շատ քիչ կամ բոլորովին չենք անդրադարձել, չենք արծարծել անհրաժեշտությունը մի հոգևոր բացատրության և գնահատականի, որը բխեր մեր դարավոր քրիստոնեական հավատքից, նրա սկզբունքներից, նրա՛ գիտությունից, թե ինչու ամենաբարի ու ամենակարող Աստված ընդհանրապե՛ս թույլ տվեց հայության տառապանքներն ու կորուստները: Մեր գրականությունը, մեր պատմագիտությունը թվում է, թե չեն էլ փորձում բացահայտել ու իրազեկել, թե Աստված ինչու թույլ տվեց, որ Իր պարգևած շնորհով Իր խորհուրդներն Իր Որդու Ավետարանով պետականորեն ճանաչած առաջին ազգը, դրա արդյունքում նաև Ոսկեդար կերտելով, փոխանակ շարունակեր զարգանալ, հզորանալ, սկսեց անկում ապրել. մասնատվեց, տկարացավ, ստրկացավ, տառապեց և նույնիսկ եղեռնագործվեց, ցրվեց ու սկսեց նաև ձուլվել: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ Աստված թույլ տվեց, որ դա տեղի ունենա, և տկարանան մեր պետական ուժն ու իմաստությունը և մեր հոգեկան ու բարոյական կորովը՝ միաժամանակ թույլ տալով, որ կարծրանա մեր հակառակորդների սիրտը, եղեռնապատվի նրանց միտքը, ամրանա նրանց բազուկը, մեծանա նրանց թիվը:

Ինչո՞ւ թույլ տվեց նաև, որ մյուս ազգերը դառնան լավագույն դեպքում «անտարբեր դիտորդներ» և հաճախ էլ իրենց ճղճիմ շահերին հետևող «անգութ խաբեբաներ»:

Ինչո՞ւ: Ինչո՞ւ Աստված թողեց, որ հայ ազգը ենթարկվի ամենամեծ արհավիրքին՝ ցեղասպանությանն ու դրա հետևանքներին՝ տարագրություն, բաժանվածություն, մասնատում,

որն իբրև թե ազգի «փրկության լավագույն տարբերակ էր» յոթ տասնամյակների աստվածամարտ բռնատիրական ռեժիմի խորթ, դաժան լուծ, և վերջերս էլ, երբ ազատության, պետականացման, զարգացման ու բարեկեցության երկարատենչ հնարավորությունները կարծես հասանելի դարձան, նոր պատերազմ, նոր զոհեր, նոր զրկանքներ, ավերածություններ և նոր գաղթականության հետ նաև զանգվածային արտագաղթ, վտանգ, տառապանք, զրկանքներ ու անորոշություն: Եվ դա՝ ոչ միայն արտաքին թշնամական անմիջական գործողություններ-ի, տարբեր միջամտությունների, ճնշումների, այլև մեր ներքին պատճառներով, որոնք հետևանք էին (և այժմ էլ են) մեր ժողովրդի զգալի մասի և հատկապես ազգի ու երկրի ղեկը ձեռք բերած շրջանակների մեջ աճած հավատազրկության, գաղափարազրկության, բարոյազրկության, եսակենտրոնության ու դրանց արդյունքում առաջացած անազնվության, անգթության, ագահության, նյութապաշտության, կոռումպացվածության ու ըստ այնմ՝ ապրելակերպի, կենսաձևի:

Մեր հոգևորականներն էլ կարծես չեն փորձել վերոնշյալ ինչուների պատասխանը տալ ժողովրդին, հակառակ նրան, որ այդ պատասխանի բացակայությունը բարու և արդարության նկատմամբ առաջացրել էր տարակույս, մինչև իսկ որոշ խորթություն, ու առաջացրել էր նույնիսկ գայթակղություն և որոշակի թշնամանք հավատքի նկատմամբ. Մեր ազգի մտավորականներ համարվողներից մեկն իր բանաստեղծությունում կարծելով, թե «…աստված պիտի դողա երկնքում», ավելացնում էր. «գահ էլ պետք չէ, և ոչ էլ աստված երկնքում», մյուսը արդարության ճակատին էր թքում, մի ուրիշն էլ՝ «Ո՞ւր էիր Աստված ճչում». ուրիշներն էլ, ընդհանրապես ուրանալով Աստծուն, փորձում էին արհամարհել, ծաղրել ու նույնիսկ «դատապարտել» Նրա կանոններն ու պատգամները: Եվ մեզնից շատերն այնքան էին նյութականացել, որ Աստվածության դեմ «բոլոր ճակատներով»՝ մտավոր, կրթական, մշակութային, օրենսդրական պայքար են մղել: Որը ցավոք դեռ լրիվ չի դադարել:

* * *

Աստծո հավատքի, Նրա պատգամների, օրենքների ու կանոնների՝ դրսի ու ներսի դրդումներով մեր ամբարտավան անտեսումը, քրիստոնեությունը պետականորեն առաջինն ընդունած և շատերի մեջ էլ տարածած մեր ազգը նոր չէ, որ տեսել է, այն ունի դարերի պատմություն: Սակայն մեկ դարից ավելի է, որ այդ երևույթը ոչ միայն սաստկացավ ու տարածվեց մեր տարաբախտ ազգի մեջ, այլև այդ ժամանակաշրջանի յոթանասուն տարիների ընթացքում հայության հայրենի հատվածի ու ներքին սփյուռքի մեջ այն վերածվեց մեր հավատքի ու հավատացյալների դեմ ուղղակի թշնամական պայքարի:

Մինչ հայության արտախորհրդային հատվածում քրիստոնեական հավատքի էությունը, բովանդակությունը շարունակում էր բավականին զիջել ձևին ու ձևականությանը, խորհրդային բռնատիրությանը ենթակա հայության ճնշող մեծամասնության մեջ հավատքի հանդեպ անհնազանդությունը ուրացության հասցվեց, և դեռ ավելին՝ շատերը պատերազմ հայտարարեցին մեր Աստծուն՝ մտավորական, հոգևորական որոշակի շրջանակների և ժողովրդի մի զգալի մասի ծախվածության և վախկոտության կամ անտարբերության մեղսակցությամբ:

Եվ էական հարց է առաջանում. Աստված ինչպե՞ս պիտի հատուցեր մեզ այս բոլորի համար:

Նույնիսկ կարծր մետաղյա գործիքների որակական և քանակական բացակայության պայմաններում օրական ընդամենը մեկ-երկու քար սրբատաշող, սայլերով հեռուներից տեղափոխող և ձեռքերով եկեղեցու պատերին բարձրացնող, շարող մեր նախնիների կառուցած եկեղեցիները դիվային հրճվանքով (որպես «սուտ և հակաքաղաքակրթական խավարամոլություն») քանդողներին կամ նրանց խրախուսողներին ու անտարբերներին Աստված ինչպե՞ս պիտի վերաբերվեր:

Աստվածաշնչում գրված է. Աստված հարցրեց Կայենին. «**Ո՞ւր է քո եղբայրը**». և եթե մեզ էլ հարցնի. «Ո՞ւր են Իմ շնոր-

հով ձեր նախնիների դավանած և ձեզ փոխանցված հավատքն ու հավատքի գործերը, վերաբերմունքը, պատվախնդրությունը, «թասիբը»: Եվ ո՞ւր է քաղաքի կենտրոնում ձեր պապերի սուղ միջոցներով կառուցված եկեղեցին: Ինչո՞ւ քանդեցիք և տեղում սկզբում անհավատ եղած, իր Աստվածատուր շնորհն Աստուծո դեմ մարտնչողներին ծառայեցրած ու ավելի ուշ՝ զղջացող Չարենցի անունը կրող դպրոցի շենք կառուցեցիք», ի՞նչ պատասխան ունենք. կամ մեղայի խոսք ունե՞նք:

Մարդկության պատմության վերլուծության ո՞ր չափանիշով, ո՞ր տեսակետից և ո՞ր տրամաբանությամբ պետք է պատասխանենք այս ու նման բազում հարցերի՝ գլոբալականության նյութապաշտական աստվածամե՞րժ, թե՞ քրիստոնեական մեր ազգային հավատքի տրամաբանությամբ:

Եվ եթե մարդկային մտքի համար «ոչինչ չի մոռացվում»-ը, «ոչինչ չի կորչում»-ը այնուամենայնիվ խնդիր է, ապա Աստծո հավիտենականությունում ոչի՛նչ չի կորչում, չի՛ անտեսվում, ամե՛ն ինչ հաշվի է առնվում և ամենայն արդարությամբ հատուցվում է:

Այո՛, երկար ժամանակ և շատ բնագավառներում ու ճակատների վրա պայքար մղեցինք մեր Աստծո դեմ: ***Համոզված ենք, որ եթե չլիներ մեր ազգի մեծերի, սրբերի, նահատակների հավատքին հավատարմությունը, չլիներ մեր ժողովրդի մեջ դեռևս մնացած սրբությունը, Աստծո հանդեպ հարազատությունն ու հավատարմությունը և ամենակարևորը՝ եթե չլիներ հայ ազգի հանդեպ Աստծո սերը, ներողամտությունն ու փրկության հնարավորություն տալու Նրա բարի կամքը, ապա աշխարհիկ ամեն տեսակի հաշվարկներով հայ ազգն այսօր գոյություն չէր ունենա: Առավե՛լ ևս Հայաստան անվամբ երկիր և պետություն չէր լինի:***

Սակայն, ցավոք և ի դժբախտություն մեզ, մեր ազգային, քաղաքական, պետական հայտնի գործիչներից և նույնիսկ մտավորականներից իսկ շատեր մեր հավատքի մեջ թուլություն և տկարություն են տեսել (էլ չասած նրանց մասին, որ ընդհա՛նրապես ոչինչ չեն տեսել, մեր հավատքը սուտ, դատարկ ու

կե՛ղծ են համարել): Նրանք մեր պարտությունների, կորուստների ու հետընթացի պատճառը մեր հավատքի հույսի և սիրո համբերատարության մեջ են տեսել և մեր հավատքի հետ դառնորեն նաև մեր կրոնն ու եկեղեցին են պախարակել, վնասել:

* * *

Մեր հայ ազգի պետականորեն առաջինը քրիստոնեանալու փաստի մեջ մե՞ծ խորհուրդ ու իմաստ կա: Սակայն վստահ չենք (հատկապես վերջերս այդ փաստը հաճախ կրկնելով հանդերձ), որ կարողանում ենք ըմբռնել այդ խորհուրդն ու իմաստը. այն, որ մի ազգ խոր հեթանոսությունից «հանկարծ» խորապես քրիստոնյա դառնալու համար, այսինքն՝ աշխարհիկ կյանքի և հավիտենականության նկատմամբ Աստվածային խորհրդին ու նպատակին հաղորդվելու համար պետք է լուսավորվեր Աստվածային հոգով ու ստանար Աստծո հավատքը:

Մեր առաջին եպիսկոպոսապետին թեև հազար յոթ հարյուր տարի առաջ Լուսավորիչ ենք կոչել, սակայն դրանից հետո եկավ ժամանակ, երբ մոռացանք, որ այդ լուսավորումն ու հաղորդությունը հնարավոր չէր ստանալ ո՛չ ուժով, ո՛չ հարստությամբ, ո՛չ աշխարհիկ որևէ գիտությամբ, ո՛չ էլ նույնիսկ գործերով, այլ միայն ու միայն Աստվածային շնորհով: Եվ մեզ տրվե՛ց այդ շնորհը: Բայց ասված է, որ ում շատ է տրվում, նրանից շատ էլ պահանջվում է: Այն պահից, երբ մենք ստացանք Աստվածային շնորհը՝ լուսավորվելով հաղորդակից լինելու Աստծո խորհուրդներին, պատգամներին ու նպատակներին (իսկ դրանից ավելի մեծ շնորհ ու պարգև, որ իմաստավորում է անձի, ազգի, երկրի ու պետության կյանքը, գոյությունը, չկա ու չի կարող լինել), մեզ շնորհվեց նաև հատուկ՝ թե՛ կարողություն և թե՛ ըստ այնմ՝ խնդիր ու պարտականություն: Ու այդ շնորհով, այդ լույսով ու դրանից առաջացած հանճարով մենք կերտեցինք մեր Ոսկեդարը:

Թե ինչքանով մենք ըմբռնեցինք ու կատարեցինք Աստվածային մեր առաքելությունը՝ պատգամները, խնդիրներն ու

պարտականությունները որպես անհատ, որպես ազգ և որպես պետություն, որոնք, վերաբերելով մեր ժողովրդի ճշմարիտ հավատքին, նաև պետական էին՝ բնույթով հոգեղեն ու արտահայտությամբ աշխարհիկ, դա խորը և մանրամասնորեն անդրադառնալու խնդիր է: Սակայն այն, որ համեմատաբար գոյատևեցինք ու հասանք մինչև օրս, նշանակում է, որ մեր նախահայրերն իրենց հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականությամբ (Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որը մեր հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է) և մեր ազգային տոհմիկ բարոյականությամբ, ու ըստ այնմ՝ հոգևոր, մտավոր և ֆիզիկական ծառայությամբ արժանացան աստվածային հաճությանն ու վարձին, որը փոխանցվեց նաև հայ սերունդներին, որպես ամենաէական ու անանց ժառանգություն, որից սնվում է մեր գոյությունը մինչև օրս:

Այս լույսի ներքո գնահատելով մեր ներկա գոյությունը՝ մենք պետք է գերերջանիկ զգանք մեզ, որովհետև մարդկային նյութապաշտության մեր միջից հրահրված ու նաև դրսից մեր մեջ մղված աստվածամերժ պատերազմում մենք կարող էինք լրիվ ախտավորվել, ոչնչանալ ու կորչել:

Բայց շատ ավելի մեծ իմաստով ու նաև շատ ավելի բարձր մակարդակով շարունակելու համար մեր գոյությունը, էական պայման է գիտակցել հատկապես մե՛ր ժամանակաշրջանի շեղումները, օրինակ.

- երբ խորապես մեղանչեցինք՝ անուշադրությամբ, անտարբերությամբ, գուցե և հանցավոր համագործակցությամբ, թույլ տալով, որ մեր հավատքի կենտրոն Սուրբ Էջմիածնում՝ Գևորգյան ճեմարանում, աստվածամերժ մարքսիզմ-լենինիզմի գաղափարները դավադրորեն տարածող՝ հայ մարդկանց խմբակ գոյանա:
- Երբ մեր մտավորական կոչվող շատ անձինք փոխանակ ջանային առողջացնել, վերականգնել մեր ժողովրդի (շատ ու երկարատև պատճառներով) աղավաղվող, տկարացող ազգային տոհմիկ հոգեմտավոր կերպարը, ազգա-

յին քաղաքացիական գիտակցությունը, Աստծո, ազգի և հայրենիքի հանդեպ սրբազան պարտքի ճանաչումն ու կատարումը, ժրաջան դավադրությամբ գործում էին դրանց դեմ՝ նենգամուծված սուտ ու կեղծ ուսմունքներով ախտահարելով մեր աշխատավորի, զինվորի, ուսանողի և նույնիսկ աշակերտի միտքն ու հոգին:

- Երբ իրենց ճակատին իբրև թե կարմիր աստղ կրելու համար, մեր տգիտությամբ, փոքրոգությամբ ու դավաճանաբար թուրք ասկյարներին հանձնեցինք Կարսի անառիկ բերդը:
- Երբ ո՛չ միայն դասալքում էինք ընդամենը երկու տարի առաջ Սարդարապատի ու այլ հերոսամարտերի հաղթանակով կազմավորված Հայաստանի Առաջին Հանրապետության բանակից, այլև դավադրաբար նրա դեմ էինք գործում: Եվ հետո էլ նրա հերոսական սպայությանը խաբեությամբ ձերբակալելով գնդակահարում կամ սիբիրյան աքսորների տանջահար հյուծման էինք մատնում:
- Երբ անաստված կոմունիզմի պոռնկությամբ հարբած՝ հրճվանքով քանդում կամ պղծում էինք մեր եկեղեցիները և ծաղրուծանակի, նսեմացման ու տանջանքների ենթարկելով՝ դաժանորեն ոչնչացնում էինք մեր ազգին, հայրենիքին նվիրված հոգևորականներին, մտավորականներին, գյուղի ու քաղաքի արտադրող լավագույն մարդկանց:
- Երբ կեղծիքներով խաբում էինք ռեժիմից դուրս ապրող մեր հայրենակիցներին, որպեսզի նրանք էլ ծառայեն այդ ռեժիմին, մեծ մասամբ անգիտակցորեն խաբելով իրենց շրջապատին, ու այդ «ճարպկության» համար մեզ գովասանքներ էին բաշխվում, դիրքեր ու որոշակի միջոցներ տրամադրվում: Եվ այդ «երեսունանոց արծաթները» մեծ մասամբ ընդունվում էին առանց խղճի խայթի, որ մենք դրանով ի վերջո ամրապնդում ենք նաև մեր ազգի ազատությունը կաշկանդող շղթաները:
- Ու երբ այդ վիճակի մեջ էինք ընկել, մեր արածներով ու չարածներով կամա թե ակամա Աստծո թշնամուն ծառա-

յեցինք, Աստծո դեմ պատերազմողների կողմում գտնվեցինք և մեր մատաղ սերունդներին էլ ըստ այնմ դաստիարակեցինք:

Եվ հետևա՞նքը, մեր ներսում այնքան խավարում եղավ, որ այսօր իսկ այդ ժամանակների կարոտախտով տառապողները, այդ օրերին «էրնեկ տվողները» շատացան: Եվ նրանք առանց մտածելու, հասկանելու, զգալու, որ օտարածին սրբապիղծ ռեժիմի ժամանակ, այնուամենայնիվ, մեր ժողովրդի կողմից շատ դրական բաների դրսևորումը գալիս էր մեր մեծ նախնիների սուրբ գործերի համար հատուցված և մեզ ժառանգություն թողած շնորհից, գովաբանում ու երանի են տալիս բռնատիրության օրերին: Իսկ այժմյան մեր տկարությունը, թուլությունը, որ գալիս է Խորհրդային ախտահարումից և տարբեր ձևերով շարունակվում, գուցե և ավելանում է, ըստ երևույթին չեն հասկանում, որ դրանից պետք է ժամ առաջ ազատվել, այլ ոչ թե մեր անզգոնությամբ կամ անտարբերությամբ դրա վրա նորամույծ վարակներ ավելացնել, և դրանք մեր ազատագրված կրթական համակարգի, արվեստի, գրականության, տեղեկատվության ու այլ միջոցներով մեր նոր իրականության մեջ այնքա՛ն տարածել, որ նյութապաշտական նորաձև՛ կոռուպցիան սկսի մեր հոգիները, պատիվը և կենսունակությունը քաղցկեղի պես ճարակել:

Եվ դրա հետևա՞նքը. ազատագրված Հայաստանի ազատ, անկախ հանրապետության մեջ խղճի, բարության, արդարության, ազգօգուտ վերաբերմունքի և պետական օրինապահության ավելացման փոխարեն ավելացան անզգամությունը, ագահությունը, ազգավնաս ու հակապետական օրինազանցությունը և դրանցով նաև եսամոլությունը, անխղճությունն ու անամոթությունը, լկտիությունը, հանցագործությունը...

Ու այս և նման առումներո՛վ է հայ ազգի համար ***էական հարց,*** թե այժմ ինչպիսի՞ն է հայի անձնական, ազգային ու պետական դիրքորոշումը, կեցվածքը և վերաբերմունքն այսօրվա մարտահրավերային փորձությունների ու ապագայի հավանական գայթակղությունների նկատմամբ:

Եվ ամենաէականը՝ ի՞նչ պետք է անել մեղանչումների համար ապաշխարելու և շեղումներից ուղղվելու համար. և ինչ-պե՞ս պետք է դա անել: Այս և նման այլ հարցերի պատասխանները կենսականորեն անհրաժեշտ են մեր ժողովրդի, մեր երկրի, մեր պետության և հատկապես նոր սերնդի՝ մեր ապագայի համար: Եվ արդար ու կարևոր է, որ ակնկալվող պատասխանները տան հատկապես ազգի հոգևորականությունը, ազգի մտավորականությունը և ազգի ու պետության ղեկավարությունը: Մինչ այդ, հայ մարդու ***հավատքը*** հուսադրում է Ավետարանական այն խոսքով, թե որտեղ շատացավ մեղքը, այնտեղ էլ շատացավ ***Աստծո շնորհը***՝ փրկության միակ միջոցն ու ճանապարհը: Եվ այդ հուսադրման արդարությունն է, որ արդեն ուրվագծվում է հայ կյանքի երկնակամարում՝ որպես միասնության և զորության երկնառաք շնորհ:

Ու այս բոլորի մեջ ակնհայտ է դառնում այն ամենաէական ու կենսատու իրականությունը, որ ***Աստված սիրո՛ւմ է հայ ազգը***: Սիրում է և դրա համար ներեց ու չթողեց, որ կորչի: Եվ Նրա պարգևած փրկության շնորհը հավատքի նոր ծիլեր է արձակում մեր ժողովրդի մեջ: Իրենց «սապոգները» Սուրբ Մյուռոնով փայլեցնել ուզող բոլշևիկների թոռներն ու ծոռները մկրտվում են Սուրբ Մյուռոնով և նրանց կրծքին կարմիր տոմսի փոխարեն Փրկչի Խաչն է հայտնվում. կուրացած հոգիներն աստիճանաբար տեսողություն են ստանում, ճանաչում են կյանքի գերագույն, հիմնական ճշմարտությունը՝ Հիսուսի Աստվածությունը, և խլացած սրտերը լսում են Աստուծո կենարար խոսքը, փրկության հավատը նրանց մեջ զորանում է, և ախտահարված սրտերն ու մտքերը մաքրվում են:

Ու թեև, ըստ երևույթին, շատ դեպքերում հավատքը դեռ ձևի, ձևականության և ծիսակատարության մեջ է ըմբռնվում, լիարժեքորեն չի արտահայտվում և գործի չի վերածվում, այնուամենայնիվ, ըստ արդեն իսկ ապացույց դարձող հույսի, հեռու չէ այն ժամանակը, երբ հայության բոլոր հատվածների և խավերի մեջ հավատքը կավելանա և զանգվածային գործերով կներթա-

փանցի մեր ազգի խորհուրդների, նպատակների և ձգտումների մեջ:

Փրկության ու վերընթացի այս ճանապարհին էական պայման է, որ մեր ժողովուրդն իր ամբողջությամբ, համապարփակ ու պետականորեն արձագանքի Աստծո ողորմածությանը՝ իր հավատքի նորոգությանը, արտահայտելով այն որպես Մա՛յր Հայաստանի, աշխարհասփյուռ հայության ու հայրենի պետության միասնակա՛ն կյանքի ***Աստվածահաճո կենսաձև, ապրելակերպ, գործ ու ապրում:***

* * *

Փա՞ռք Աստուծո, որ տարածաշրջանում համայն հայության հայրենիք Հայաստանը դեռ ժողովրդավար է, և հայության հայրենաբնակ հատվածն ազատ երկիր, ազատ հասարակություն է կերտում: Բայց բոլոր հայերիս պարտքն է այդ ընթացքն արագացնել, ամրապնդել և մանավանդ լի՛ովին իրական ու նաև տևական դարձնել առանց որևէ զիջումի ու գործարքի:

Մեր հայրենիքում մեր ազգային կյանքն ու կենսաձևը, հասարակական կարգ ու կանոնը, պետության ու հասարակության հարազա՛տ, անկե՛ղծ, հայավայե՛լ հարաբերությունները պետք է մարդկության ամենաբարձր չափանիշներով հասցնենք նրա բարձրագույն մակարդակի: Հայոց աշխարհից հայկական մնացած Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների կողմից ո՛չ թե ծանր հանցագործություն՝ կոռուպցիա, գողություն, սպանություն, այլև անարդար, անխիղճ, ապօրինի ո՛րևէ վերաբերմունք, ո՛րևէ չարախոսություն, հայհոյանք, վիրավորա՛նք իսկ ***չպե՛տք է լինի***:

Քրիստոնյա Հայաստանն իր տասնյոթդարյա սրբագործված հավատավորման տարեդարձները պետք է տոնի, դարձնելով դրանք իր սիրո, բարության, գթության, համերաշխության, ազատության, օրինականության, հանդուրժողականության և հասարակական ներդաշնակության օրինակ համա՛յն մարդկության համար:

Եվ դա մեր հայության համար նաև անձնական, ազգային ու պետական ապահովություն, զարգացում և բարգավաճում է իր բոլոր հեռագնա երկրային ու Երկնային երջանկաբեր հետևանքներով:

Ո՞ւմ գործն է, ո՞վ պիտի անի դա մեզ համար: Կամ այդ անելն ո՞վ պիտի սովորեցնի մեզ, որ անենք: Այս հարցերի պատասխանն է՝ ***մե՛նք***: Մե՛նք պիտի անենք, պատշաճորեն սովորելով բոլոր մեր մեծերից, սրբերից, որոնց կատարած անանց արժեքի գործերի՝ մեզ թողած ժառանգության շնորհիվ ներումի արժանացանք, ու Աստվածային շնորհով մեր ազգին ծառայելով՝ մարդկությանը ծառայելու ***ասպարեզ*** դուրս եկանք:

Անարժան է ու մեղք է անտեսելը, արհամարհելը և դրանով պղծելը մեզ շնորհված այս ***ասպարեզն*** անհավատությամբ կամ ձևական հավատով և ըստ այնմ՝ մեր հատկապես վերջին շուրջ հարյուր տարիների մեղավոր խորհուրդներով ու գործերով: Ազգի հոգևորականությունը, մտավորականությունը և մանավանդ ազգի ընտրյա՛լ ղեկավարությունը պե՛տք է, ***պարտավո՛ր են սկսել կատարե՛լ այդ գործը:*** Այդ շատ դժվա՛ր գործը, որի համար էապես կարևոր է ապրել Աստվածահաճո կյանքով և միաժամանակ օրինակ դառնալ ազգին՝ ապրելու նորոգ՝ պետական մտածելակերպով, հոգևոր ու քաղաքացիական բա՛րձր գիտակցությամբ և բարոյական կյանքով: Այդ խավերի կողմից նվազագույն իսկ խախտումը տասնապատիկ, հարյուրապատիկ, իսկ ամբարտավանացման, ուրացման ու դավաճանության դեպքում հազարապատիկ մեղք է, որը ո՛չ միայն նրանց կողմից, այլև ամբողջ ազգի կողմից է հատուցելի: Հետևապես, այսուհետև նրանցից միայն արդարը, ճիշտն ու օգտակարը պետք է ակնկալվի ու պահանջվի: Եվ այդ պահանջի կատարումն էապես կարևոր ու կենսականորեն անհրաժեշտ է, որովհետև Աստվածապատգամ է: Եվ այդ պահանջը մեր մարդկային կյանքերն իմաստավորող ու հավերժականացնող Երկնային շնորհ է, որը մեզ տրվում է մեր նախնյաց սիրույն, Աստուծո հավատքի հանդեպ նրանց ***հավատարմության*** համար: ***Հավատարմություն***, որը մենք նույնպես պետք է պահպանենք և որ-

պես երջանկաբեր ազգային ու պետական հավերժական ժառանգություն՝ փոխանցենք մեր սերունդներին, Աստուծո կամքով ու օգնությամբ: Փա՞ռք Նրան:

27 - 12 - 1988թ., վերանայված՝ 18 – 11 - 1992թ.,
Վաշինգտոն ԿՇ

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սրբությունն ու մեղքն անհամատեղելի են: Մեղքը մարդուն հեռացնում է Աստուծուց: Աստուծո ճանապարհն ու մեղքի ճանապարհն անհամատեղելի են: Չես կարող միաժամանակ երկու ճանապարհով էլ գնալ, երկու տիրոջ ծառայել:

Նյութապաշտությամբ մարդկությունն ընտրեց մեղքի ճանապարհը:

Իսկ գրված է, որ մեղքի վարձը մահ է:

Աստված գոյացրել է կյանքի օրենքները, և Ինքը չէ, որ պիտի խախտի Իր դրած օրենքները: Հետևապես՝ մարդկության մեղքերի համար՝ մարդկության փրկության համար, Իր սիրով՝ Իր Որդուն զոհեց հանուն մարդկության կյանքի: Իր Որդին՝ Ինքը լինելով Աստված, կարո՛ղ էր Իր վրա վերցնել ամբողջ մարդկության մեղքը:

Եվ Աստված մարդ դարձավ, վերցրեց Իր վրա մարդկության մեղքերը, Խաչի վրա Իր արյամբ հատուցեց, և Խաչը դարձավ փրկություն: Մեղքի հատուցումից՝ մահից, դարձավ արդարացում՝ կյանք: Կյանք՝ բոլորի համար, ովքեր հավատում, պաշտում են Խաչը և գնում Տիրոջ ճամփով...

1700 տարի առաջ հայոց ազգը դարձավ Խաչապաշտ՝ պետականորեն: Անցավ մահից դեպի կյանք՝ պետականորեն: Սա՛ է, որ այսօր մենք պետք է տոնենք: Սրա համա՛ր է, որ այսօր ազգովին և պետականորեն պիտի շնորհակալություն հայտնենք ու փառք տանք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ Սուրբ Եր-

որդությանը՝ Աստուծուն: Եվ ՆՈՐՈԳԵՆՔ ՈՒԽՏԸ՝ հավատքի հավատարմության և սրբության կյանքով ծառայելու Աստուծուն՝ Նրա՛ մեզ պարգևած անդաստանում՝ ***Հայոց Ազգային Գոյությունում ու Հայաստան Աշխարհում,*** դրանց բարգավաճման և վերելքի համար, որը և՛ ի բարօրություն մարդկության և՛ ի հաճություն ու ի փառս՝ Աստուծո:

Հոգևոր կուրություն, կյանքի տգիտություն, անգիտակից վիճակ և կրոնական անգրագիտություն. սրանք հետևանք են անհաղորդության Աստուծո խոսքին՝ Աստվածաշնչին:

Թեև շատ երկրների օրենքներում օրենքը չգիտենալն արդարացում չէ, բայց Աստուծո համար արդարացում է: Աստված ինչպե՞ս կարող է մեղադրել մեկին՝ Իր օրենքները չկատարելու համար, երբ նա չգիտի այդ օրենքները: Բայց Աստված կմեղադրի նրա՛ն, ով պարտավո՛ր էր սովորեցնել այդ օրենքները:

Հայությունը, Հայաստանի բնակչությունը գիտի՞ Աստուծո խոսքը, Աստուծո կամքը, Նրա օրենքները, Նրա պատգամները: Եվ իրեն ցույց տրվո՞ւմ է, նաև օրինակով, թե ըստ այդմ ինչպե՞ս պետք է ապրի: Եթե ո՛չ, ցույց չի տրվում կամ դա պատշա՛ճորեն չի արվում, այդ դեպքում վա՛յ Հայաստանյայց Եկեղեցվո պաշտոնեությանը, վա՛յ հայ քրիստոնյա կոչվող ղեկավարներին, վա՛յ նաև մեզ՝ բոլորիս, ամբողջ ազգին ու հայրենիքին: Ո՞ւր է ազգի և նրա հոգևոր ու նաև աշխարհիկ ղեկավարության խիղճը: Մնացե՞լ է խիղճ, ի՞նչ վիճակում է այն: Իսկ գիտակցությո՞ւնը: Ինչպիսի՞ն են գիտակցության բնույթը և մակարդակը: Հոգեկան և գաղափարակա՞ն է գիտակցության բնույթը՝ դեպի կյա՞նք ձգտող, թե՞ նյութական և նյութապաշտական է՝ դեպի ապականում և կորուստ տանող...

* * *

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին Քրիստոսի Ավետարանով Աստուծո հավատքը, մարդկային կյանքի ճշմարի՛տ իրականությունը, էակա՛ն ճշմարտությունը և դրա հիմնական իմա՛ստն արտահայտելով, նրա կոչումը, առաքելու-

թյունը և պարտականությունը Աստուծո հավատքը՝ կյանքի ապրումի վերածման համակարգումն է և իր լիարժեք մասնակցությունը դրա կազմակերպական կառավարման մեջ թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ իմաստով: Ուստի, որպես հայության և Հայաստանի հավատքի ապրումը համադրող և կազմակերպական կառավարմանը լիարժեքորեն մասնակցող ազգային հաստատություն, Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցին 17 դար անխափան գործող պետական բնույթի կառույց է: ***Հետևապես, Հայաստանում եկեղեցին պետական սկիզբ ունի և պետականության բաղկացուցիչ մաս է, որով և հայոց պետությունն ու եկեղեցին կապված են անքակտելիորեն, 1700-ամյա քրիստոնեական Ուխտով Աստուծո առաջ:***

Այս պատմական փաստի լույսի ներքո պարզագույն տրամաբանությամբ իսկ պետք է հասկանալի լինի, որ այդ ՈՒԽՏՆ իր բնույթով անքակտելի լինելով՝ չի կարելի անտեսել, չի՛ կարելի ձևափոխել ու, առավել ևս, չի՛ կարելի փոխարինել որևէ օրենքով, կանոնով կամ սահմանադրությամբ: Որովհետև, նախ՝ այդպիսի օրենքն ու սահմանադրությունը կչեզոքացնեն, ապօրինի կդարձնեն իրենք իրենց ու իրենց հռչակողներին, իսկ երկրորդն ու ամենաէականը. ***այդ ՈՒԽՏԻ հաստատումն ու ամրագրումը լինելով Տիեզերակա՛ն ու Հավերժակա՛ն... այն ո՛չ ձևափոխել կարելի է, ո՛չ էլ փոխանակել, այլ կարելի է անել միայն հետևյալը՝ ուրանալ, խախտել և հուդայաբար դավաճանել...*** Ընթացք, որը վաղուց արդեն որդեգրել ենք... Կուզենա՞նք շարունակել... Չէ՞ որ այդ դեպքում անձնապես ու ազգովին հո՛ւյս իսկ չենք ունենա կորստյան ճահճից դուրս գալու, այժմ և հավիտյանս...

Եթե կան պետություն և մշակույթ, պետություն և կրթություն, պետություն և գիտություն, պետություն ու ազգային գաղափարախոսություն, ապա ինչպե՞ս կարող է չլինել պետություն և կրոն: Միայն թե պետությունը կարող է լինել կրոնը հավատքով ընդունող ու պետության և ժողովրդի կյանքում կիրառմանն աջակցող և կարող է լինել կրոնը չընդունող: Կամ ավելի վատ՝ հավատքով կրոնն առերեսորեն ընդունող, սա-

կայն, իրականում տարբեր կերպերով դուրս մղող պետության կյանքից, որով և ավելի կամ պակաս՝ նաև ազգի կյանքից:

Բայց կրոնի և հավատքի նկատմամբ չեզոք պետություն չի՛ կարող լինել, և հայկական պետությունը հաստատ չի՛ կարող չեզոք լինել: Կա՛մ հավատացյալ՝ խաչապաշտ է, կա՛մ էլ անհավատ՝ նյութապաշտ՝ իր բոլոր տեսանելի ու անտեսանելի հետևանքներով:

Եվ պետության ու եկեղեցվո միասնությունը չի՛ նշանակում կողմերի միմյանցից կախվածություն: Առավել ևս չի՛ նշանակում կա՛մ կրոնապետություն, կա՛մ էլ հավատքի, կրոնի ու եկեղեցվո՝ պետությանը ենթակա կցորդի կարգավիճակ: ***Հայոց եկեղեցվո և պետության միասնություն, որոշակի տեսակետից նշանակում է եկեղեցականության, ժողովրդի, պետականության և պետական իշխանության հավատքի և վարքի քրիստոնեական լինելը:***

Բացի աշխարհի ամեն տեսակ քաղաքագիտական, հասարակագիտական, փիլիսոփայական և այլ մոտեցումներից ու մեկնաբանություններից, հայ ժողովուրդը և հայոց պետականությունն ունեն իրենց ուրույն տրամաբանությունը՝ համաձայն իրենց ազգային հոգեկանության, պատմական անցյալի ընթացքի, ներկա գոյավիճակի ու ապագայի ակնկալիքի: Սա լայն խնդիր է, նույնքան էլ կարևոր և առանձին մոտեցում պահանջող, բայց տվյալ պարագայում, թեկուզև կարճ, պետք է ասվի, որ մենք մեր կյանքը պիտի կառուցենք ու ապրենք ըստ մեր ազգի տոհմիկ, հարազատ հոգեկանության հավատքով, դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականության, բարոյական արժեհամակարգի, աշխարհայացքի ու հոգևոր ժառանգության, ինչպես նաև ըստ մեր արդի գոյավիճակի ու ապագայի պահանջների: Եվ այսպես վարվելով՝ մենք կլինենք ազգային ու նաև համամարդկային, բայց ամենաէականը՝ կլինենք ազնիվ ու հավատքին հավատարիմ Աստուծո ժողովուրդ, ազգ և պետություն: Հետևապես սխալ և հույժ վնասակար է, ո՛րևէ պատճառով, ո՛րևէ պարագայում ընդունել օտար, մեզ՝ մեր հո-

գեմտավոր կերտվածքին անհարիր կարգը, վարքը, գործողություններն ու փոխառությունները:

Մարդկության փորձը նաև մե՛ր փորձն է, դրա համար էլ մարդկության փորձից պետք է սովորել, ինչպես և որևէ առանձին ազգի, պետության փորձից (հայ ազգն այդ արել է իր կազմավորման օրից ի վեր): Սա հարց չէ, հարցը՝ ***ո՞ր*** փորձը որդեգրելն է և ***ինչպիսի՞*** փոփոխություններով ***ինչպե՞ս*** կիրառելն է:

Օրինակ, մենք եկեղեցի ու պետություն հարաբերությունները ո՞ր երկրների օրինակով ենք կիրառում և ո՞ր երկրների օրինակն ենք անտեսում: Ու նաև հարց է առաջանում. մեր հոգեկերտվածքի, աշխարհայացքի, հոգեմտավոր ժառանգության, պատմական ավանդության ու այսօրվա վիճակի և ապագայի կերտման կենսական խնդիրների տեսակետից ինչպե՞ս ենք արդարացնում, պատճառաբանում պետություն-եկեղեցի հարաբերություններում մեր ներկա անձնական, պետության և կղերականության վերաբերմունքը և կեցվածքն ու քաղաքականությունը, եթե այն կարելի է քաղաքականություն անվանել:

Այս և նման դատողություններն, այնուամենայնիվ, աշխարհիկ տրամաբանությամբ են, բայց կա և հավատքի հոգևո՛ր, երկնայի՛ն տրամաբանություն՝ բացարձակ ճիշտ, էական և... հավերժական նշանակությամբ:

Երկրային իմաստով Հայաստան աշխարհում Հիսուս Քրիստոսի հավատքն ընդունվել ու Նրա եկեղեցին հիմնադրվել է պետականորեն և պետականության բովանդակություն ունի: Իսկ երկնային իմաստով, ի լրումն երկրայինի, Հայաստանյայց եկեղեցու հավատամքը Հայոց պետականության գոյության իմաստի էությունն է: Եվ այդ էությունից բխում է Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ)՝ որպես ազգի պետական, անհատական ու հավաքական կյանքի կողմնորոշման ու կենսաձևի փարոս, սահմանադրության հիմք և բոլոր բնագավառների քաղաքականության սկզբունք: Ու այդ առումով՝ ***Հայոց պետությունում ՀԱԳ-ը քրիստոնեական հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է:***

Հակիրճ սա նշանակում է, որ հայ ազգը, Հայաստան եր-

կիրն ու հայոց պետականությունը 17-դարյա սրբագործված ուխտով կոչված են նախ և առաջ ու ամեն բանից վեր լինել Աստվածասե՛ր և Քրիստոսադավա՛ն ազգ, երկիր, պետություն ու հասարակություն՝ ապրող ու գործող ըստ այդ հատկությունների:

Հայոց պետականության ամեն մի իշխանություն, որը չի ընդունում, չի խոստովանում և իր ամբողջ կարողությամբ ու զորությամբ չի ջանում Ազգի ու Երկրի կյանքի ապրում դարձնել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո դավանանքը, ամուլ ու անկենսունակ է հոգևոր չափանիշով և ապօրինի՛ է թե՛ երկնային օրենքով և թե՛ երկրային: Մ՛յս է հայի հաստատ հետևությունը, եթե չի ուրանում 1700-ամյա հայոց պետականության հավատքի Ուխտը:

Խի՞ստ է հնչում: Իսկ ո՞վ է ասել, որ իրականությունն ու ճշմարիտը թույլ ու մեղմ արտահայտություն է ենթադրում:

Անսովո՞ր է հնչում, տարօրինա՞կ: Իհարկե: Եվ դա հասկանալի է (թեև շատ ցավալի), երբ այսքան երկար ժամանակաընթացքում տարբեր կողմերից և տարբեր ձևերով ու միջոցներով քրիստոսամերժ հավատազրկության և նյութապաշտական գաղափարազրկության բալաստը լղոզվել, ծեփվել, կոշտացել է մեր հավատքի և հոգևոր կյանքի ընկալման ու արտահայտման զգայարանների և գիտակցության վրա:

Բայց տվյալ դեպքում հարցն իրականության խիստ կամ անսովոր հնչելը չէ, այլ ըմբռնելը, զգաստանալը և այն հաստատելն է՝ ամենօրյա ապրումով, որը կարող ենք անպայման անել Աստուծո գթառատ շնորհով՝ ներումով ու օգնությամբ:

19 - 03 - 2011թ. Մոսկվա

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ Է ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՐՎԻ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին բաժանված, անջատված է պետությունից: Եվ հարկ է, որ ազգի ու երկրի մարդիկ և պատկան մարմինները պատասխաններ ունենան գոնե հետևյալ հարցերին.

- Հայաստանում երբվանի՞ց և ինչո՞ւ է այդ բաժանումը:

- Ի՞նչ է նշանակում, ինչպե՞ս հասկանալ այդ բաժանումը:

- Ովքե՞ր և ո՞ր կառույցներն են առաջարկել և կամ կիրառել այն:

- Այդ բաժանում-անջատումը հայության ո՞ր տոկոսի համաձայնությամբ է եղել ու այժմ է:

- Ի՞նչ հետևանքներ է ունեցել այդ բաժանում-անջատումը այլ երկրներում, Հայաստանի Հանրապետությունում և ըստ երևույթին դեռ ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ:

- Եթե չբաժանվեր հայոց եկեղեցին հայ պետությունից, վա՞տ հետևանքներ կլինեին, թե՞ լավ: Օրինակ՝ ինչպիսի՞:

- Հայոց եկեղեցու անջատվածությունը Հայոց պետությունից արդյո՞ք նշանակում է, որ այն անջատված է նաև հայ հասարակությունից, ժողովրդից: Եթե ոչ, ապա ըստ իր կոչումի հոգևոր ու աշխարհիկ ի՞նչ գործառույթներ կատարելու իրավունք և պարտականություն ունի եկեղեցին հայ ազգի ու Աստուծո առաջ: Օրինակ՝ եթե Հայաստանի որևէ հայ կամ ոչ հայ քաղաքացի դիմի Հայաստանյայց եկեղեցուն իր քաղաքացիական իրավունքները կամ արժանապատվությունը պաշտպանելու համար, եկեղեցին ի՞նչ է անելու, ձգտելու է պաշտպանե՞լ նրան, թե՞ անտարբերությամբ մերժելու է նրա դիմումը ասելով. «Դա մեր բնագավառը չէ, մեր գործը չէ»:

- Կամ եթե հայ հասարակության մեջ ի հայտ են գալիս հակաօրինական և կամ բարոյազուրկ երևույթներ, եկեղեցին ի՞նչ է պարտավոր անել, ակտիվորեն միջամտել, գործակցել, օգնել վերացնելո՞ւ հակաօրինականն ու անբարոյականը ժողովրդի կյանքից, թե՞ անտարբերությամբ այն թաքցնել լոկ ծիսակատարումներով:

- Եվ վերջապես, հայ իրականության մեջ՝ Հայաստանի Հանրապետությունում ու նաև արտերկրի մեր գաղութներում տարածվող ու ամրապնդվող նյութապաշտության, որով և տարբեր տեսքերով փաստացի հավատազրկության, բարոյազրկության, կոռումպացվածության, դասալքության և մասամբ նորին ախտերի համար եկեղեցին պատասխանատվություն պիտի կրի՞, ու նաև դրանց վերացման և ազգի հոգեբարոյական առողջացման համար իր ծրագիրն ու գործունեության հաշվետվությունը հայ ազգին, հասարակությանը պիտի ներկայացնի՞, թե՞ ոչ: Եթե ո՛չ, ինչո՞ւ: Եվ եթե այո՛, ո՞ւր է... Թե չէ ինչի՞ մասին ենք խոսում և «ընկել ենք սար ու ձոր» ի՞նչ գտնելու, երբ խնդիրը մե՛ր մեջ է, մեր հոգեկանի, գաղափարականի, բարոյականի ու ըստ այնմ՝ պատասխանատվության, խղճի ու պարտաճանաչության մեջ է:

Մի՞թե չպետք է մեր աչքերը բանանք, մեր առողջացա՛ծ հոգու աչքերը բանանք, տեսնենք, մաքրվենք, սրբվենք, դրանո՛վ վերազնվանանք, վերաբարոյականանանք, վերաքաջանանք և սկսենք կառուցել մեր ազգային գոյության Աստվածահաճո տունը...

Վերոնշյալ և դրանց նման հարցերն աղերս ունեն անհապաղ պատասխանների: Ո՞վ, ովքե՞ր և մեր ո՞ր հաստատություններն են պարտավոր ու ի վիճակի պատասխանել:

Կիրակի, 15 - 11 - 2015թ., ժամը 01:05

ԹՈՂ ՆԵՐՎԻ ԱՍԵԼ
(Ազգի սիրելի ղեկավարություն ու մասնավորապես հոգևոր իշխանություն)

Խաբկանքով և մասամբ պարտադրանքով մեզ բռնատրված այն օտարածին կեղծ, խարդախ ու քայքայիչ «դեղահատը», թե ժողովրդավարությունը պահանջում, պայման է դնում, որ պետությունն ու եկեղեցին անջատ լինեն, իրականում պահանջում և մեզ պայման է դնում լինել պետություն (իշխանություն) ու հասարակություն՝ առանց Աստուծո խոսքի, առանց Նրա պատգամների, ու արդյունքում՝ առանց Նրա հավատքից բխող հոգեկանության, հետևապես և առանց սրբության ու Նրա շնորհի: Եվ դրա հետևանքը՝ մնալ առանց այն ամենի, որ կյանք է տալիս և պաշտպանում է փորձություններից, փորձանքներից, դավերից ու կորստից:

Այդ «դեղահատից» բավականին կուլ են տվել մեր մեծ մասամբ աշխարհատարած, ազգայնորեն անղեկ, պետական կառավարումից զուրկ ժողովուրդն ու նաև մեծ փորձությունների մեջ ընկած հայրենիքը: Բայց մի՞թե նաև կամավորապես ընդունել են, որ 17-դարյա Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ու Ավետարանով և Խաչով Աստուծո հավատքը նույնպես պիտի անջատ լինեն հայ պետությունից, որով և նրա հպատակներից, հայ ժողովրդից:

Իսկ եթե ո՛չ, այդպես չպե՛տք է լինի, ու նաև անհեթեթություն է նույնիսկ այդպիսի հարցադրումն ու դրա մասին մտածելը, էլ չասած ընդունելը, որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին պե՛տք է կամ կարո՛ղ է անջատ լինել հայ ժողովրդից, հայ հասարակությունից, հետևապես և նրա պետությունից, քանի որ Հայոց պետությունը ժողովրդինն է, ապա ***այդ***

անջատ չլինելը պետք է փաստվի ու ապացուցվի համապատասխան գործնական միասնությամբ: Չէ՞ որ մեր այս ժողովրդավարության պայմաններում, երբ պետությունն ու իշխանությունը ժողովրդինն են, ապա ժողովրդի և նրա իշխանության՝ պետության հետ եկեղեցու թույլ ու անկենսունակ այս կապը, որ գոյություն ունի՝ ***իր տխուր, ցավալի և վնասաբեր հետևանքներով,*** պե՛տք է (հարկ եղած բոլոր միջոցներով) անհապաղ փոխվի, առողջանա, լավանա: Դա պետք է արվի անկախ ամեն ինչից, որովհետև ներկայիս այս չափի և մանավանդ այս որակի կապն անընդունելի և նույնիսկ զզվելի է, նախևառաջ մեր Արարիչ ու Ամենակալ Հո՛ր համար:

Այս երևույթը, այս հանգամանքը կարող է դեռ ուսումնասիրությունների, քննարկումների, ճշտումների խնդիր լինել: Սակայն ի՛նչ էլ լինի, հարկ է այդ ուղղությամբ գործել և ճիշտը, արդարն ու օգտակարը հաստատել:

Ու սկսենք այդ անել որպես հայ մարդիկ, որոնց մեջ դեռ խիղճ և գիտակցություն մնացել է, էլ չասած հավատքի և հոգու պարտքի մասին, ինչպիսին ունեին «Վասն հավատո և վասն հայրենյաց» ապրած, գործած և պայքարած մեր մեծերը, սրբերը, նահատակները: Ու այդ անենք նաև այն գիտակցությամբ, որ եթե մենք խոսքով, գործով և կյանքի ապրումով չհետևենք, չնմանվենք, ու նրանց արժանի ժառանգները չդառնա՛նք, ապա չե՛նք դառնա նաև արժանի նախորդներ մեր երեխաների, թոռների և հաջորդ սերունդների համար, այլ կլինենք ենթակա անարգ ու կորստաբեր հետևանքների:

Բայց մի բան այժմ իսկ շատ պարզ է ու հաստատ, որ պետք է ամրանա մեր հասկացողության մեջ. վերը նշվածը մենք ի վիճակի չե՛նք կատարել մեր այժմյան հոգեկան, գաղափարական և բարոյական վիճակով, պե՛տք է փոխվենք, վերականգնելով մեր մեջ հայ ազգային տոհմիկ որակը. խնդիր, որն անդրադարձել ենք առանձին:

28 - 02 - 2017թ.

ՎԱՐԴԱՆԱՆՔ
(Այն օրերին և այսօր)

Վարդանանց տոնը հայ ազգի՝ դարերից եկող և դեպի հավերժություն գնացող տոն է: Եվ դա այդպես է, որովհետև Վարդանանց տոնի առաջացումը հիմնված է Ավարայրի ճակատամարտի հիշողության վրա, որը կազմակերպվեց և մղվեց հայոց քրիստոնեական հավատքի ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված ազգային գաղափարի, բարոյական արժեհամակարգի և ըստ այնմ ապրելակերպի պահպանման Աստվածաշնորհի գիտակցությամբ: Հետևապես Վարդանանց տոնը երկնային տոն է մեր նախնյաց հոգիների համար, երկրային տոն է ամբողջ քրիստոնեության համար ու ազգային տոն է համայն հայության համար:

Եվ Վարդանանց պատերազմը, որ վասն հավատո և վասն հայրենյաց, այսինքն՝ վասն Հիսուսի և վասն ազգի էր, հայ ժողովրդի և մասնավորապես հայ զինվորականության հոգեկանության, գաղափարականության, բարոյականության մղումով՝ քաջությամբ ու ռազմական հմտությամբ հաղթանակեց՝ հայ ազգի ազատ խաչապաշտության համար:

Հայ ազգի երկարամյա պետականազրկության, հետևապես և հայոց ազգային պետակա՛ն զինված ուժերի բացակայության պայմաններում Վարդանանց ոգին և Ավարայրի խորհուրդն արտահայտող Վարդանանց տոնը կատարվում էր Վարդանանց հավատի նվիրվածության իրավահաջորդ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կողմից, որին հետևեցին հայ քրիստոնեական այլ հարանվանությունները և հատկապես Մխիթարյան միաբանությունը:

Իսկ Ավարայրի ճակատամարտում հայոց զորքի՛ անձնվեր

հերոսությամբ առաջացած Վարդանանց տոնի գաղափարական ու բարոյական իրավահաջորդը հայոց պետությունն է հանձին հայոց զինյալ ուժերի՝ Հայկական բանակի՛:

Հետևաբար այժմ՝ հայոց պետական 25-ամյա անկախությունից հետո, Հայոց բանակը համազորային ընդգրկմամբ և շուքով, Հայաստանյայց եկեղեցվո քրիստոնեափառ շնչով ու համայն քրիստոնյա զինվորականության («զինվորյալ մանկանց», որոնք կհասկանան և կարծագանքեն) ներկայացուցիչների մասնակցությամբ պետք է տոնի Վարդանանց տոնը: Եվ տոնակատարումն անի այնպես, որ դրա քրիստոնեափայլ ոգին ողողի Հայոց աշխարհը, ամբողջ քրիստոնյա աշխարհը, բոլոր հայերի ու մյուս քրիստոնյաների հոգիները, սրտերը, մտքերը, որով և նրանց արարքները՝ առ ի քրիստոնեական միասնություն և խաղաղություն՝ հավատավոր կյանքի լույսով:

Գուցե պետք է նկատի առնել տոնական միջոցառումների անցկացումը նաև Ավարայրի դաշտին մոտակա Արարատյան դաշտավայրի որոշակի մասում: Այդ դեպքում մեր լավ հարևան Իրանի Իսլամական Հանրապետությունը, լինելով ինքը հոգևոր, վստահաբար ըմբռնումով կմոտենա, որ տոնում ենք այնօրյա՝ կրակապաշտ Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի 30-ամյա պայքարում ոգու արիության, հավատքին հավատարմության ՀՈԳԵՎՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ: Եվ դա նաև համայն քրիստոնեության հաղթանակն է, որը, բացի անանցելիորեն ցնծալի լինելը, նաև ուսուցողական է բոլորի՛ համար, որովհետև օրինյա՛լ հաղթանակներից է ի վերուստ:

11 - 06 - 2005թ., ժամը 09:50

ԵՐԲ ՀԱՎԱՏՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱԶԳԱՅՆԱՑՎՈՒՄ ԵՆ

Հայության քրիստոնեական հավատքը կյանքի ապրում է դառնում Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ:

Ու այդ պարագայում հավատքը դառնում է (նաև) գործ, և ՀԱԳ-ը լինում է բնական (իմաստալից) ու հաստատուն ազգային արժեք, ուղենիշ և միաժամանակ լինում է առաջադիմորեն համամարդկային, երբ հայ ազգը, պետականությունը, հայրենիք Հայաստանը և պետությունը ՀԱԳ-ը կիրառում են որպես համամարդկային արժեքներով դրսևորվող քաղաքացիական կյանքի բոլոր բնագավառների քաղաքականություն ու ապրում:

Եվ այս դեպքում այդ քաղաքականությամբ ու ապրումով առաջացած հայության գոյավիճակով բարձրանում է ազգի և հասարակության, երկրի և պետության կենսունակությունը, որով և ամեն բացասականի դեմ, վարակամերժ կարողությունն ու ամեն դրականի համար՝ ուժը, զորությունն ու կարողությունը, հօգուտ նաև մարդկության գոյավիճակի զարգացման:

Հետևապես, ազգի ա՛յս քաղաքականությամբ ու ապրումով հօգուտ նաև մարդկության գոյավիճակի զարգացումը համապատասխանում է բոլոր ազգերի, երկրների և պետությունների ազգային շահերին, որոնք իրենց կենսունակությունն ու զարգացումը, պաշտպանությունն ու բարեկեցությունը փընտրում ու ակնկալում են գտնել հիմնականում իրենց սեփական ազգային աղբյուրներում (ռեսուրսներում):

Իսկ այն ազգերը, երկրները, պետությունները կամ որոշակի նպատակներով նրանց ստեղծած խմբավորումները, որոնք իրենց կենսունակության բարձրացման և իրենց բարեկեցության միջոցները, բացի իրենց ռեսուրսների օգտագործմամբ ապահովելը, հանիրավի փնտրում, ակնկալում և տարբեր ***կերպերով ջանում*** են գտնել ի վնաս այլ ազգերի, պետությունների կամ նրանց խմբավորումների ռեսուրսներում, նշանակում է՝ նաև աշխատում են չեզոքացնել, քայքայել ու վերափոխել կամ վերացնել այդ ազգերի ***հավատքի ազգային քաղաքացիականացումն ու քաղաքականացումը,*** այսինքն՝ ապազգայնացնել նրանց ազգային գաղափարախոսությունը: Ինչպես կարմիր կայսերապաշտությունն ազգերի ձուլման իր նպատակի իրականացման համար կիրառում էր մշակույթի «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» քաղաքականությունը, իսկ դրամատիրական կայսերապաշտությունը կիրառում է «ազգերի ձուլման կաթսայի» գործադրումը:

Եվ այդ նպատակի իրագործման առաջնային միջոցներից են.

- եկեղեցվո և պետության տարանջատումը,
- սեկուլյար կրթության, արվեստի ու մշակույթի ներմուծումն ու տարածումը,
- գլոբալացման ստվերոտ կողմերի ներդրման ջատագովումը, կիրառումը:

Այս առնչությամբ որոշ հարցեր.

ա. Այս երևույթներն ինչո՞ւ և ինչպե՞ս իբրև ժողովրդավարության սկզբունք ընդունվեցին, կիրառվում են ԱՄՆ-ում և նրա բազմաբնույթ ու բազմակողմանի միջոցներով տարածվում:

բ. Ինչո՞ւ արևմտյան ժողովրդավարական կոչվող բոլո՛ր երկրներում այդ երևույթները լիովին չեն ներթափանցել և լիովին չեն կիրառվում:

գ. Որտեղ որ ներթափանցել են ու լիովին կիրառվում են, ինչպիսի՞ն են դրանց հետևանքները:

Պատասխաններ.

ա. Թեև ԱՄՆ հասարակական-քաղաքական կառուց-

վածքն ըստ երևույթին պարարտ հող էր նման նպատակի իրագործման համար, սակայն ամերիկյան պետությունը, նրա գաղափարախոսությունը, սահմանադրությունը, օրենքները և ընդհանրապես սկզբունքներն ու կարգուկանոնն ստեղծողները պետության և եկեղեցվո տարանջատման հարց չեն դրել, առավել ևս չեն պնդել պարզապես այն պատճառով, որ նրանք այդպես չէին մտածում և չէին կարող մտածել՝ ելնելով իրենց կրոնական, գաղափարական, բարոյական, քաղաքական և քաղաքացիական համոզմունքներից:

Ամերիկայի «հիմնադիր հայրերի» քրիստոնեական համոզմունքներից և հատկապես բողոքականության սկզբունքներից բխող ժողովրդավարական մտայնությունը, որով ձևավորվեցին ԱՄՆ սահմանադրությունը և դրանից բխող օրենքները, միտված էր ընդունել պետության մեջ միաստվածադավան կրոնական հարանվանությունների (denominations) հավասարությունը, այլ ո՛չ կրոնական մեկ հարանվանության մենաշնորհն ու գերակայությունը: Սակայն ԱՄՆ պատմական զարգացումը, ըստ երևույթին, այնպես ուղղորդվեց, ուղղվեց, որ այսօրվա վիճակը գոյացավ…:

Եվ հաջորդ ժամանակաշրջանում արևմտյան երկրներում թեև ամերիկյան մոդելը պատճենվեց, սակայն դա բոլոր երկրներում միանշանակ ու լիովին չընդունվեց: Օրինակ, Հունաստանի սահմանադրությունը երկրի ուղղափառությունը ճանաչում է որպես պետական կրոն (երկրում գործող մյուս կրոնները ևս պետության կողմից ճանաչելով հանդերձ), իսկ Հույն ուղղափառ եկեղեցվո տասը հազար կղերականները ռոճիկ են ստանում պետության կողմից:

Եվ մեծ հարց. հայ ազգն ու Հայաստանը ո՞ւմ են լսելու..., ո՞ւր են նայելու և որևէ մոդելի՞ են հետևելու, թե՞ Հայոց նորանկախ պետության և Հայոց բազմադարյան հոգևոր կառույց՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո հարաբերությունները (կապը, փոխգործունեությունը, փոխլրացումը) պահպանելու և շարունակելու են ըստ մեր մեծ, սուրբ նախնիների՝ «մոդելի», որը ստեղծվել ու գործել է Հայոց պետականության

ու պետության քրիստոնեացման Աստվածապատգամ ՈՒԽՏՈՎ, որը միացնող է, այլ ոչ՝ անջատող:

Ակնհայտ է, որ մեր հավատը և ազգային գաղափարն ու նկարագիրը թելադրում են, որ հայության Աստվածապարգև գերագույն հատկությունը, այն է՝ Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքի հանդեպ հավե՛րժ հավատարմությունը, պետք է անսասան պահենք: Ու ա՛յդ անսասանության վրա հիմնված էլ պետք է շարունակվեն Հայ պետական ու եկեղեցական ***ազգային ուրույն միությունը***, ***գործակցությունը և փոխլրացումը***՝ ի վերելք մեր անձերի, մեր ազգի ու հայրենիքի, հօգուտ նաև մարդկության ու ի փառս Սուրբ Երրորդության՝ ԱՍՏՈՒԾՈ:

Իսկ թե ինչպիսին է այդ ***ուրույն միությունը*** հարցով հարկ է զբաղվել հավատքով, ըստ այնմ ոգով ու լրջությամբ:

10 - 12 - 2002թ., ժամը 05:20
Վաշինգտոն ԿՇ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ-ՕՐԵՆՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Օրենքի՛ իշխանություն, այլ ո՛չ թե ուժի իշխանություն: Ուժը պետք է ենթարկվի, ծառայի օրենքին, այլ ոչ թե օրենքը ենթարկվի, ծառայի ուժին:

Ո՞ր դեպքում ուժը կենթարկվի, կծառայի օրենքին. բնականաբար՝ ժողովրդավարության **պարագայում**: Իսկ ժողովրդավարության նախապայմանը ո՞րն է. Ազատությունը: Հետևապես՝ առանց ազատության չկա ժողովրդավարություն, և առանց ժողովրդավարության չկա օրենքի իշխանություն և չկա նաև զարգացում, առաջադիմություն, վերելք ու բարգավաճում:

Բայց ո՞ր օրենքի իշխանությունն է, որ ի զորու է ապահովել զարգացում, առաջադիմություն և վերելք՝ մարդու, ազգի,

երկրի և պետության համար՝ կայունորեն, հարատևորեն և համընդհանուր կարգով, այսինքն՝ բոլորի համար ըստ արժանվույն, այսինքն՝ արդար: Ո՞ր օրենքն է դա: Ո՞ւմ կողմից կազմված: Եվ ո՞ւմ կողմից կիրառվող: Ո՞ւմ առաջ պատասխանատվությամբ:

Պատասխան. Աստուծո հավատքո՛վ ստեղծված օրենքը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի հիմքի վրա, կիրառվող հավատավորների կողմից, Անմահ հոգու հավիտենական պատասխանատվությամբ՝ երկնային իշխանության առաջ...

Պատմության ընթացքում, երբ օրենքը և դրա իշխանության կիրառումն ու պատասխանատվությունն անկախ ո՛րևէ պատճառից չե՛ն համապատասխանել վերոնշյալ օրինաչափությանը, եղել է նեղություն, հետընթաց և նույնիսկ անկում ու անվերականգնելի կորուստ:

Ով որ ազատությունը ճնշում է կամ երբևէ կճնշի իբրև թե օրենքը հաստատելու, զորացնելու համար, կա՛մ կեղծ է, կա՛մ միամիտ:

Եվ ով որ ազատությունը չի՛ տեսնում, և դրան չի՛ ձգտում Աստուծով՝ հոգեպես կույր է ու անզգա:

Եվ հայությանն ու Հայաստանի հասարակությանը այդպիսի փորձություններից ու փորձանքներից զերծ պահելը Հայոց հարազա՛տ պետության ու հարազա՛տ Հայրապետության՝ անհրաժեշտ համախոհությամբ սիրտ-սրտի, միտք-մտքի և ձեռք-ձեռքի գործակցությամբ է լինում:

Կեցցե՛ հայությունը և նրա եկեղեցվո ու պետության՝ հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների՝ ազգային Աստվածահաճո կառուցողական ու հարատև միությունը:

11 - 10 - 2003թ., կեսգիշեր, Մոսկվա

ՊԵՏԱԿԱՆԱԿԻՐ ԱԶԳ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Պետք է մտածել, անդրադառնալ և բնորոշել, թե ինչ է նշանակում հայոց պետականություն ունենալուց բացի պետականակիր ազգ դառնալը ու նաև հայոց պետություն ունենալուց բացի ազգային-պետական կյանքով ապրելը:

Պետականության և պետության հետ հայությունը եթե պետականակիր ազգ չդառնա ու ազգային-պետական մտածելակերպով ու, ըստ այնմ, վերաբերվելով և գործելով չապրի, ապա պետականությունն ու պետությունը կլինեն թերի, անկայուն, տկար ու ենթակա խախտման...

Հայոց պետականությունն ու պետությունը որպեսզի լիարժե՛ք կայանան, ամրապնդվեն և կենսունակ, ապահով ու բարգավաճ դառնան, անհրաժեշտ պայման է, որ հայությունը հավատքով գիտակցի և պահի ու պահպանի ազգի պատիվը, ազնվությունը, գաղափարականությունը, բարոյականությունն ու ամենաէականը, որպես այդ բոլորի նախապայման՝ հավատքի հավատարմությունը որպես հոգու պարտքի կատարում:

Այս պարտքի կատարումը, դարձած ուսմո՛ւնք, և դրա համաձայն՝ կրթությունը, մշակույթը, արվեստը և հասարակական քաղաքացիական հարաբերությունները, կենսակերպն ու ապրելակերպը պետք է տիրե՛ն մեր ազգային կյանքում, որպեսզի դառնան պետակա՛ն կյանք՝ ազատ, անկախ, ապահով, բարգավաճ, արժանապատիվ ու Աստվածասե՛ր Հայաստանի:

Քրիստոնյա՛ հայությունը (հայրենիքում թե արտերկրում) և Քրիստոնյա՛ Հայաստանը (բոլոր պայմաններում) պետք է ունենան քրիստոնեական աշխարհայացք ու ամրագրեն իրենց

հոգում, սրտում և մտքում, որ առանց Սուրբ Երրորդության հավատքի մարդը վերջին հաշվով ստրուկ է մնում թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես և թե՛ հոգեպես, ի կորուստ ընդմիշտ: Իսկ Սուրբ Երրորդության հավատքով ստացվում է դրա հակառակը՝ փրկություն, վերելք և կյանք ընդմի՛շտ, հավիտյա՛նս:

Փա՞ռք այն Շնորհողին:

Երեքշաբթի, 05 - 09 - 2017թ., ժամը 04:10

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ ՕՐԻՆԱՉԱՓ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ

Մարդկության և հայ ազգի պատմության ուրույն ընթերցմամբ ու ընկալմամբ ակներև է դառնում, որ հայոց պետականությունն ու պետությունը չե՛ն կարող լինել կենսունակ, այն էլ՝ հարատև՝ առանց հայության՝ Աստուծո հանդեպ ճշմարիտ հավատքի՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով ու Խաչով:

Կա՛մ ըստ այնմ կապրենք, կգործենք, կընթանանք, կօգտվենք ու ապահովության մեջ կզարգանանք, կբարգավաճենք, կբարձրանանք կա՛մ էլ կանտեսենք ու կտուժենք՝ անապահովությամբ կհետադիմենք, կնահանջենք, գուցե և անդառնալիորեն...

Եվ սա Հայ ազգային հոգեբարոյագիտության, ազգային գաղափարախոսության և ազգային քաղաքագիտության այբուբենն է, հիմքը և դրանց սկիզբն ու վերջը:

* * *

Եվ մի խոնա՛րհ, շա՛տ խոնարհ խորհուրդ մեր իշխանավորներին, ղեկավարներին. ազգի ու հայրենիքի հիմնական հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունողներին. չվախենա՛լ, օտար, մարդկայնորեն մեր ազգին խորթ, մի կողմից երեսպաշտ, կեղծ ժպիտով, որպես «տեխնիկական օգնություն» տարբեր ձևերով, մեթոդներով տրվող հորդորներից՝ մնա՛լ աշխարհիկ, առանց հոգեղենության, իսկ մյուս կողմից՝ սպառնալից վճռականությամբ տրվող «խորհուրդներից»՝ փորձելով մեզ հավատացնել, որ եթե այդ «խորհուրդներին» չհետևենք, դրանք չկատարենք, «դա՛ռնապես կզղջանք»:

Չվախենա՛նք այդ սպառնալիքներից, վախենալն իրապաշտություն չէ՛, այլ թերահավատություն:

Չէ՞ որ սուրբ Ավետարանն ասում է. «Հսկեցե՛ք, քա՛ջ եղեք, զորացե՛ք, ձեր ամեն ինչը թող սիրով լինի»: Իսկ զորավար Սուրբ Վարդան Մամիկոնյանն էլ Ավարայրի՝ հավատքին հավատարմության համար մղվող ճակատամարտից առաջ Սուրբ Հոգով համակված իր սրբաբաղձ զորքին ասաց. ***«Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»:***

Ամբողջ հոգով մի՛շտ շնորհակալ լինենք այս ասվածներին. մենք ա՛յս ձայները պիտի լսենք ու դրա՛նց հետևենք այսօր, վաղը և ընդմի՛շտ:

08 - 08 - 2017թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒԾՈ ԱՌԱՋ

Աստուծո առաջ պատասխանատվությո՛ւն:

Խնդիր՝ պարզ, սակայն էական. գուցե նաև խորթ այսօրյա մարդկությանը, նաև հայ իրականությանը: Եվ ամենացավալին՝ ըստ երևույթին դա պատշաճորեն չի ընկալվում հայ ղեկավարությա՛ն կողմից, թե արդյոք նա ի՞նչ չափով և ընդհանրապես զգո՞ւմ է *պատասխանատվություն Աստուծո առաջ:*

Ի՞նչ են նշանակում այս հարցադրումները հայի, հայության, հայրենիք Հայաստանի և պետականության ու պետության համար:

Ի՞նչ կնշանակի այդ հարցերի պատասխանների բացակայությունը կամ ուշացումը...

Դրանք միայն կրոնական հարցեր են և կապ չունե՞ն պետության ղեկավարության հետ ու նաև քաղաքական շրջանակների և հասարակության մեծ մասի հետ:

Սխա՜լ, շա՜տ սխալ է այդպես մտածելը, այդպես կարծելը, որովհետև այդ հարցերը կապ ունեն մեր կյանքի ամե՛ն ինչի հետ, և նույնիսկ մեր ազգային գոյությա՛ն հետ. կա՛պ ունեն մեր հայրենիքի և պետականությա՛ն գոյության հետ, նաև կա՛պ ունեն յուրաքանչյուր հայի՛ հետ՝ անկախ տարիքից, սեռից, սոցիալական վիճակից, նրա ապրելավայրից և քաղաքացիությունից: Բավ է, որ նա իրեն հայ զգա ու հայ համարի գիտակցությամբ, խղճով ու հավատքով:

Պետք է խոսե՛լ այս մասին: Համազգային լուրջ ու հետևողական խոսակցություն է պետք:

14 - 10 - 2001թ., ժամը 00:35
Վաշինգտոն ԿՇ

ՆՄԱՆ Է, ԲԱՅՑ ՆՈՒՅՆԸ ՉԷ

Հայ ազգի՞ն ծառայել՝ ծառայելով Աստծուն, թե՞ Աստծո՛ւն ծառայել՝ ծառայելով հայ ազգին, որը նաև ծառայություն է մարդկությանը:

Եթե հայ ազգին ծառայելու համար ծառայենք Աստծուն՝ կապվելով մեր եկեղեցուն, ընդունելով նրա դավանանքը և դառնալով հայ հավատացյալ, ապա Աստծուն ծառայության հիմքը թուլանում և դառնում է պատեհական, ժամանակավոր, հետևապես և հայ ազգին ծառայությունը՝ նույնպես...

Իսկ եթե Աստծո՛ւն ծառայելու համար ծառայենք ազգին՝ Աստուծո հավատքով կապվելով մեր եկեղեցուն և ըստ այնմ ապրելով, ապա հայ ազգին մեր ծառայությունը դրվում է վեմի վրա, դառնում է հաստատուն, տևական, ընդմիշտ, որովհետև Աստված հավիտենական է, և մեր ազգին ծառայությունը դրվում է հավիտենակա՛ն խրախուսանքի և հատուցման վրա:

Այս ըմբռնումից էլ բխում է ***մեր նշանաբանը. «ծառայում ենք Աստծուն՝ ծառայելով հայ ազգին, հայությանը, որպեսզի հայությունն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում»:***

Եվ սա թելադրանք է հայ ազգի ծագմամբ՝ Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ), որը սրբագործվեց 301 թվականին և բխում ու հիմնված է Աստվածաշնորհի Քրիստոնեական Հավատքի վրա, պետականորե՛ն ընդունված ու դավանված հայության կողմից: Ու երբ այդ հավատքո՛վ պետական գիտակցությամբ և պետական պատասխանատվության զգացումով հայոց իշխանությունը, ղեկավարությունը ծառայում էր Աստ-

ծուն՝ ծառայելով ազգին, ազգն ու պետությունը իմաստնանում, զորանում բոլոր բնագավառներում առաջադիմում և ծաղկում էին: Եվ, հակառակը, երբ ազգի ու պետության բարօրության համար, որպես օգտակար գործո՛ն համարվելով էր պահպանվում հավատքը, և աջակցությո՛ւն ցուցաբերվում եկեղեցուն, ինչ-որ օգուտ դարձյալ ստացվում էր, բայց կարճատև ու կենսազուրկ...

Հիմա՞: Հայ աշխարհիկ ու հոգևոր ղեկավարությունների կողմից դա նկատի առնվո՞ւմ է: Եթե ոչ, ապա գոնե ջանքեր գործադրվո՞ւմ են դա գիտակցելու և հայությանն ու յուրաքանչյուր հային հասցնելու համար: Բայց դա ավելի՛ն է, քան ազգային-պետական առաջնային խնդիր լինելը, դա լինելությա՛ն խնդիր է: Դրա գիտակցումը պետք է մեր ամբողջ ազգի և յուրաքանչյուրի համար չափանիշ դառնա՝ ակնկալելու, պահանջելու և գնահատելու իր և մասնավորապես հայ ղեկավարության ծառայությունը: Որը, որպեսզի պտղաբերի, պետք է ***ծառայի Աստծուն՝ ծառայելով ազգին, Հայաստանին, հայոց պետությանը, որպեսզի ազգը, հայրենիքն ու պետությունը ևս ծառայեն Աստծուն, ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն միշտ, ամենուր, ամեն ինչում, Աստվածասիրությա՛մբ:***

Սրա՛ արդյունք մարդասիրությունն ուղղված մեկի կողմից բոլորին և բոլորի կողմից մեկին, կլինի օգտաշատ, կենարար ու ազատագրող՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Եվ ա՛յս հավատքով, ա՛յս նպատակով ու ա՛յս սկզբունքով կառավարվող մեր ազգի ու երկրի պետական կարգավիճակը կհամապատասխանի 301 թվականին Աստվածաշնորհ հավատքով սահմանված Ուխտին, որ հաստատվեց ամեն տեսանելիի ու անտեսանելիի՝ Արարչի ու հավերժական Տիրոջ՝ Աստվածորդու և հայ ազգի ու նրա պետության միջև:

Ու եթե որևէ երկրի, միջազգային միության և նույնիսկ մասնավոր ձեռնարկության հետ մեր կնքած պայմանագրի համաձայն՝ փոփոխություններ ենք մտցնում մեր սահմանադրության ու օրենքների մեջ և դա օգտակար անհրաժեշտություն

ենք համարում, ապա ոչ միայն օգտակարության, այլև մեր գոյությա՛ն իսկ պայմանից ենք զրկում մեզ, եթե մեր սահմանադրության և օրենքների ոգին ու տառը և դրանց կատարումը չենք համապատասխանեցնում 1700-ամյա մեր Սուրբ Ուխտին Աստվածորդո՛ւ հետ...

Եթե մեր պետական-քաղաքական միտքը համոզված է, որ «խաղ չկա» այս աշխարհի այս կամ այն հզորի հետ, ապա ինչու չի հավատում, որ (մեղա՜ համեմատության համար) առավե՛լ ևս բացարձակապե՛ս «խաղ չկա» Տիեզերքի Արարիչ Հավիտյա՛ն Հզորի հետ...

Իսկ այն ասողներին, թե սա քաղաքական գիտություն չէ, կասենք՝ սա իսկակա՛ն ու գե՛ղքաղաքակա՛ն գիտություն է, ինչն ում հասու չի եղել դարերի ընթացքում, նա գտնվել է պատմության լուսանցքում և մինչև իսկ՝ կյանքից դուրս: Իսկ երբ հայոց բազմադարյան հավատքով պետական իմաստությունի՛ց ու ազգային հոգեբարոյագիտությունի՛ց բխող առավե՛լ արդիական գերքաղաքագիտությունը ***պատրաստ ու արժանի լինենք ընկալել ու կիրառել,*** այնժամ անսահման կարողություն, ուժ, զորություն ու փայլուն հաղթանակներ կունենանք բոլոր ասպարեզներում, միշտ, ամենուր, ամեն ինչում՝ Աստուծո օգնությամբ:

Եթե մեզ ազգային կենսատու ծրագիր ու քաղաքականություն է պետք, եթե ազգային սեր ու միություն է պետք, եթե մեզ հզոր դաշնակից ու աջակից է պետք, եթե զորություն, հարստություն, բարեկեցություն,երջանկություն, փառք և ուրիշ ինչ-որ լավ բան կա՝ պետք լինի, ապա դա մեր ***Սուրբ հավատքին և Ուխտին հավատարմությամբ՝ այդ Սուրբ կարգավիճակին արժանանալով և ըստ այդմ, ազնիվ և պատվարժանորեն ապրելով ու գործելով կարող է լինել:***

Կիրակի, 16 - 08 - 1998թ., Վաշինգտոն ԿՇ

ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ՁԱՐԿԵՐԱԿԻ ՁԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Ազգի ու Հայրենիքի խնդիրները ճիշտ հասկանալու, ըմբռնելու, ճիշտ գնահատելու և ըստ այնմ լուծումներ գտնելու համար անհրաժեշտ է վերլուծել ու հասկանալ հայության մեջ և Հայաստանում գոյություն ունեցող հոգևոր, գաղափարական, բարոյական և դրանցից բխող սոցիալական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային և հասարակական հարաբերությունների վիճակը: Գնահատել դրանց ճիշտն ու սխալը, դրականն ու բացասականը, օգուտն ու վնասը, առաջացման պատճառները, պայմանները և քրիստոնեական հավատքի հիման վրա առաջարկել լուծումներ:

Աստուծո հավատքը, Քրիստոսի Ավետարանի գիտությամբ ու Խաչի խորհրդով ապրված մեր նախնիների կյանքը, նրանց՝ մեզ ժառանգություն թողած վարքն ու խոսքը հզորագույն և միակ միջոցը, միակ ուժն ու իմաստությունն են, որ կարող են մեզ պարզել, հասկացնել, ուղի նշել՝ լուծելու մեր բոլոր խնդիրները, և միաժամանակ ճիշտ ու արագ բուժել մեր ազգային, հասարակական ու անհատական ախտերը:

Աստուծո հավատքը՝ Քրիստոսի Ավետարանով և Խաչով, դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը և մեր նախնյաց վարքն ու խոսքը պետք է դառնան հայ հասարակության, հայ մարդու, որտեղ էլ գտնվի, և մանավանդ նոր սերնդի ուսման, կրթության, դաստիարակության, աշխարհայացքի, բարոյական արժեքների չափանիշների և կյանքի տարբեր բնագավառներում կողմնորոշման ու վերաբերմունքի հիմքը: Դրանք պետք է դառնան հիմքն ու նաև փարոսը, մանավանդ հայ հոգևորականի, ղեկավար, պատասխանատու աշխատողի և մտավորականի: Այս խավերի էության,

կարողության և գործունեության գնահատման չափանիշը պետք է դառնա նրանց կյանքում այդ հիմքի և կողմնորոշման հարատև առկայությունը և գործնական կիրառությունը:

Ո՞վ, ովքե՞ր պետք է սկսեն, ե՞րբ պիտի սկսեն այդ հիմքի վերականգնման և դրա վրա հայ կյանքի ապրումի վերակերտման գործընթացի կազմակերպումն ու կառավարումը: Նպատակ ու խնդիր, որի կատարման առաջին և մեծագույն պատասխանատուն, ըստ կոչումի և պատմականորեն, էջմիածինն է, և նրա հետ մեկտեղ հաջորդ մեծագույն պատասխանատուն հայոց պետականությունն ու պետությունն է՝ ներառելով ազգի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների համայն պաշտոնեությունը՝ Հանրապետության և Հայրապետության առաջնորդների գլխավորությամբ:

Նույնպես հատուկ պատասխանատվություն են կրում ազգային ակադեմիական-գիտական համակարգի ներկայացուցիչները, բուհերի ղեկավարներն ու դասախոսները, գրողները, ուսուցիչները, մշակույթի բոլոր գործիչները, լրագրողներն ու ամբողջ մտավորականությունը, ինչպես և կուսակցական ու հասարակական գործիչները:

Պատասխանատվություն՝ ազգի, մարդկության ու Աստուծո առջև:

* * *

- Այսօր Հայաստանի Հանրապետությունում, ըստ երևույթին, շատ ավելի դեղորայք է գործածվում, քան երբևէ, բայց արդյո՞ք ավելի առողջ ենք:
- Հայությունը երբե՛ք այսքան ուսյալներ չի ունեցել, բայց արդյո՞ք ավելի իմաստնացած ենք:
- Եվ հայության մեջ երբե՛ք այսքան հարուստ չի եղել, բայց ազգն ու հայրենիքն ինչո՞ւ են այսքան կարիքավոր...

Հուսո արևը չպե՛տք է թողնել, որ մարի, որպեսզի հայ կյանքը չխավարի: Հարատև՛ պետք է լինի հույսը՝ Աստուծո հա-

վատքով, Քրիստոսաշնորհ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, ըստ այնմ՝ բարոյական կյանքով, դրանցից առաջացած նախնյաց վարքով և մեր երեխաների ու թոռների ապագայի հեռանկարով:

23 - 04 - 2006թ., ժամը 00:20

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կրոնապետությունը լավ է, քանի որ հոգևոր դասի իշխանությամբ է, բայց նաև վտանգավոր է նրանով, որ եթե այն՝ իր կոչումին հավատարմությամբ՝ ու ժողովրդական ընտրություններո՛վ չի հիմնվելու և ըստ այնմ գործելու, այն կվերածվի կղերական ամբողջատիրության, հավանաբար նաև բռնատիրության իր բոլոր ավելի՛ վատ հետևանքներով, քան աշխարհիկ ամբողջատիրությունը կամ բռնապետությունը: Հետևապես՝ հայ կյանքի, Հայաստանի համար լավագույն վարչաձևը ***Գաղափարապետությունն*** է՝ պետություն, այն հայ ազգային գաղափարով, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա: Հավա՛տք, որը հայ ազգը ճանաչում է Հիսուս Քրիստոսի Ավետարանի շնորհով, իմաստությամբ, գիտությամբ և Խաչի խորհրդով՝ Հիսուսի Աստվածության ճանաչմամբ...

Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որ հայ ազգի քրիստոնեական հավատքի քաղաքացիականացումը և քաղաքականացումն է, պետք է դառնա հայոց պետականության և պետության գոյության հիմքը՝ թելադրելով հայության ու Հայաստանի սահմանադրությունը, գրված և չգրված օրենքները, ներքին ու արտաքին քաղաքականությունը, միաժամանակ սնելով հայ ազգի ու Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և կենցաղավարության բովանդակությունը և ուղենշելով դրանց զարգացումը...

Իսկ դրա համար էականորեն կարևոր է Հայ ազգային կրիտիկական զանգվածի (ՀԱԿԶ), Աստուծո գթությամբ ու շնորհով գոյացումը՝ Հայոց Հոգևոր Զարթոնքով, որի պայմանն է հայի ու հայության սրտերի մաքրությունը և իրա՛վ դարձն առ Աստված՝ ամրապնդվելով քրիստոնեական հավատքի ու ըստ այնմ՝ մտածելակերպի, վերաբերմունքի ու արարքների մեջ:

* * *

Նախկին խորհրդային որոշ հանրապետություններում հոգևոր զարթոնքի հետևանքով հոգևոր և գաղափարական հենքի վրա, ըստ երևույթին, ձգտում կա ձևավորել ազգային կրիտիկական զանգված, թե՛ վերևից և թե՛ ներքևից, թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր վերնախավերից ու նաև հասարակության շրջանակներից:

Հայության մեջ և Հայաստանում կարո՞ղ է լինել նույնը (և ավելի՛ն): Ո՞ւմ կողմից, ո՞ր կողմից ու ինչպիսի՞ ջանքերով:

Հինգշաբթի, 07 - 12 - 2017թ., ժամը 23:10

ԻՆՉ ԿԳՐԵԻ, ԵԹԵ...

Կոզակները ժամանակին նամակ գրեցին թուրք սուլթանին:

Եթե այսօր ես լինեի համապատասխան դիրքում, նամակ կգրեի Եվրամիության ղեկավարությանը, որով և նրա անդամ երկրների ղեկավարներին՝ հետևյալ իմաստով (և մոտավոր բովանդակությամբ):

Ձանքեր եք թափել մեզ՝ հայերիս ու մեր Հայաստան երկիրը միացնելու (ասոցացնելու) ձեր միությանը (և միացրի՛ք), սակայն այդ միացման համար պայմանները դուք միակողմանի ներկայացրիք մեզ՝ առանց հարցնելու, և մենք էլ մեր կողմից առանց հայտնելու, թե մե՛նք ինչ պայմաններ ենք ներկայացնում ձե՛զ, որպեսզի ընդունենք ձեր առաջարկը՝ միանալու ձեզ: Նա՛և հանգամանորեն չխոսվեց, թե ընդհանրապես մեր ճնշող մեծամասնությունը տեղյա՞կ էր, թե ինչ է նշանակում ձեզ միանալը, ու եթե իսկականի՛ց տեղյակ լիներ, արդյոք կուզենա՞ր միանալ ձեզ: Ու եթե ոչ, ապա ինչո՞ւ:

Իմ նամակում (մանավանդ եթե այն լիներ ոչ միայն իմ, այլև իմ պատկանած ժողովրդի ու երկրի՝ հայության և Հայաստանի կողմից) ես նաև կասեի.

«Մենք ուզո՛ւմ ենք միանալ ձեզ, սակա՛յն պայմանով, որ մինչ այդ՝ դուք փոխվե՛ք: Եվ փոխվեք՝ ո՛չ թե նմանվելով մեզ, ինչպես դուք պայման եք դնում և տարբեր ձևերով պահանջում ու նաև բացահայտ ու թաքուն փորձում եք ստիպել կամ կաշառել մեզ, որ ձեզ նման դառնանք, այլ՝ նմանվեք ձեր ազգերի նախնիներին, ձեր պապերին ու տատերին և նրա՛նց պապերին ու տատերին. այսինքն՝ ձեր ազգերի տոհմիկ, հարազատ ու անաղարտ կերպարներին, որոնք, ի դեպ, նման ու համահունչ

են եղել մեզ: Այդ ժամանակ մենք անկաշկանդ հոժարությամբ կմիանայինք ձեզ, որովհետև նման կլինենք միմյանց: Բայց հիմա մենք նման չենք միմյանց: Դուք ա՛յլ եք (ո՛չ հարազատ՝ ձեզ ծնող նախնիներին), իսկ մենք այլ՝ տարբեր ենք (հարազատ՝ մե՛զ ծնող նախնիներին). և ձեզ հետ անհամատեղելի: Իսկ քանի որ անհամատեղելի՛ ենք, ապա ինչպե՞ս կարող ենք ձեզ միանալ, ձեր հետ միասնություն կազմել. ինչպե՞ս կարող է ջուրը կրակի հետ միասին լինել կամ անմեղությունը՝ մեղքի հետ:

Բայց ձեզ հետ միասնական լինելու գաղափարը ոչ միայն ընդունելի է մեզ՝ հայերիս և մեր հայրենիքի՝ Հայաստանի համար, այլև այն մեծապես արտահայտում է մեր վաղեմի ցանկությունը, վերաբերմունքը և ձգտումը, որով դեռ բազո՛ւմ դարեր առաջ մենք միացել ենք միմյանց՝ թեև կապի և հարաբերվելու միջոցները, պարզ է, թե ինչ վիճակում էին՝ համեմատած մեր այսօրվա ունեցածին:

Ինչո՞ւ էր այդպես: Որովհետև այն ժամանակ մենք նմա՛ն էինք միմյանց շատ բաներով և մանավանդ, բարոյակա՛ն արժեքներով: Ու բացի այդ՝ մենք նման էինք միմյանց ավելի՛ կարևորով՝ մեր հոգեկանությա՛մբ, որովհետև նման էինք հավատքո՛վ: Իսկ այժմ, երբ այդ նմանությունները խախտված են ձեր կողմից, մենք ինչպե՞ս կարող ենք անկաշկանդ հոժարությամբ միանալ ձեզ ու, ըստ ձեր պահանջի, դառնալ ձեզ նման՝ իր նախնիների հարազատությունն ուրացող, և խախտված արժեհամակարգով ու ապրելակերպով:

«Սիրելի ազգակա՛ն-գործընկերներ» դա չի՛ լինի:

Չի՛ լինի, նույնիսկ, երբ արդե՛ն իսկ դավադիր դեսանտով մտել եք մեր մեջ և ձեր մատները խրել եք մեր հոգեկերտվածքի մեջ՝ տարբեր կերպերով, մեթոդներով հոգեբարոյական կոռումպացմա՛ն եք ենթարկել մեզանից շատերին՝ այլասերելով ու հպատակեցնելով նրանց ձեզ՝ որպես հինգերորդ շարասյան գործակալներ:

Ի դեպ, մենք ժողովրդական խոսք ունենք. «Եթե գողը տնից չլինի, եզը երդիկից չեն հանի»: Այդպես էլ դուք՝ գողա-

վարի մեզ տանում եք երդիկից՝ նաև քաշելով, նաև կարթ անցկացնելով մեր քթին, բայ՛ց... Բայց միաժամանակ մեզ «ազնվության» դասեր եք տալիս ու այնքան մեծահոգի և մարդասեր եք ձևանում, որ մեր երեխաներին կյանքի կոչող դասագրքերն էլ պատրաստվում են ձեր խորհուրդներով, օրինակներով, հրահանգավորմամբ և ձեր ուրիշ ամեն ուզածով՝ բացահայտ ու թաքուն կաշառքներով:

Եվ ո՞վ «բարի» մարդիկ, ամեն ջանք ու հնար թափում եք, որ «բարեգործություն» անեք, նաև մեր տարեց ու դեռատի, կին ու տղամարդ «իրարու միս ուտող» մեր ընտանիքները «խաղաղեցնեք», իբր համերաշխ դարձնեք՝ այնտեղ եսակենտրոնություն, անվստահություն և խորթություն առաջացնելով:

Հետո էլ միասեռականությունը, հետո էլ միասեռական ամուսնությունը՝ «օրենքո՞վ, կարգ ու կանոնո՞վ», որ հետո էլ ընտանիքի հարազատ անդամներն սկսեն միմյանց հետ սեռական հարաբերություններ՞ ունենալ և...

Եվ միասեռական ուսուցիչների, բժիշկների, դատավորների և պետական պաշտոնյաների կողքին միասեռական եպիսկոպոսնե՞ր «օծենք»...

Էլ ի՞նչ մնաց. խավարի բոլոր գործերը սրանով կավարտե՞ք, թե՞ դեռ նաև «գաղտնի զենք» ունեք ոչ միայն այլասերելու, այլև նեխեցնելու ինքներդ ձեզ՝ մեզ էլ հետը:

Մե՛ղք եք, ափսո՛ս եք. եթե խիղճն ու ամոթը իսպառ կորել են գոնե ձեր պատվավոր, արի, արժանավայել բարի, պատվասեր հայրերին ու մայրերի՛ն հիշեք, գոնե նրանց հոգիների՛ց ամաչեք, կարգինացե՛ք, զգաստացե՛ք, հե՛տ կանգնեք և ձեր մատաղ սերնդին էլ հետ կանգնեցրեք ազգակորուստ, անձնակորուստ և հոգեկորուստ ճանապարհներից:

Հետ կանգնելու ձեր ցանկության մասին մեզ միայն մի ազդանշան տվեք, և մենք ձեզ օգնության կհասնե՛նք, կսփոփե՛նք ու կաջակցե՛նք, որ դառնաք՝ ձեր մեծ նախնյաց նման, որոնց անունները դեռ կրում եք, նրանց վաստակից շռայլորեն օգտվում եք, բայց նրանց ոգուն դավաճանում եք, նույնիսկ պայքարելո՛վ դրա դեմ...»:

Մենք ձեզ անկեղծորեն ցանկանում ենք հոգևոր ու բարոյական զգաստություն, զարթոնք, մաքրում և վերելք:

Միշտ ձեզ համար մտահոգ, ձեզ օգնելու պատրաստ, սիրով՝ ***ՀԱՅ ՄԱՐԴ***:

Երեքշաբթի, 26 - 12 - 2017թ.

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆ Է

Մեր հայ ազգի ղեկավարները կամ էլ պետությունը, երբ որևէ հայտարարություն են անում, հատկապես քաղաքական կողմնորոշման մասին, ու առավել ևս, երբ որևէ դաշնագիր-պայմանագիր են կնքում որևէ պետության հետ ու նաև վավերացնում են մեր ժողովրդի կյանքը կարգավորել փորձող ամենատարբեր համաձայնագրեր, որպես կանոն, նախօրոք մտածում, հաշվում են, թե այս կամ այն, մանավանդ դաշնակից պետությունը, կամ էլ զորե՛ղ, ազդեցի՛կ պետությունն ինչպե՞ս կանդրադառնա իրենց կատարածին, որպես ընդունելի՞, թե՞ ոչ:

Բոլոր դեպքերում ջանք է արվում լինել հաշվենկատ և հնարավորինս շատ հանգամանքներ հաշվի առնել պետական ձեռնարկումներում, հատկապես, երբ դրանք վերաբերում են արտաքին հարաբերություններին: Բայց եթե այդ անելը լա՛վ է, օգտակա՛ր է, ապա Հայաստանը, որն աշխարհում առաջին քրիստոնեացած պետությունն է, իր ձեռնարկումներում հաշվի առնո՞ւմ է նաև ***Արարիչ Հոր՝ Աստուծո՛ Թագավորության կարծիքն ու հնարավոր անդրադարձը:*** Ըստ երևույթին՝ ո՛չ: Այդ դեպքում ինչո՞ւ ոչ: Ո՞րն է բացատրությունն այդ ոչ-ի: Եվ հաշվի առնվո՞ւմ է, թե ինչպիսի հետևանքներով է հղի այդ ոչ-ը...

Պետք է ենթադրել, որ հայոց հոգևոր իշխանությունը հաշվի է առնում այդ (Աստված մի՛ արասցե, եթե հաշվի չի՛ առնում, որն արդեն այլ խոսակցության նյութ կլինի), այդ դեպքում

ինչո՞ւ չի հորդորում, խրատում, եթե պետք է, նաև պայքարելով պնդում, որ հայոց աշխարհիկ իշխանությունը ևս այդպես վարվի: Չէ՞ որ, եթե գիտես, որ որևէ ճիշտ, կարևոր, բարի բան անհիմն պատճառով չի կատարվում, և դու լռում ես, դու մեղսակի՛ց ես և մեղք ես գործում: Ո՞ւմ առաջ. Արարիչ Հոր՝ Աստուծո և քո ազգի, երկրի, պետականության, պետության ու նոր սերնդի առաջ:

Իսկ ինչպե՞ս մնալ այդպիսի մեղքի մեջ, որը տարածվում է ամբողջ ազգի վրա: Ո՞ւր մնաց մեր խելացի, գիտնական ու բազում այլ բարեմասնություններով ազգ լինելը... Այդ մասին լռե՞նք, «հիմի՞ էլ լռենք եղբայրք»:

Հարգո՛ւմ ենք, շա՛տ ենք հարգում բոլորին և հատկապե՛ս մեր հոգևոր ու աշխարհիկ իշխանություններին: Բայց պարզ չէ՞, որ նախևառաջ պետք է հարգենք, լսենք ու կատարենք մեր Արարիչ Հոր Երկնայի՛ն Իշխանության կամքը, պատգամածը, սովորեցրածը... թե՞ այլևս մեր այդ ամենահիմաստալի ու կենսական պարտավորությունը մոռացե՛լ ենք: Որը կարող է լինել մեր շատ վատ հատկություններով:

Մտածե՛նք այդ մասին: Գոնե՛ մտածենք: Չէ՞ որ դա կյանքի հարց է մեր բոլորի՛ համար: Հավերժակա՛ն կյանքի հարց:

06 - 11 - 2002թ., ժամը 08:00

ԱՆՑՅԱԼԸ ՊԱՀՊԱՆԵՆՔ ԱՊԱԳԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ

Մենք գիտենք, որ առանց անցյալի չկա ապագա, և պետք է իմանանք նաև, որ առանց ապագայի չկա անցյալ: Այսինքն, եթե մեր ապագան չկերտենք, կկորչի նաև մեր անցյալը: Իսկ առանց անցյալի մենք ոչ ոք ենք, զուրկ ապագայից: Բայց ունենալու համար ապագա՝ պետք է կերտե՛նք այն:

Իսկ թե ինչպիսի՞ն է լինելու այն, նրա արժեքը՝ պայմանավորված է մեր անցյալի ու նախնիների արժեքավորումով: Որքան գիտակ լինենք մեր անցյալին, այնքան վստահ կկերտենք մեր ապագան: Որքան հարգալիր լինենք մեր անցյալի նկատմամբ, այնքան հարգարժան կլինի մեր ապագան: Որքան հավատարիմ լինենք մեր անցյալին, այնքան հավատարմությամբ կկերտենք մեր ապագան: Եվ այն կվայելենք մենք և կվայելեն մեր որդիները, թոռներն ու սերունդները...

Բայց ամեն ինչ Աստուծո շնորհով ու Նրա օգնությամբ:

07 - 12 - 2002թ., ժամը 22:10

ԲԱՐՈՒ ԱՂԲՅՈՒՐԸ

Հարստությունը զորություն է, զորությունը՝ իշխանություն, իշխանությունը՝ կամքի (պարտադրում) կատարում:

ԱՄՆ-ում, ինչպես և այլ երկրներում, հարուստներ կան, որոնք շատ երկրների ունեցածից ավելի մեծ հարստություն ունեն: Նրանց այդ զորությունը փոխակերպվում է իշխանության, որը կատարում է իրենց կամքը...

Իսկ ի՞նչ է նրանց կամքը: Ինչպե՞ս է կազմավորվում, ձևավորվում և ուղղորդվում այն. ի՞նչ նպատակներ իրագործելու համար: Եվ որտեղի՞ց են բխում այդ նպատակները: Ի՞նչն է դրանց ծագման ու կատարման իմաստը...

Հարստություն-զորություն-իշխանությունը կարող է թե՛ բարի կամքի և նպատակի աղբյուր ունենալ և թե՛ չար: Ուրեմն ամբողջ ***խնդիրը*** կամքի և նպատակի ո՞ր աղբյուրից բխելն է՝ բարի՞, թե՞ չար...

Դրա համար էլ Աստված մարդացավ, որպեսզի Հիսուս Իր երկրային կյանքով մարդկությանը լուսավորելով շնորհ ու կարողությո՛ւն հաղորդի՝ տեսնելու, հասկանալու և ընտրելու բարի աղբյուրը: Որպեսզի դրանից խմելով կյանք ունենա...

Այսօր, երբ հայությունը որոնումների մեջ է իր ինքնության իրապե՛ս ճանաչման, պահպանման, պետության կայացման, զորացման, որով և իր անվտանգության և բարեկեցության ապահովման ճանապարհին, պետք է իրեն շնորհված 17-դարյա աղբյուրն իրապե՛ս տեսնի, նրան հարազատ և հավատարի՛մ մնա ու նրանից եռա՛նդ, զորություն և ուղղություն ստանա ***կյանքի՛ համար՝ ա՛յժմյան ու հավիտենական:***

Շաբաթ, 20 - 09 - 2014թ., ժամը 11:00

ՍՈՒՐԲ ՀԱՅԱՍՏԱՆ
(Սուրբ հայերի սո՛ւրբ հայրենիք)

Ամեն տեսակի՝ գիտական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական և այլ միջոցներով ու մոտեցումներով, ինչպիսի՛ն էլ դրանք լինեն, անհնար է լիովին հասկանալ, որոշել և լուծել հայության և նրա հայրենիք Հայաստանի հարցերը, կատարել խնդիրները, բավարարել պահանջները:

Հնարավոր չէ՛ դա անել, եթե չճանաչվեն ու հաշվի չառնը-

վեն հայի հոգի՛ն, ազգի՛ հոգին, դրանց էությունը, վիճակը, պահանջները և դրանց բավարարման հայության պատասխանատուների ինչպիսին լինելը: Եվ դա՝ խնդիր է հայի, հայության ու Հայաստանի հարատևորե՛ն ապահով, ստեղծագործ ու արժանապատիվ կյանքով ապրելու համար:

Այս հարցերի, խնդիրների, պայմանների և դրանց բավարարման միջոցների, հնարավորությունների մասին կարելի է և պե՛տք է շատ խոսել, թվարկել, սակայն կարճը, ճիշտը և միակ նախապայմանով ու վերջին հաշվով բացարձակ օգտակարը ***հայի, հայության և պետության սրբացումն ու սուրբ կյանքով ապրելն է:*** Հայաստանի՛ սրբության մասին չենք նշում, որովհետև այն սուրբ է միշտ, և բոլոր պայմաններում, անկախ նրանից, թե.

- հայն ու հայությունը դա զգո՞ւմ, տեսնո՞ւմ և ըստ այնմ ապրո՞ւմ են, թե՞ ո՛չ,

- մնացե՞լ է իրենց մեջ այդ սրբությունը տեսնելու, զգալու և դրանով ապրելու հատկությունը, թե՞ ոչ,

- Կարո՞ղ են այդ հատկությունն ապահովել և այն ունենալ հայ կյանքի գոյությունում ու ամեն տեսակի հարաբերություններում, կապերում և պարտավորություններում՝ ցուցաբերելով ազնվություն, պատասխանատվություն, հավատարմություն, պարտաճանաչություն, խիղճ և կարեկցանք (որոնցով և՝ համահայկական փոխադարձ վստահություն, սեր ու միություն, միասնականություն, հոգատարություն և նվիրում), թե՞ ոչ:

Եվ հայ կյանքում տեղի ունեցող բազում խորհրդակցություններից, գիտաժողովներից ու համաժողովներից գոնե մեկերկուսը կարո՞ղ ենք նվիրել ***մեր ազգի, հայրենիքի և պետության սրբացման նպատակին:*** Կարո՞ղ ենք որևէ կերպով սկիզբ դնել մեր՝ ***որպես անհատի, ազգի և պետության սրբացման գործընթացին, թե՞ ոչ:***

Եթե այո, նշանակում է Աստված մեզանից դեռ երես չի դարձրել, և Նրա շնորհով մենք փրկության ընթացքի մեջ ենք: Իսկ եթե այդ հարցը մեզ կամ մեր ճնշող մեծամասնությանը անհեթեթ, ծիծաղելի ու իրականությունից կտրված թվա... նշա-

նակում է դեռ այդ չափով հոգեկույր ենք, ապակողմնորոշված, մոլորված ու անընդունա՛կ, անկարո՛ղ՝ մեր ազգն ու հայրենիքը ճահճից դուրս բերելու: Ճահիճ, որը նշանակում է հոգևոր, գաղափարական և բարոյական գերության, ստրկության տանող ***հայկականության*** վախճան: Բայց մենք դեռ ժամանակ և հնարավորություն (շանս) ունենք՝ դարձի գալու, փրկվելու և բարձրանալու:

Հավատա՛նք, որ այդ մեզ շնորհված է...

Մեր երկնավոր Տերն Իր Հայրական սիրով, բարությամբ և համբերությամբ մեզ տվե՛լ է այդ հնարավորությունը, որը հոգու տեսողությամբ է երևում: Կարո՞ղ ենք վերացնել մեր հոգու կուրությունը և տեսնել այդ հնարավորությունը՝ մեր փրկության ու վերելքի ուղին...

30 - 07 - 2018թ., ժամը 12:15,
Խալկիդիկի, Հունաստան

ՄԵԾ ՃԵՂՔՎԱԾՔ ԱՌԱՋԱՑՆՈՂ «ՄԱՆՐՈՒՔ»

Հայ իրականության մեջ (նաև այլ երկրներում, բայց խոսենք մեր մասին) վաղուց առկա, սակայն մոտ անցյալից սկսած հարաճո՛ւնորեն զորացող, տարածվող խարդախ ու կոռումպաստեղծ երևույթ է այն, որ Հայաստանում հայերի զգալի մասի մեջ պաշտոնի տիրողը մտածում է, որ ինքը կարող է (չգրված օրենքով նրան տրված է) անել բաներ, հատկապես՝ ապօրինի յուրացումներ, կարգադրություններ և այլն, որոնք առաջ, նախքան պաշտոնակալությունը և իր համար վտանգավոր էր անելը կամ պարզապես հասանելի չէին...

Ու մեր ազգային իրականության այս երևույթի բացասական անդրադարձները սաստկանում են նրանով, որ դրանում հարաճունորեն ներառվել են պետական և մասնավոր հատ-

վածի բարձրաստիճան պաշտոնյաներ ու նույնիսկ զինվորականներ, մտավորականներ, կղերականներ:

Եվ մեր ազգային իրականության մեջ չեն լսվում ազդեցիկ՝ վստահելի, հարազատ ու հեղինակավոր ձայներ, որ ազդարարեն. «ո՛չ, սիրելինե՛ր, պաշտոնի, դիրքի, պատասխանատվության և դրանցով նաև պատվի ու վստահության բարձրացումը ոչ թե մեծացնո՛ւմ են անձի ամենաթողությունը, ***այլ սահմանափակո՛ւմ, հասցնում զրոյի»:*** Ու ինչքան բարձր է նշանակումը՝ հատկապես՝ ժողովրդի կողմից ընտրությամբ, այնքան մեծ է անձնական կողմնակի գործերով զբաղվելու սահմանափակումը: Մինչև իսկ տվյալ պաշտոնատար անձի ամեն տեսակ եսական արարքների զրոյացում՝ դրանց բացարձակ սահմանափակմամբ:

Օրինակ, երբ անձը դեռ զինվոր կամ սերժանտ է, ***գուցե՛*** կարող է և ներվել իր որոշ անպատշաճ խոսքի, տեսքի կամ պահվածքի համար, սակայն սպան, առավել ևս գեներալը՝ ո՛չ: Եթե ***գուցե*** մի կերպ կարելի է բացատրել նման վերաբերմունքը հոգևոր («փոքր») հովվի կողմից, ապա եպիսկոպոսի, առավել ևս հովվապետի կողմից՝ ո՛չ: Նույնը վերաբերում է մտավորականությանը և հատկապես պետական իշխանությանը: ***Երկրի իշխանավորը չպիտի կարողանա գրված և չգրված օրենքներով և մանավանդ իր խղճով ու գիտակցությամբ անել այն, ինչը կարող է, ի՛նչ-որ հասկացողությամբ, որոշ չափով, ներելի համարվել հասարակ պաշտոնյային, ոստիկանին կամ խանութպանին:***

Բայց հաճախ ի՞նչ է կատարվում մեր իրական կյանքում. դեռ նախքան նշանակվելն իսկ պաշտոնատարն արդեն պատկերացնում է անել բաներ (նաև իր ազգականների ու այլ յուրայինների հետ ու նաև նրանց համար), որ առանց այդ պաշտոնի չէր կարողանում անել կամ վտանգավոր էր համարում անելը: Եվ այս երևույթի թշվառության (գուցե և ողբերգական կատակերգության) աստիճանը բարձրանում է նրանով, որ մեր հասարակության լայն խավերի մեջ այդ անարդար, ամոթալի և հույժ

վնասակար երևույթից ո՛չ զգալի վրդովվում է առաջանում, ո՛չ էլ նույնիսկ զարմանք, այլ կարծես այն համարվում է օրինաչափ:

Խեղճ մարդիկ ինչ-որ ժամանակ առաջ այդ երևույթների ամենափոքր նշանից իսկ գուցե թե՛ վրդովվել և թե՛ դրա դեմ խոսել ու պայքարե՛լ են, բայց այդ զազրելի երևույթն այնքան է գոյատևել, տարածվել, ընդհանրացել ու կայացել, ամրացել, որ «օրինաչափության» կարգավիճակ է ստացել, որով և հասարակության մեջ դրա հանդեպ անհույս խեղճության վիճակում լինելու զգացումն ու գիտակցությունն է առաջացել:

Ինչպե՞ս կարող է փոխվել այս գարշելի, ամոթալի, ազգադավ և տարբեր տեսակետներից հո՛ւյժ վնասակար երևույթը, որով մեր հոգիները ցամաքում են ճշմարիտ, անկե՛ղծ հավատքից, մեր մտքերը հեռանում, զրկվում են հարազատ ազգային գաղափարականությունից, և մեր կենսաձևը, ապրելակերպը, հարաբերություններն այլասերվում, աղավաղվում են անբարոյական հայացքներով, «նորմերով», որոնք օտարածին նենգությամբ մեր մեջ սողոսկում և դուրս են մղում մեր միջից մարդկային-ազգային տոհմիկը, հարազատը, կենարարը և տիրաբար գրավում դրանց տեղը...

Հայ հոգևորն ու աշխարհիկը՝ հավատքն ու գաղափարը, եկեղեցին և պետությունը, հոգին ու մարմինը, պետք է միասնակա՛ն և ամեն մեկն իր տեղո՛ւմ գործեն՝ ազգի հոգին և միտքը, խիղճն ու պատիվը պաշտպանելու, մաքրելու և պահպանելու համար...

07 - 11 - 2014թ., ժամը 19:20

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ժողովրդավարությամբ ամուր համարվող շատ երկրներում, դժբախտաբար նաև Հայաստանում, ընդդիմությունը սովորաբար առիթով կամ առանց առիթի քննադատում, մեղադրում և նույնիսկ ծաղրում է իշխանություններին: Սակայն այդ ընդդիմությունները երկրի ընտրողներին չեն ներկայացնում իրենց ստվերային կառավարությունները, որոնք ընտրվելու դեպքում (որի համար իրենք խնդրում, համոզում են ժողովրդին), իբր պիտի վերացնեն իրենց նշած թերությունները և երկիրը ամեն տեսակ ախտավոր երևույթներից պիտի ազատեն ու արագ զարգացնեն, առաջ տանեն: Մինչդեռ ամեն տեսակի քննա- դատությունների, մեղադրանքների հետ նպատակահարմա՛ր է, որ ներկայացվեն կոնկրետ ծրագրեր երկրի տնտեսության, արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, գիտության, մշակույթի, արտաքին քաղաքականության, ազգի միասնության, ազնվացման և այլ խնդիրների ու դրանք կյանքի կոչելու կարող անձանց մասին:

Այս երևույթը, այս հանգամանքն ապացույց է, որ ընդդիմության անվան տակ լինում են նաև անլուրջ, անկարող և գուցե նաև չարամիտ ու անձնական շահերն ազգի, երկրի և պետության շահերից բարձր դասող մարդիկ: Եվ լինում են նաև այդպիսի անձանց ազդեցության տակ ապակողմնորոշված, մոլորված և նրանց ձեռքին խաղալիք դարձած մարդիկ:

Իսկ մե՛ր դեպքում, մեր երկրի՛ դեպքում այդ վնասակար վիճակն ինչպե՞ս կարող է փոխվել, եթե ոչ մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որով և ազնվությամբ, խղճով, գոնե մի քիչ քաղաքական գրագիտությամբ և, իհա՛րկե, առաջին հերթին՝ Աստուծո օգնու-

թյամբ: Օգնություն, որը եղել է ու կա նաև ա՛յժմ (այլապես մեր այսքան թերություններով, շեղումներով, տկարություններով գոյություն չէինք ունենա) և լինելու է մի՛շտ, սակայն՝ պայմանով: ***Պայմանով, որ փոխվենք:***

Բոլորս փոխվենք՝ իշխանավոր թե շարքային, աշխարհիկ թե հոգևոր, հարուստ թե ոչ, տարեց թե երիտասարդ, այր թե կին, ապրող երկրում թե արտերկրում. բոլոր հայերս փոխվենք, դառնալով գոնե մի քիչ նման մեր նախնիների, մեծերի, սրբերի, նահատակների Աստվածաշնորհ կերպարներին:

Եվ ի՞նչ: Այլևս ոչինչ՝ ո՛չ մի վախ թշնամիներից, ո՛չ մի վարկի խնդրանք «բարեկամ» բանկերից և միշտ հաջողակ ու հաղթական, քանի որ այդ դեպքում մեզ համար մեր ազգը, մեր հայրենիք Հայաստանը և մեր պետությունը՝ կլինեն սուրբ: Ինչո՞ւ, որովհետև հայն ու հայությո՛ւնը կլինեն համակված սրբությամբ: Այն է՝ հավատքով, խղճով ու ազնվությամբ ՀԱՅԸ ԴԱՐՁԱԾ ԿԼԻՆԻ ԱՍՏՎԱԾՈՐԴԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ՝ ԱՍՏՈՒԾՈ ԱԶԳ:

Կիրակի, 15 - 02 - 2015թ., կեսգիշեր

ՍՈՒՐԲ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԸՍՏ ԱՅՆՄ՝ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Երբ մեր հայոց պետությունը (պետական պաշտոնեությունը) որոշումներ է ընդունում նաև հավատքի, գաղափարականության, բարոյականության, արդարության և նման այլ հարցերի վերաբերյալ, այդ դեպքում արդար, ճիշտ ու օգտակար կլինի, որ նայի դեպի երկինք և հիշի մեր ազգի մեծերին, սրբերին, նահատակներին և մտածի, թե ընդունած որոշումներն ինչքանով են համապատասխանում Տիրոջ կամքին, Երկնքից մեզ հաղորդված պատգամներին:

Ու երբ մեզ հիշեցնում ու նաև տարբեր ձևերով սպառնում և ստիպում են որպես գերակա և պարտադիր ընդունել ու կատարել ինչ-որ «միջազգային» (կամ «համաշխարհային») հան-

ության կողմից որոշված օրենքներ, պետք է մեր պետության ղեկավարությունը (համայն հայության ուշադրության ներքո) հիշի, մտածի, նկատի առնի, թե ըստ տիեզերքի հավերժակա՛ն Տիրակալի իշխանության օրենքների՝ մենք ի՞նչ պարտավորություններ ունենք: Մենք ի՞նչ պետք է անենք ու չանենք և պետք է ինչպիսի՞ն լինենք:

Ու երբեք չմոռանանք (լինի հայ իշխանավոր, հայ մտավորական, կղերական, թե գառներ արածեցնող հովիվ), որ մենք պետականորե՛ն, ազգովի՛ն ու անձնապե՛ս ենթակա, հպատակ և միաժամանակ հարազատ ենք Արարիչ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ Աստծուն:

Եթե այս հիշենք և ըստ այդմ հետևողական ու հարատև հավատարմությամբ ընթանանք, վերաբերվենք ու գործենք, կլինենք միշտ, ամենուր ու ամեն ինչում հաջողակ, հաղթական ու փառավորված: Իսկ եթե անհավատարիմ, անտարբեր կամ մոլորված լինենք, էապե՛ս վտանգված կլինենք մե՛նք բոլորս՝ նաև մեր երեխաներն ու թոռները՝ հայոց սերունդները՝ հայ ազգի և հայրենիք Հայաստանի ապագան: Եվ վտանգված կլինենք առանց որևէ օգնության և հույսի:

Աստված մի՛ արասցե այդպիսի վիճակում հայտնվենք:

Աստված միշտ գթացել, սիրել ու պաշտպանել է մեզ և թույլ չի տա այդպիսի վիճակի մատնվենք, բա՛յց...

Բայց մեր ազգը, յուրաքանչյուրս (ու առաջին հերթին՝ մեր հոգևոր և աշխարհիկ իշխանությունները) պետք է չկորցնե՛նք մեր զգոնությունը, չմոռանա՛նք մեր կոչումը և չուրանանք, չխախտենք մեր հավատարմությունն Աստուծու հավատքի հանդեպ. հավատարի՛մ մնանք Նրա Միածին Որդու Ավետարանին ու Խաչին՝ խորապես հավատալով նաև, որ այդ հավատարմությամբ է, որ մենք կանք և ի վիճակի կլինենք որպես Աստուծո հայ ժողովուրդ ընթանալ դեպի բարի, Աստվածահաճո՝ ու երջանիկ կյանք, այժմ և հավիտյանս:

Եվ այս ճշմարտությո՛ւնը պետք է լինի հայոց պետականության ու պետության փիլիսոփայության, ռազմավարության և ներքին ու արտաքին ընթացիկ ու հեռագնա քաղաքականու-

թյան հիմքն ու առանցքը, հոգին և մարմինը: Եվ ո՛չ մի շեղում աջ կամ ձախ, ինչ էլ լինի, ինչ սպառնալիք կամ հրապույր՝ (մտրակ կամ կարկանդակ) էլ մեզ ներկայացվի:

Եվ մենք կլինենք միշտ կարող, ազատ ու երջանիկ թե՛ երկրային և թե՛ երկնային չափանիշներով, որովհետև հոգեղենությամբ, գաղափարականությամբ և բարոյականությամբ (այն է՝ Աստուծո հավատքով, դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու Հայ ազգային բարոյական արժեհամակարգով) ու ըստ այնմ կենցաղավարությամբ ապրող հայ ազգն ու իր պետությունը զերծ կլինեն նյութապաշտությունից, որով և ամեն տեսակի կոռումպացվածությունից, այսինքն՝ զերծ մահացու ախտահարումներից և կլինեն առողջ, կենսունակ, մրցունակ, հաջողակ ու հաղթական՝ միշտ, ամենուր, ամեն ինչում: Քանի որ այդպիսի՛ հայության, այդպիսի՛ պետության և Հայրապետության «ռազմավարական և հատո՛ւկ առաջնայի՛ն» դաշնակիցը կլինի Երկնային Արքայությունը:

Այս ճշմարտությունը առանցքային մաս է կազմում Ավետարանով և Խաչով Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության, որը նաև մեր այդ հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է, և որը պետք է պարզ ու հստակ գիտենա ազգը, սովորի նոր սերունդը և կիրառվի մեր ազգային ու պետական կյանքում՝ միշտ, ամենուր, ամեն ինչում: Եվ դրանում նաև էապես օգտվելով, իր կոչումին հարազատ հայ հոգևորականության կողմի՛ց կատարվող հատո՛ւկ ջանքերի օրինակներից: Իսկ սա նշանակում է, որ հայոց կրթության, գիտության ու մշակույթի (գրականություն, արվեստ) և ոչ վերջին հերթին՝ հայոց ԶԼՄ-ների առաջնային պարտականությունն ու խնդիրը պետք է լինի այդ անե՛լը՝ ազգին դա իրազեկելը:

29 - 06 - 2011թ.,
Ագիոս Նիկոլաոս, Կրետե կղզի

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազգի բոլո՛ր սերնդների մեծերի, սրբերի և նահատակների Արարիչ Հոր հավատքից բխող և մեզ սուրբ ժառանգություն թողած պատգամի համաձայն հայության, Հայաստանի, հայոց պետականության ու պետության ամենաառաջնային, ամենամեծ ու ամենաէական նպատակը, խնդիրը և գործը՝ հայությունը Աստուծո ազգ դարձնելն է, պահպանելով Արարիչ Հոր հետ 17-դարյա սրբագործված Ուխտը, դաշնակցելով Նրա հետ ու կատարելով Նրա կամքը՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Եվ դրա համար հայ ազգի ու երկիր Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականությունը պետք է մշակվի և կենսագործվի ըստ այնմ:

Ի՞նչ է նշանակում Աստուծո ազգ դառնալով համապատասխան քաղաքականություն վարել:

Նշանակում է ունենալ հարատև ու անգերազանցելի հզորությամբ բազմակողմանի պաշտպանություն, անհաղթահարելի գոյություն ու անսպառ կարողություն, որով և նա՛խևառաջ անխոցելիություն ու ամենահուսալի պաշտպանվածություն որևէ խորթ, չար, թշնամական ներթափանցումից, ներմուծումից ու առավել ևս նվաճումից: Իսկ ազգի, հայրենիք Հայաստանի և մեր պետականության ու պետության մնացած բոլո՛ր խնդիրները կլուծվեն, պահանջները կբավարարվեն ու նպատակները կիրագործվեն ամենաբարենպաստ կերպով: Հայության բոլոր արդար, Աստվածահաճո իղձերի կատարումը կլինի միայն ժամանակի հարց, այն էլ պատմականորեն շա՛տ կարճաժամկետ հարց: Որովհետև այդպիսի՛ հայության ու Հայաստանի, այդպիսի՛ երթի առջև, ըստ Աստվածաշնչյան խոսքի, բոլոր ծորերը

կլցվեն, և բոլոր բլուրները կխոնարհվեն:

Եվ մենք՝ հայերս, պետք է հիշենք, որ այդպիսի ազգ, երկիր և պետություն դառնալու ու այդպիսի պատմական նշանակությամբ երթ ու ընթացք ունենալու համար, անպայման համաշխարհային բանկերի, առատաձեռն բարերարների և նման այլ աղբյուրների հարկը չե՛նք ունենալու, որովհետև այն, ինչ որ պետք է մեր այդպիսի՛ ընթացքի համար, մեր հոգիներից, մեր սրտերից, մեր մտքերից կբխի: Եվ առատորե՛ն կբխի, երբ մենք ճշմարիտ հավատքով համակված, սրբվենք ու ազնվանանք, այսինքն՝ Աստուծո Ազգ դառնանք. ուխտյալ հավատարի՛մ դաշնակիցն ու գործակիցն Արարիչ Հոր, Նրա Որդու և Սուրբ Հոգու՝ *Աստուծո*:

Կարո՞ղ ենք այդ անել: Մեր մեծերը, մեր սուրբ նախնիք դա բավականին արե՛լ են:

Կարո՞ղ ենք ձևով ժամանակակից և նույնիսկ գե՛րժամանակակից լինել, սակայն էությամբ ու բովանդակությամբ նրանց նմանվել, նրանց հավատքո՛վ ապրել, նրանց ճանապարհո՛վ ընթանալ: Այլ ոչ թե լինել մեր միջից նրանց նման, որ այլասերվեցին խորթ և չար ներգործություններից ու շեղվեցին՝ վնասելով մեր ազգին, հայրենիքին, պետականությանը, պետությանը և համա՛յն մարդկությանը՝ դատապարտվելով հավե՛րժ:

Մենք բոլորս և մեզանից յուրաքանչյուրը՝ ամե՛ն մի հայ, ինչ վիճակում էլ լինի, ո՛ւր էլ նա գտնվի, ունի իր մեջ փրկության և վերելքի սերմը՝ (հատուկ բջիջը), ներուժը՝ կատարելու Աստվածահաճո գործեր, միանալով հայոց պատմական նշանակության Աստվածահաճո ու Աստվածապահանջ երթին դեպի երանություն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ
ՎԻՃԱԿ ՈՒ ԸՆԹԱՑՔ

Հինգշաբթի, 18 - 10 - 2017թ., ժամը 00:50

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՏՔԻ ՄԵՐՕՐՅԱ ՃԳՆԱԺԱՄԻՑ

Քրիստոնեական աշխարհի պատմականորեն մեծագույն ճգնաժամը մի՞թե տեղի չունեցավ 20-րդ դարում և հարաճունորեն շարունակվում է մեր ժամանակներում՝ 21-րդ դարասկզբում:

Ու ի՞նչ է նշանակում այս ճգնաժամը, ինչպես եղավ այն, ի՞նչ հետևանքներ է ունենում և դեռ կարող է ունենալ:

Առաջին հայացքից էլ երևում է, որ դա համամարդկային հարց և խնդիր է: Եվ որպես այդպիսին էլ բնականաբար վերաբերում է նաև հայ ժողովրդին, ամբողջ հայությանը, և հա՛տկապես նաև հոգով մտածող, տրամաբանող յուրաքանչյուր հայի: Ու եթե այս կամ այն չափով և ձևով այդ ճգնաժամի մեջ են քրիստոնյա հայությունն ու Հայաստանը, ապա մի՞թե արդար ու նաև հրամայակա՛ն չէ, որ մենք՝ հայերս, նախևառաջ ու անհապաղորեն անդրադառնանք մեր հայ իրականությանն այն իմաստով, թե նշյալ ճգնաժամն ինչ աստիճանի է համակել հայ ազգը, Հայաստանը և հայ քրիստոնեությունը, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հետ միասին: Եվ դա ինչպե՞ս, ինչպիսի՞ և ի՞նչ նշանակության ու աստիճանի ազդեցություն և հետևանքներ է ունենում մեր ազգի տարբեր հատվածների սոցիալական, սեռային և տարիքային խավերի, ու առաջին հերթին հոգևորականության, ղեկավարության, մտավորականության ու, ի վերջո, մեր պետականության, պետության և Հայաստան հայրենիքի համար:

Այս հարցին, որպես հարցերի հարց և որպես հայ քրիստոնեական բնականոն պարտականություն, եթե Տերը կամենա, պիտի անպայման մանրամասն անդրադառնալ, ***բայց մինչ այդ,***

էական է ըմբռնել, ընդունել մեր հարազա՛տ հոգևորականության դարերով ուսուցանող ավետարանական պատգամը, թե՝ մեր հավատքի, որով և մեր հոգիների, որով և մեր ազգի ու մեր հայրենիքի ապահովությունը, վերելքը, բարեկեցությունը միայն ***նյութական զարգացման ու աճի միջոցով չի՛ կարող լինել,*** շինություններ կառուցելով և զարդարելով չի՛ լինում, այլ Աստուծո խոսքով՝ հայ մարդու և մանավանդ մատաղ սերնդի հոգին, միտքը, սիրտը հավատքով մաքուր և փորձություններից, վարակներից, պղծությունից հեռու պահելով, պաշտպանելո՛վ է լինում, թույլ չտալու համար, որ հայ կյանքն ախտահարվի, հիվանդանա, տկարանա, փչանա ու կորչի՝ «նոր Բաբելոնի աշտարակաշինություններում»:

Եվ ի՞նչ պետք է անել, դրա համար. ո՞վ և ովքե՞ր ի՞նչ կարող են և պարտավոր են անել, ինչպե՞ս կարելի է անել... Այդ մասին մի՞թե չպետք է մաքուր սիրտ-սրտով և մաքուր միտք-մտքով ի մի գալով՝ մտածել, խոսել, որոշել ու գործել Տիրոջ առաջ:

Եվ մի՞թե այդպիսով՝ մեր ազգի վարակամերժ կարողությունը պահելով, և մեր ժողովրդի ու հատկապես մատաղ սերնդի հոգեբարոյական ու գաղափարամտավոր վարակամերժությունը զորացնելով չէ, որ Տիրոջ օգնությամբ մեր փրկության լաստը կշինենք:

Եվ մենք մի՞թե այդ չպիտի անենք՝ նույնիսկ նա՛խքան այն ժամանակի գալը, երբ վերոնշյալ ախտահարումների պատճառներով լիովին հաշմված, ցավերի մեջ թուլացած, անկարող կլինենք այդ անել, և մեզ ու մեր մատաղ սերունդը «կուլ գնալուց» պաշտպանել: Դրա համար (թեև բավականին ուշացած), այժմ անեթ վճռականորեն (ու իհարկե նաև լա՛վ մտածված և կազմակերպված) պետք է ***անենք այն,*** ինչ-որ պիտի ուզենանք անել, երբ բանը բանից անցած լինելով, դանակը հասած կլինի ոսկորի՛ն, երբ կործանումն ակնհա՛յտ կլինի, բայց բավարար ուժ ու միջոց այլևս չե՛նք ունենա պատրաստվելո՛ւ և դիմադրելու (ոչ թե հաղթելու և վերընթա՛ց ունենալու, այլ պարզապես), չկորչելո՛ւ համար:

Նախքան այդպիսի, մեղմ ասած անբարենպաստ պայմաններում հայտնվելը, անհապա՛ղ, հիմա՛ անենք մեր այն ժամանակվա (երբ դանակը ոսկորին հասած կլինի) անելիքները: Եվ անենք ամեն ինչից՝ արձակուրդների, տարբեր հանդիպումների, ատամնաբույժի գնալուց, բարեկամներ ընդունելուց, հարսանիքների, «քեֆերի» մասնակցելուց առաջ: Ամենից առա՛ջ անենք կյանքի և պատվի համար անհրաժեշտը՝ հետաձգելով ամեն ինչ, բացի աղոթելն ու Աստծուն գոհունակություն հայտնելը և մեր մեղքերի համար քավություն ու չարին հաղթելու համար օգնություն խնդրելը ***մեր Արարիչ Հորից և մեր հավատքի Ջորագլուխ՝ Աստվածորդուց:***

Եվ ի՞նչ: Այն, որ ազգովին հավատքով կհոգևորվենք, կիմաստնանանք, էապե՛ս կմիանանք, կզորանանք և լիովին ի վիճակի կլինենք չազդվելու վերոնշյալ ճգնաժամից, ճգնաժամերից, փորձություններից և կապահովենք մեր արժանապատիվ կյանքն ու հարատև վերելքը՝ հաղթելով չարին և լուծելով մեր բոլոր-բոլոր հարցերն ու խնդիրները: Հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Շաբաթ, 06 - 07 - 2002թ., ժամը 07:50

ՄԵԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային կյանքի երկնապատգամ բարոյականության խախտումը հավասարազոր (և դեռ շա՛տ ավելին) է քան բնական միջավայրի, կենսոլորտի խախտումը: Բարոյականության անաղարտությունը հավասարազոր (և դեռ շատ ավելին) է, քան բնական միջավայրի և կենսոլորտի անաղարտությունը: Հետևապես, մարդկային հարաբերություններում բարոյականության աղարտումն ու ախտահարումը նեխում, կենսազրկություն ու կորուստ է առաջացնում մարդկության մեջ: Ինչպես և միջա-

վայրի ապականումը նշանակում է ապականում ու կենսազրկում գետի, լճի, ծովի, հողի, օդի, կենսոլորտի և... մարդու մարմնի...

Աստված է դրել իր ստեղծած կյանքի օրենքները, կանոնները, որոնց մեջ մտնում են նաև դրանց թե՛ կատարման դրական և թե՛ խախտման բացասական հետևանքները՝ որպես օրինաչափություն:

Եվ դրանց «չափն ու սահմանը» նույնպես մտնում են այդ օրինաչափության մեջ, որից կարելի է (և պե՛տք է) օգտվել, շահագործե՛լ, բայց երբե՛ք չչարաշահել...

Մարդ էակի մեջ կա սեփականության ու անձնական օգուտի ձգտում, և դա օրինաչափ է, հետևապես բարի, բայց իր չափի մեջ: Ագահությունն անցնում է չափն ու սահմանը: Անցնում է ո՛չ միայն ընդհանուրի, այլև իր սեփականի, անձնականի նկատմամբ ևս: Անձնականի ագահությամբ վարվելը, բնականից դուրս, այսինքն՝ ոչ օրինաչափ գործածությունը չարաշահում է, ինչպես չարաշահում է բնական միջավայրի հավասարակշռության խախտումն ու ախտահարումը, որի հետևանքը լինում է նեխում, կենսազրկում, մինչև իսկ գոյի դադարում...

Եվ մարդկային կյանքում, մարդկային հարաբերություններում այս օրինաչափությունը նույնը, և դեռ ավելին է, քան բնության մեջ եղածը, որովհետև մարդկային հարաբերություններն այդ բնության մաս են կազմում՝ նաև այլ, ավելի բարձր դասակարգմամբ...

Եվ հարազատությունը, ընկերությունը, բարեկամությունը, սերը, պատիվը, ինչպես և ուժը, զորությունը, հարստությունը, իշխանությունը և նույնիսկ սեփական հանճարը կամ տաղանդը, ընդունակությունը, մարմինը և նման բաները չի՛ կարելի չարաշահել առանց կորստաբեր հետևանքների՝ հատուցման:

Ամեն ինչի չարաշահում՝ խախտում գին ունի. խախտման բնույթի և չափի համապատասխան պիտի վճարվի այն:

Միայն Աստուծո սերն ու գթությունն է, որ բացառություն կարող է անել, և միշտ ու շատ էլ անո՛ւմ է մարդկությանը և մեր հայ ազգի՛ն, յուրաքանչյուրի՛ս, որ խախտման հատուցումը ներ-

վի. դրա համար էլ գոյություն ունենք դեռ: Որովհետև Նրա համբերությունը, գութը և բարությունն անսահման են, ինչպես անսահման է Իր Սերը, որով Իր Միածին Որդուն զոհեց մարդուն մեղքից, որը մահ է, փրկելու համար, որ կյա՞նք ունենա:

Բայց Աստուծո անսահմանության մեջ մարդուն, ազգին և մարդկությանը տրված չափն ու սահմանը Աստված պահում է:

Աստված Իր ստեղծած, Իր սահմանած օրենքներն ու կանոններն Ի՛նքն իսկ չի խախտում: Եվ մեզ Իր Որդու տանջանքների գնով ու միջոցով պատգամում է չխախտե՛լ դրանք, այսինքն՝ չփչանա՛լ, չնեխե՛լ, չայրվե՛լ, այլ վայելել, կյա՞նք ունենալ և նորի՛ց կյանք ունենալ վայելել՝ ապրել երանելի՞, հավիտյան:

17 - 03. 2012թ., ժամը 00:30

ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ. ԻՆՉՊԵ՞Ս

Նորագյուտ Գլոբալ Տեղորոշման Համակարգով՝ ԳՏՀ (անգլերեն՝ GPS (Ջի փի էս) կարող ես ճշգրիտ իմանալ, թե որտեղ ես գտնվում և (ըստ այնմ)՝ որոշել, թե ուր ես գնում, որովհետև կապդ տիեզերքում գտնվող արհեստական արբանյակի հետ է, որն ուղղություն է տալիս քեզ, քո ավտոմեքենային, քո նավին կամ օդանավին: Ու այդ կապից օգտվելու համար ջանքեր ես գործադրում և գին վճարում:

Իսկ ինչպիսի՞ ջանքեր ենք գործադրում ու ի՞նչ գին ենք վճարում՝ կապի մեջ լինելու համար ո՛չ թե Աստծուց արարված մարդու ստեղծած արհեստական արբանյակի հետ, այլ հենց Ի՛ր հետ՝ երկնքի ու երկրի, հետն էլ ամեն ինչի, որ անտեսանելի ու տեսանելի է, ներառյալ և մեզ՝ մարդկանց մեր ուղեղներով հանդերձ ստեղծած ու ամեն ինքնաոչնչացնող չարամտությու-

նից և կամ արտաքին չարից պաշտպանող, պահպանող հենց Արարիչ Աստուծո հետ:

Աստուծո՛ հետ, Ով ոչ միայն ասում է, թե որտեղ ենք, այլև թե ինչ վիճակում ենք, ուր ենք գնում, և սակայն ուր պետք է գնանք ու ինչպե՛ս պետք է գնանք, որպեսզի այնտեղ՝ Իր մոտ ի վերջո հասնենք: Ու նաև պաշտպանում և ուղղորդում է մեր ընթացքը, որպեսզի առանց խարխափումների, առանց խոտորումների և վնասվածքների անփորձանք, ապահով ուղի՛ղ հասնենք իրեն:

Ուրախանո՞ւմ ենք դրա համար. խնդրո՞ւմ ենք, ջանք գործադրո՞ւմ ենք այդ կապն ունենալու և պահելու համար կամ գոնե (անկեղծ, սրտից բխող ու իմաստավորվա՛ծ) մի շնորհակալություն հայտնո՞ւմ ենք այդ հնարավորությունը մեզ տրված լինելու համար:

Շատ անգամ, նույնիսկ չեղած տեղից գումարներ ենք տրամադրում ԳՏՀ-ներ (GPS-ներ) գնելու, տեղադրելու և մեր նպատակների, գործերի ընթացքը ճշտելու, որոշելու համար: Սակայն էապես ավելի՛ կարևոր «GPS» է պետք մեր կյանքի՛ ու նաև մեր ազգի, մեր երկրի ու պետության ընթա՛ցքը ճշտելու, որոշելու համար, այս խառնաշփոթ, երեսպաշտ, խարդախ, անգութ ու կորստաբեր, փորձություններով լի աշխարհում:

Գիտե՞նք, թե ինչպես կարող ենք ունենալ այդպիսի GPS՝ «Գլոբալ Տեղորոշման Համակարգ»: Եվ ի վերջո ի՞նչ ենք կարծում. մեծ ճանապարհ դուրս գալիս ավելի թա՞նկ արժող GPS պիտի գնենք (գուցե պատվիրենք ու օվկիանոսի այն կողմից էլ ստանա՞նք, հույսով, որ կարող է մեզ կողմնորոշել), թե՞ ուղղակի մի պահ հայացքներս հավատքով հառելով դեպի վեր, հոգո՛վ տեսնենք Խաչը և կրկնենք մեր մե՛ծ, մեր սո՛ւրբ նախնիների ասած չորս պարզ բառերը՝ «Տե՛ր, ուղղեա զգնացս մեր» (Տե՛ր, ուղղիր մեր ընթացքը) ու վստահ լինենք, որ չենք շեղվելու մե՛ր ճանապարհից, ուղիղ ու անփորձանք մեզ շնորհված ճիշտ տեղն ենք հասնելու. Ի՛ր մոտ:

Այսպիսի «Գլոբալ տեղորոշման համակարգ» փողով, ուժով ու որևէ այլ բանով չե՛ս կարող ունենալ, այլ միայն Աս-

տուծո հավատքի շնորհով, իմաստությամբ, գիտությամբ կարող ես ունենալ, ու այն գործարկել Հիսուս Քրիստոսի Ավետարանի և Խաչի «հրահանգավորմամբ», (տվյալ պահին խորթ կողմերից ինչ-ինչ նպատակներով բարդ ու զարտուղի ներկայացվող) «***հայություն-եկեղեցի-պետություն»*** ճանապարհին:

Բայց դա լինելով մե՛ր ճանապարհը, մե՛նք էլ Տիրոջ կամքով ու օգնությամբ այն պիտի մաքրենք օտարի կողմից չարակամորեն լցված ամեն փուշ ու տատասկից… և ընթանա՛նք:

10 - 01 - 2004թ., կեսգիշեր,
թռիչք Վաշինգտոն-Մոսկվա
դեպի Երևան

Ի՞ՆՉՆ ԵՄ ՓՆՏՐՈՒՄ

«Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես փնտրում»:

Հնչում է ականջներիս մեջ այս խոսքը, որը հայ իրականությունում հաճախ է ասվում, երբ մեկը ձգտում է իր համոզմամբ՝ մի օգտակար բան անել:

Եվ դարձյալ հնչում է՝ «Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես փնտրում»:

Շա՛տ բան եմ կորցրել. կորցրել եմ Հայրենի՛ք, հայրենի օջա՛խ, ճշմարի՛տ արժանապատվության զգացո՛ւմ ու արդարության իրավո՛ւնք:

Նաև կորցրել եմ հայկականության համն ու բույրը, որովհետև կորչում է հայկական մեր ինքնության էությունը. կորչում են հայոց սո՛ւրբ հավատքից բխող ու դրա վրա հիմնված Հայ ազգային գաղափարը, բարոյականությունը, ըստ այնմ՝ կենցաղավարությունը և դրանց բովանդակությունը, որ մեր մեծերի, սրբերի ու նահատակների թողած ժառանգությունն է:

Եվ այս իրավիճակում, թմբիրի մեջ ընկած, կորցրել ենք

նաև մեր հարազատ կողմնորոշիչները և առաջնորդվում ենք օտար, խորթ ու նենգ կողմնորոշիչներով, որոնց ուղղությունը դեպի անփառունակ վախճան է:

Եվ այս վիճակում չկա զգաստացնող, որ զգանք և կողմնորոշող, որ տեսնենք և մեզ փոխելով փոխենք, ուղղենք մեր ընթացքը:

Ահա՛ թե ի՛նչ եմ կորցրել և ի՛նչ եմ փնտրում: Եվ հույս ունեմ, որ պիտի գտնեմ անպայմա՛ն, որովհետև իմ հոր ու մոր, տատերի ու պապերի և նախնիների պես հավատում և սիրում եմ Ավետարանն ու Խա՛չը՝ Աստվածային փրկարար ու կողմնորոշիչ Շնորհը՝ մեզ՝ հայերիս ու համա՛յն մարդկությանը...

Հինգշաբթի, 23 - 02 - 2012թ., ժամը 13:30

ԵԹԵ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՉՏՐՎԵՐ

Ի՞նչ կպատահեր մարդկությանը, ինչպիսի՞ն կլիներ այն հիմա, եթե Ավետարանն այն ժամանակ նրան չտրվեր: Եվ ի՞նչ ու ինչպիսի՞ն կլինեին և կլինեն հայ ազգն ու Հայաստանն առանց Ավետարանի:

Սա կարևո՞ր հարց է: Այո՛, և հո՛ւյժ կարևոր է այն պատճառով, որ եթե հարցադրման ճիշտ պատասխանը գտնե՛նք ու ընկալենք, այնժամ կհասկանանք, թե ինչ է նշանակում հայության զգալի մասի գործնակա՛ն, փաստացի՛ հեռացումն Ավետարանից, ***և կհասկանանք նաև, թե ինչպիսի՞ ախտեր, տկարություններ, դժվարություններ ու վտանգներ է բերում և կորուստներ հասցնում մեզ՝ Ավետարանին մեր, և մանավանդ մեր ղեկավարության ու կրթության, գիտության, մշակույթի, արվեստի գործիչների և մտավորականության զգալի մասի անհաղորդ կամ առերես՝ ձևական, մակերեսորեն, «երեսանց» հաղորդ լինելը. էլ չասած՝ հայտնի կամ թաքուն դե՛մ, հա-***

կառա՛կ ու մարտնչող լինելը: Կհասկանանք նաև, որ առանց Ավետարանի իմաստության, գիտության ու Խաչի շնորհի և զորության՝ մենք Խոր Վիրապից դուրս չէինք գա, ազգովին միշտ վիհի մեջ կլինեինք, և մեր ապագան՝ մեր սերունդներով հանդերձ, խավարի փորձությունների մեջ կմնային...

Հայաստան երկրում ու հայության մեջ ընկերային, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային վերականգնողական և միջավայրի անաղարտության ու ընդհանրապես՝ կյանքի լավացման, որոշ ծրագրեր մշակվում են, ու դրանց իրագործման ջանքեր գործադրվում ե՛ն: Սակայն էակա՛ն է հասկանա՛լ, որ դրանք ոչի՛նչ են, ***եթե ճշմարի՛տ հավատքի վերականգնման մասի՛ն չենք մտածում,*** և պատշաճ ջանքեր չե՛նք գործադրում ու Աստուծո օգնությանը չենք արժանանում:

Էապե՛ս կարևոր է, որ մենք բոլորս ու հատկապես ազգի աշխարհիկ և հոգևոր ղեկավարությունը, առաջնորդությունը, ա՛յդ ուղղությա՛մբ ղեկավարություն ու առաջնորդություն իրականացնեն հայ կյանքում, ո՛ւր էլ այն առկա է: Ու Աստված կգոհանա հայ ազգից և միշտ կողորմի, կօգնի՝ շատ ավելի, քան մենք պատկերացնում ու ակնկալում ենք:

Եվ դա հային ու հայությանը պա՛րզ, հստա՛կ, մաքո՛ւր իր իսկակա՛ն, բնակա՛ն վիճակին բերելով, երկրայինից հասցնում է երկնայինի…

Երկուշաբթի, 04 - 11 - 2019թ., ժամը 00:45

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԵՎ ՄԱՆԱՎԱՆԴ ՀԱՅԸ ՊԵՏՔ Է ՄՇՏԱՐԹՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆ ԼԻՆԻ

«Առաջիններ կան, որ վերջին են լինելու և վերջիններ կան, որ առաջին են լինելու»: Հիսուս Քրիստոսի ավետարանած այս խոսքը, հավատում ենք, որ կարդացվում է նաև՝ «Արդարներ կան, որ մեղավորներ են լինելու և մեղավորներ կան, որ պիտի (արդարանան) արդար լինեն»:

Ու այս Աստվածային հայտնությունը տեղի է ունեցել անցած դարերում ու տեղի է ունենում մեր օրերում. ըստ երևույթին այժմ արդե՛ն իսկ տեղի է ունեցել տարբեր վայրերում:

* * *

Հավատքի առումով, արևմտյան առաջադեմ երկրները բազում երևույթների ու փաստերի համաձայն, մի կողմից, արդե՛ն իսկ հավատքի ուրացման ու դավաճանության մեջ են ընկած, մյուս կողմից դրան հակված՝ դեպի այնտե՛ղ են գնում...

Էական հարց. մենք՝ աշխարհասփյուռ հայե՛րս, և մեր հայրենիք Հայաստանից մեզ մնացած Հայաստանի ու Արցախի Հանրապետություններն ո՞ւր ենք գտնվում, ի՞նչ վիճակում ենք: Եվ մեր սո՛ւրբ հավատքի հանդեպ, որով և մեր մարդկային-ազգային իսկակա՛ն ինքնության, այն է՝ մեր հոգևոր, գաղափարական և բարոյական ինքնության հանդեպ ուրացումի և դավաճանության մե՞ջ ենք, թե՞ չենք, կամ դեռ լիովի՛ն չենք, բայց դրա ճանապարհին ենք, ա՛յդ ուղղությամբ է ընթանում մեր կյանքը:

Այդ երկու հավանականությունն էլ կորստաբե՛ր են: Ու եթե մենք պարտավո՛ր ենք տեսնել, զգալ ու հասկանալ այդ կորըս-

տաբերությունը, ապա. պե՛տք է մեր ***ազգային, պետական և հայրապետական*** բոլոր միջոցներով ու հնարավորություններով ջանանք, աշխատենք ու ըստ հարկի նաև վճռական պայքա՛ր մղենք, որպեսզի ո՛չ միայն այդ երկու կորստաբեր հավանականությունների մեջ չընկնենք, այլ դրանց հակառա՛կ դիրքում լինենք: Եվ երբ ու որտեղ հարկն է, նաև պայքարենք մեր մերձավորների՝ բոլոր եղբայրների և քույրերի լավության համար:

Եվ Տերը մեզ պաշտպան ու օգնական:

Կիրակի, 07 - 09 - 2014թ. ժամը 12:30

ԱՆՓՈՒՅԹ ՈՒ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ՄՆԱՑՈՂ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Յուրաքանչյուր ազգ ունի իր ուրույն, հարազատ պատմաընթացքը՝ հիմնականում ըստ Երկնային «ճանապարհային քարտեզի» և մասամբ էլ տվյալ ազգի ներքին իմպերատիվի (հրամայականի):

Հայ ազգը ևս իր հիմնադրման օրից ապրում, զարգանում ու ընթանում էր երկնային «ճանապարհային քարտեզով» իրեն վերապահված ուղիով, որից որոշ պայմանների բերումով երբեմն էլ շեղվում էր, սակայն մեզ տրված Շնորհով 301թ. ուղղվեցինք:

Հաջորդ դարերում հայոց պատմության ընթացքը թեև դարձյալ բազում փորձությունների էր հանդիպում, շատ դժվարությունների էր ենթարկվում և շատ հաճախ զրկված էր պետական ղեկավարումից, սակայն, այնուամենայնիվ, շա՛տ չէր շեղվում, չէր հեռանում Երկնային «ճանապարհային քարտեզում» նշված իր հիմնական ուղուց՝ մինչև իր պետականազուրկ վիճակում ազգային կառավարման որոշ գործառույթ իրականացնող համակարգում տեղի ունեցած հեղաշրջումը: Որից հետո կառավարման ղեկն սկսեց ենթարկվել թեև ազգային, բայց

հիմնականում սեկուլյար և մասամբ օտար ուսումնառությամբ ղեկավարությանը՝ ***Հայոց տանն առաջացնելով մեծ բաժանում. հոգեկանի և նյութականի բաժանում, հոգևորի ու աշխարհիկի բաժանում, և հայությունն այդ նոր, ուրույն բաժանումին ենթարկվեց՝ կրելով դրա կորստաբեր հարաճուն հետևանքները:***

Դրա արդյունքում հայոց պատմաընթացքն սկսեց արագորեն շեղվել թե՛ երկնային և թե՛ իր ազգային ներքին իմպերատիվի թելադրած ուղուց՝ դեպի «օտար, ամայի ճամփեքը»: Եվ դա եղավ ազգի հոգուն և մտքին այնքան աննկատ, որ չարժանացավ ազգային պատշաճ ուշադրության ու արգելակող անդրադարձի չեզոքացնելու համար կատարված վնասը:

Ազգային այս հո՛ւյժ բացասական երևույթն ավելի վատթարացավ Առաջին Հանրապետության ոչնչացումից հետո՝ հատկապես նրանով, որ խորհրդային շրջանում նման երևույթներին վերաբերվող խնդիրները ո՛չ միայն պատշաճ ուշադրության չէին արժանանում և լուծումներ չէին ստանում, այլև ընդհանրապե՛ս դրանց վերաբերյալ ազգային իմաստով որևէ օբյեկտիվ անդրադարձ համարվում էր հանցագործություն՝ մահապատժի կամ ընդմիշտ մեկուսացման սպառնալիքով: Իսկ Սփյուռքում այդ հարցով զբաղվելու կարող, գործո՛ւն ու շահագրգիռ կողմ չէր մնացել արդեն:

Հայաստանի նորագույն անկախացումից ի վեր այդ վիճակի փոփոխությունների համար դրությունն ընդհանրապես լավացավ, շնորհիվ ի հայտ եկած բարենապաստ նոր պայմանների: Սակայն ոչ մի դրական արդյունք չի երևում, որովհետև, ըստ երևույթին, այնքա՛ն մեծ էին նախկին շեղումներն ազգամետ ու պետականամետ ուղուց և ազգի մեջ այնքա՛ն խորացած էին անտարբերությունն ու բազում ուրացումների հետևանք անզորությունը, որ շեղումն ուղղվելու փոխարեն ճյուղավորվում է դեպի այլ «օտար, ամայի ճամփեք»:

Որտեղի՞ց գտնենք իմաստություն և զորություն ու նաև ինչպե՞ս վերականգնենք մեր հոգեկանությունն ու ըստ այնմ խիղճը, գիտակցությունը և հարազատության, պատվախնդրության ու պատասխանատվության զգացումը, որպեսզի զգաս-

տանանք հոգեկան, գաղափարական ու բարոյական կորստաբեր թմբիրից, կանգնեցնենք մեր անկումային ընթացքը և սկսենք վերելքը դեպի իսկապե՛ս պետական և իսկապե՛ս ազատ, անկախ, արժանապատիվ ու բարեկեցիկ կյանք մեզ և մեր զավակների, թոռների ու սերունդների համար: Եվ դա կլինի նաև հօգուտ համա՛յն մարդկության, ի գոհություն մեր նախնիների, մեր մեծերի, սրբերի նահատակների հոգիների ու ամենակարևորը, էականը՝ ի փառս մեր հավատքի:

24 - 06 - 2011թ., ժամը 21:30, Աթենք

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(Որ դարերի ընթացքում գիտեինք, բայց հետո ուրացանք, մոռացանք և կորցրինք)

Եվ Նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն»:

(Մատթ., 22.21-22):

Տիրոջ վերոհիշյալ խոսքը նաև քաղաքական փիլիսոփայության և կիրառական քաղաքականության դաս է: Եվ այդ դասը Նա տվեց բոլորի՛ն՝ մարդկությանն ու առաջին հերթին նրանց, ում Իր Հայրը շնորհ էր արել բացելու հոգու աչքերը և լսողությունը, որ ճանաչեն ճշմարտությունը՝ Աստվածորդուն, ու հաղորդակից լինեն Նրա Աստվածային խորհուրդներին: Եվ հայ ազգը, հայոց պետությունը, որ առաջին շնորհընկալներն էին, դարերով հավատարիմ մնացին այդ շնորհին և Աստվածային դասը սովորելով՝ կյանքում կիրառեցին, կողմնորոշվեցին:

Աստվածորդին ի՞նչ էր սովորեցնում մարդկանց՝ կողմնորոշվելու համար մարդկային կյանքում, հասկանալով այդ կյանքի օրինաչափությունները, որոնք Աստվածային անանց, հավերժական են և Նրա վերահսկողության տակ են:

Դրամանիշի վրա ճանաչում ենք կայսրի պատկերն ու գիրը և օգտագործում ենք այն, այսինքն՝ այս աշխարհի նյութական ու ֆինանսական միջոցը և դրանից հարկ տալիս կայսրին: Ինչո՞ւ, որովհետև ֆիզիկապես նրա տիրապետության տակ, նրա հպատակներն ենք: Իսկ եթե դրա համար «նրանը պետք է տանք նրան» և մենք դա անխափան անում ենք, գիտենալով, որ այլապես մեզ լավ չի լինի, ապա ինչո՞ւ ենք մոռանում մեր Երկնային Ամենակալ Հորը: Ում թե՛ ենթակա ենք և թե՛ պատկանում մեր ամե՛ն ինչով՝ կյանքով, սերունդներով և հավիտենական հոգիներով (մեր իսկակա՛ն, անմա՛հ ինքնությամբ՝ եսով): Ինչո՞ւ Նրանը զլանում ենք տալ Նրան:

Ինչո՞ւ ենք դառնում անզգամ և Նրա մեզ հանձնած այգու (Աստվածաստեղծ մեր ինքնության) բարիքներից հարկ չենք տալիս: Արդյո՞ք նրա համար, որ գիտենք Հոր բարի ու ներող լինելը... Այո Նա բարի, գթացող և ներող է անսահմա՛նորեն ավելի քան մենք կարող ենք պատկերացնել, բայց մի՞թե Նա մեզ չի ասել, որ ատում է անզգամությունն ու ամբարտավանությունը և Իր տված բարին ի չար գործածելը (Աստվածային բարության չարաշահում՝ կոռուպցիա. սարսափելի, պիղծ ու ամենակորստաբեր վարմունք):

Իսկ ի՞նչ է նշանակում վերջինս, ի՞նչ պետք է տանք Աստծուն: Հայությունն այս պատգամով իր պարտականությունը լավ հասկանում ու հարատև ճշտությամբ կատարում էր. ***կայսրինը տալիս էր ա՛յն կայսրին, որի տիրապետության տակ նրա (օգտավետ) հպատակն էր դարձել, և դրանով պահպանում իր կյանքը, ու այդ կյանքը նվիրում Աստուծո ծառայությանը՝ կատարելով Նրա՛ կամքը. Աստծունը տալիս էր Աստծուն՝ իրեն հանձնած այգու բերքից (իր ազգային գոյության արդյունքից) ժամանակին տալիս էր իր հավիտենական Տիրոջը՝ Հորը և Փրկչին՝ (հավատարմորեն ու վճռականորեն) ջանալով պահ-***

պանել իր ազգային Աստվածատուր ինքնությունը՝ հոգեկանությունը, հավատքը, ազգային գաղափարը, կերպարը և բարոյական արժեհամակարգը:

Ու այդպիսով մենք ոչ միայն գոյատևում էինք, այլև ինչ-որ չափով աճում, զարգանում էինք նույնիսկ տիրակալների մայրաքաղաքներո՛ւմ, նրանց ճնշման, կեղեքման «քթի տակ», այնուամենայնիվ ազգային կրթությո՛ւն ստանում, ազգային գիտությո՛ւն զարգացնում, մշակութային կյանք ու վերե՛լք ապրում և կամաց-կամաց նաև քաղաքականապե՛ս գրագետ դառնում, բայց… Բայց մենք փոխեցինք մեր կողմնորոշումը, շեղեցինք մեր ուղղությունը, մեր ընթացքը: Փոխեցինք մեր (թեև սահմանափակ, բայց) ազգայի՛ն կառավարման սկզբունքները՝ փոխելով կառույցներն ու ղեկավարությունը և փոխանակ դրանք մաքրելու, զարգացնելու սկսեցինք ազգային նոր քաղաքականություն վարել, համարյա լիովին հեռանալով հայկականության քաղաքական փիլիսոփայությունից և որդեգրելով աշխարհիկ, օտար, սկզբունքներ և ըստ այնմ խո՛րթ քաղաքականություն:

Եվ այդպես վարվեցինք նաև առանց պատշաճորեն քաղաքականանալու, ու ըստ այնմ մենք մեզ և մերը ճանաչելու, հասկանալու, գնահատելու և ուրիշներին էլ ճանաչելու հետ՝ մեր քաղաքականապես անգրագետ ու կիսագրագետ զանգվածները՝ գոնե մի՛ քիչ կրթելու:

Եվ այդ վիճակում բացահայտ պատերազմ հայտարարելով՝ ռազմական, քաղաքական, դիվանագիտական, քարոզչական… կռվի ելանք կայսրության և կայսրությունների դեմ առանց պատրաստված զորք ունենալու (էլ չասած ռազմական բյուջեի և գլխավոր շտաբի մասին՝ իր ենթակառույցներով՝ կապ, հետախուզություն, պատրաստականություն, սպառազինություն, թիկունքի ապահովում և այլն), ինչպես մի ֆիդայի անհավասար կռվում հերոսաբար զոհված իր ընկերոջը հողին հանձնելու դամբանականում ասում էր. «Մենք ասլանու ջնսից ենք, մեկուկես ֆըշանքով օսմանցու դեմ ելանք…» *(Մենք առյուծի ցեղից ենք, մեկուկես փամփուշտով Օսմանյան կայսրության դեմ ելանք*): Ու եղավ այն, ինչ եղավ՝ պարտվեցինք չարաչար,

մեծամեծ զոհերով ու հայրենիքի մեծ մասի կորստով, որոնց հետևանքները հարաճունորեն շարունակում են ամենավա՛տ կերպով անդրադառնալ մեր կյանքի վրա սերնդեսերունդ, թե՛ Սփյուռքում և թե՛ կոտորակված հայրենիքում:

Մենք մեր պարտությունները փորձել ենք և փորձում ենք սեկուլյար՝ աշխարհիկ քաղաքագիտությամբ վերլուծել ու բացատրել, այն էլ, ըստ երևույթին, ոչ պատշաճ մակարդակով: Լա՛վ է, որ անում ենք. հարկավո՛ր է շարունակել և մանավանդ ավելի որակո՛վ անել, որովհետև այդ կերպ չանելը ժամանակի (այն էլ հայկական շատ թանկ ժամանակի) կորուստ է, եթե մեր պարտությունների պատճառները նախևառաջ հավատքով ազգային հոգեբարոյագիտությամբ, ազգային քաղաքագիտությամբ ու Ավետարանական Աստվածայի՛ն դասերի հիման վրա չուսումնասիրենք, չպարզենք, չկշռենք, չհաշվարկենք և չհասկանանք: Մինչդեռ պե՛տք է հասկանանք, որպեսզի օտարամուտ խորթ բանաձևերով ու հաշվարկներով կատարած մեր սխալները նորի՛ց չկրկնենք և դադարեցնենք այդպիսի արդե՛ն իսկ տեղի ունեցող կրկնությունները…

Մեր ազգային կղերական հաստատությունը հայրենիքում ու աշխարհի տարբեր երկրներում իր աստվածաբանական ուսումնառությամբ և հայրենիքում ու աշխարհի տարբեր երկրներում իր հոգևոր ուսումնական հաստատություններով մի՞թե չպետք էր և հիմա էլ չպե՞տք է «հոգևո՛ր քաղաքագիտության» հիման վրա մեզ՝ շարքային հայերիս, բացատրեր մեր պարտությունների և կորուստների պատճառները, հետևանքները և հետագայում դրանցից խուսափելու պայմանները, միջոցները: Իհարկե՛, պետք էր:

- *Իսկ ինչո՞ւ չի անում:*

- Շատ կարևոր է հարցնե՛լ: Ինչո՞ւ: Սակայն մինչ պատասխան ստանալը, ըստ երևույթին, կարելի է հետևյալ դատողությամբ էլ ասել. պատճառն այն է, որ մեր եկեղեցականները ևս այդ պատճառները փորձում են բացատրել ոչ թե մեր ազգային-հոգևոր, այլ օտարածին սեկուլյա՛ր քաղաքագիտությամբ: Եվ քանի որ ա՛յդ քաղաքագիտությունը նրանց ավելի

շատ հայտնի չէ, քան մեզ՝ աշխարհականներիս, ապա նրանց ասածը ոչ մի բան չի ավելացնում մեր գիտեցածի ու ասածի վրա, այլ հակառակը՝ ավելի պակաս լինելով՝ հանգեցնում է նրան, որ նրանք մեզ՝ փաստորեն ձախողվածներիս ասածին են նայում...

Իսկ մենք էլ «կոտրած տաշտակից» այն կողմ չենք անցնում, մնում ենք խաբկանքի անորոշության մեջ:

Ի՞նչը կփոխի մեր մեջ սեկուլյարության արմատացման հետևանքով ազգային մեր այս ձախողությունը, թշվառությունը, եթե ոչ հոգեկանությունը, մեր հավատքից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականությունը, բարոյականությունն ու ըստ այնմ՝ կենսակերպով զարթո՛նք ապրելը, մեղայի գալը ***և վերակազմակերպվելով ճիշտ ուղղությամբ վերընթացը՝ ձևով արդիակա՛ն, ժամանակակից, իսկ բովանդակությամբ հարազա՛տ, տոհմի՛կ:*** Ու դրան կհամապատասխանի նաև մեր ազգին Երկնային օգնությունը՝ լույս, իմաստություն, շնորհք ու զորություն մեր օգտաշատ, գործունեությամբ՝ երջանկաբեր կյանքի համար: Որը կլինի նաև հօգուտ մարդկության ու ամենաէականը՝ ի փառս մեր քրիստոնեական հավատքի:

ՅԱՎԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱԿԱՆ

«Շողակաթ» հեռուստաընկերությունը 2014թ. ապրիլի 4-ի երեկոյան (ժամը 19:30-ին) «Եկեղեցական կյանք» ծրագրում հաղորդում էր այն մասին, որ ուսումնասիրություն է կատարվել *(առաջին անգամ)*՝ որոշելու համար, թե Հայաստանի բնակչությունը կրոնադավանական ի՞նչ պատկանելություն ունի:

Այդ հաղորդումն ուշագրավ էր մասնավորապես հետևյալ հայտարարության կապակցությամբ, որ հնչեց մոտավորապես այսպես. «Շենգավիթի մի շենքի համարյա բոլոր բնակիչները Հայաստանյայց եկեղեցվո հետևորդներ էին»:

Զարմանալի բառակապակցություն. ո՞ւր հասանք, որ Հայաստանում հայերը ո՛չ թե հայ քրիստոնյաներ են, ինչպես դարերով ընկալում, մտածում ու արտահայտվում էինք, և օտարներն էլ մեզ այդպիսին էին համարում և կոչում, այլ հայաստանյան բնակչության այսինչ տոկոսը «հետևում է Հայաստանյայց եկեղեցուն», իսկ այս ու այն տոկոսն էլ հետևում է... մորմոնների՞ն, Եհովայի վկաների՞ն, կամ դրանց նմանների՞ն ու նրանց թիվն էլ այսքա՞ն է:

Այսպիսի նահանջ ազատ, անկախ Հայաստանո՞ւմ, ուր խորհրդատիրության 70 տարիներից հետո հավատքի խոսքը, քարոզն ու գործն ազա՞տ է:

Դարերի ընթացքում ամեն տեսակ հալածանքների, ծանրագույն ճնշումների ենթարկված և մեծ չափերի անզոր պայմաններում գտնվող հայության համար հարց չկար, որ հայ ազգն ամբողջությա՛մբ հայ քրիստոնյա էր և խոսքը միայն ի՞նչ աստիճանի եկեղեցասեր լինելո՛ւն կարող էր վերաբերել, այլ ո՛չ թե նրան, թե հայը քրիստոնյա՞ է, թե՞ ոչ: Իսկ այժմ, երբ հայը (դարձյալ շեշտենք) ազատ, անկախ հայրենիքում է գտնվում, հոգևոր ու քաղաքական քաջությամբ համարյա լիովին վերապրելով խորհրդային 70 տարիները, համարձակորեն անկախություն հռչակեց և հայրենիքի կենսական մաս կազմող Արցախն իր անվտանգության որոշ գոտիով հանդերձ ազատագրեց, ա՛յս պայմաններում հարցականի տա՞կ է դրվում նրա հավատարմությունն իր հայրերի անձնազոհաբար, դարերով պաշտպանած, պահպանած հավատքին:

Սա եթե ամոթալի նահանջ չէ, պարտություն չէ, մի ուրիշ տեսանկյունով էլ այլասերում և ուրացում ու դավաճանություն չէ, հապա ի՞նչ է: Եվ կատարվում է ո՞ւմ, որո՞նց աչքերի առաջ:

- Եվ մարսվո՞ւմ է:

- Հապա ի՞նչ է լինում, մարսվում է, այն էլ՝ ուրախ ու զվարթ տրամադրությամբ, և ո՛չ թե ինչպես ժամանակին ասվել է «նահանջ առանց երգի», այլ՝ մարսվում է՝ ինչպես մեր երկրի նախագահներից մեկն էր ասում՝ «ըմբռնումով»: Ու եթե ըմբռնումով, ուրեմն անելիք էլ չկա՛...

- Եվ չի՞ արվում:

- Արվո՛ւմ է, բավականի՛ն, բայց…

Օ՜, հույս, բայց… ո՞ւր է: Ո՞ւր է արվածը պետք եղած էականի, բացի դրա նմանակումներից (իմիտացիաներից)…

Եվ ե՞րբ հնչի մեր ազգային հոգևոր ահազանգը, որ թո՛ւնդ գան սրտերը հավատարիմ հայերի:

19 - 12 - 2012թ., ժամը 23:30, Մոսկվա

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Երկար ժամանակից ի վեր հայությունը զուրկ էր ազգային (համահայկական) աշխարհիկ ղեկավարությունից ու կառավարումից: Եվ զուրկ էր ոչ թե ինքնակոչ և կամ հատվածականորեն ստեղծված ղեկավարությունից, այլ ազգայինո՛րեն ընտրյալ ղեկավարությունից, որը գործում է ազգային գիտակցությամբ, շահերով ու համազգային նպատակադրմամբ:

Եվ կարող է լինել նաև ա՛յլ՝ (թաքո՛ւն հարազատ) ղեկավարություն, որն ընտրյալ չէ, դրածո ու ենթակա է, բայց զգում, նպատակադրվում և գործում է ազգայնորեն: Դա հնարավո՛ր է, սակայն միա՛յն ա՛յն դեպքում, երբ Աստված միշտ ներկա է լինում այդպիսի ղեկավարների մեջ: Այսինքն, եթե նրանց հոգիները, սրտերը, մտքերը և ազգային գիտակցությունը համակված են Աստուծո հավատքով, (որը ճանաչել և ընդունում են Ավետարանով և Խաչով) և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Այդպիսի՛ ղեկավարությունից էլ հայությունը վաղուց էր զրկված: Եվ խորհրդային իշխանության օրոք թեև կար Հայաստան երկիր, իբր իր պետական դրոշով, զինանշանով ու հիմնով և ուներ ազգությամբ շատ հայ ղեկավարներ, սակայն, ըստ երևույթին, Հայաստանը չունեցավ ազգային հավատավո՛ր, ա-

վատքին ու ազգին ամենայն հավատարմությամբ (բնականաբար ոչ բացահայտ) լիարժեք մասշտաբով ծառայող ղեկավարություն: Պատճա՞ռը, որովհետև Հայաստանն ազատ չէր, և նրա ղեկավարությունը նշանակվում էր օտար ու անհավատ դրսից, ու այն հաշվետու և պատասխանատու էր այդպիսի դրսին, որի շահերի չափանիշներով մերժելի՛ էին այլ ազգի հավատարիմ անձինք, այլ ընդունելի էին ձևով ազգային, բովանդակությամբ իրենց անվերապահ ծառայողները (և սա, ի դեպ, բնորոշ է աշխարհիկ որևէ հոգեզուրկ պետության և հատկապես գերտերության՝ կայսրության համար...):

Մի ա՛յլ պատճառ. հայության երկարատևորեն զրկվածությունը ազնվականությունից, որի ազգային ծառայության կոչումն առաջացած է նախևառաջ հավատքից և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ կենցաղավարությամբ: Եվ այժմ էլ շատ դժվար է, որ հայությունը ունենա այդպիսի ղեկավարություն, բացի, եթե Արարիչ Հայրը (որ քարերից էլ կարող է Իրեն հավատարիմներ առաջացնել), դարձյալ ողորմի հայությանը և շնորհի նրան ազգին ու հայրենիքին տիրություն անելով ծառայող ազնի՛վ ղեկավարություն:

Եվ որպեսզի դա լինի (ինչպես և մեր ուրիշ կենսական կարիքների բավարարման) պայմանը նույնն է՝ պետք է փոխվենք: Փոխվենք ամենավերևից ներքև ու ամենաներքևից՝ վերև, որպեսզի տոգորվելով Աստվածաշնորհ ազնվությամբ՝ ի վիճակի լինենք առաջացնել ազգային էա՛պես անհրաժեշտ ազնվականություն (կամ «Հայ Ազգային Կրիտիկական Զանգված») և դրանից առաջացած հավատավոր, հմուտ, աշխատասեր և 100 % կոռումպազերծ ազգային ու պետական ղեկավարություն:

Երեքշաբթի 28 - 08 - 2017թ., ժամը 08:40

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԻԽՆԴԻՐՆԵՐԻՑ

Մենք, շատ հաճախ, Հակոբ Պարոնյանի խոսքերով ասած՝ «Հառաջ-հառաջ կբոռանք» ու այդպիսով թեև որոշ պատահական կածաններով անցնելիս որոշակի առաջընթաց արձանագրում ենք, սակայն գոյության գլխավոր ճանապարհներում մե՛րթ արագ, մե՛րթ դանդաղ «հետ-հետ կերթանք»-ը (մեր վաղեմի հետընթացը, բազմակողմանի կորուստներով) շարունակվում է:

Պատճա՞ռը. մեր ազգային, իսկ անկախությունից հետո նաև մեր պետակա՛ն կյանքի շեղումներն են:

Եվ դա շատ վատ է ազգի, երկրի, պետության ու պետականության համար: Ու այդ վատը խորանում և սաստկանում է, քանի որ այդ կորստաբեր շեղումի պատճառով հետընթացի կասեցման համար ոչ միայն համապատասխան ջանքեր ու միջոցներ չե՛ն ձեռնարկվում, անհատական, համազգային և պետական գործունեություն չի՛ ծավալվում, ու անհրաժեշտ պայքարն էլ չի մղվում, այլև որպես համապատասխան լրջության խնդի՛ր իսկ չի դրվում՝ գոնե տարբեր բարձր ատյանների ղեկավարությամբ, տարբեր հարթություններում քննարկելու, միջոցներ ձեռնարկելու և հետընթացը կասեցնելու համար:

Եվ այս ազգային ու պետական կորստաբեր վիճակը, որի հիմքում Աստուծո ճշմարիտ հավատքին հավատարմության ազգային երկարատև կորուստը կամ զգալի աղավաղումն է, հայ զանգվածների մեջ (տարբեր տեղերում, տարբեր չափով) առաջացնում է հայրենի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների, որով և պետության, Հայրապետության ու հայրենիքի հանդեպ վստահության, հարգանքի, նվիրվածության, պարտաճանաչության (էլ չասած հոգո՛ւ պարտքի մասին) և պատրաս-

տակամության խի՛ստ նվազեցում: Ու ա՛յս հանգամանքը, իր հերթին, հայ անհատի ու հայության մեջ չեզոքացնում է փրկության, վերականգնման, վերահաստատման ու վերելքի հույսը, կորովն ու ջանքերը…

Այս վիճակի շտկման համար ազգային ռեսուրսները թեև կան, սակայն դրանք լիարժեք չհետազոտված հանքերի ու ազգային ներուժի նման են, որոնց օգտագործման (շահագործման) համար հարկ կա ազգային ու զանգվածային հստակ (դժբախտաբար՝ մոռացված ու արդեն անսովոր, անծանոթ դարձած) ջանքերի, որոնք մեր այս վիճակում, բնականաբար, չեն կատարվում, որով և մեր անելիքները դատապարտվում են մնալու անկատար, իսկ կենսական կարիքներն էլ՝ չբավարարված:

Այսպիսով, հայ համաժողովրդական, պետական ու (որոշ տեսակետից անպայման նաև) Հայրապետական այս կենսական խնդրի կատարման համապատասխան պարտաճանաչումից, նպատակադրումից ու այդ ուղղությամբ անկեղծ կազմակերպվելուց հայտ է գալիս, բացահայտվում է մեր ազգային (բազմաբնույթ, բազմակողմանի) ներուժը և դրա օգտագործման նորոգ (բարդ, բայց հնարավոր) միջոցը՝ չթողնելով, որ «***բանը բանից անցնի»…***

Այսօրյա այդ միջոցը և հույսը Աստուծո՝ հայ ազգի ստեղծման օրից շնորհած Հայկյան ազատասիրությունը և 301 թվականին սրբագործված՝ մեր 17-դարյա ազգային-հոգևոր կառույց՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո դավանած հավատքն է, որից բխում է և որի վրա հիմնված է Հայ Ազգային Գաղափարախոսությունը, հայոց տոհմիկ բարոյական արժեհամակարգը և ըստ այնմ ապրելակերպը: Հավա՛տք, որը պատմական երկարատև պայքարում այսօր զգալիորեն նվազած, տկարացած լինելով հանդերձ՝ կարո՛ղ է մեր ***սրբացմամբ վերակենսալիցքավորել հայ կյանքն ու վերակիրառել*** իր զորությունն ու կարողությունը:

Եվ հայ եկեղեցին, պետությունը և ժողովուրդն այդպիսի՛ վերելքով է, որ կկարողանան վերափոխել ազգը՝ առաջաց-

նելով նաև այն կրիտիկական զանգվածը, որը թթխմորի (կորիզի) դերակատարությամբ կսկսի կենսաձևավորել մեր ազգի հոգեմտավոր վիճակը, որով և տարբեր կերպերով կառաջանա համապատասխան հոգեբարոյական զանգված ու դրանից առաջնորդություն՝ ի բազմակողմանի վերելք մեր ազգի, հայրենիքի, պետության ու պետականության:

Եվ ազգային այդպիսի՛ զարթոնքով է, որ հավատքով գաղափարականացած, իր հոգեբարոյական արժեքները վերաճանաչած, վերականգնած ու ըստ այնմ կենցաղով ապրող, գործող, պայքարող հայ ազգին նորից կդաշնակցի, կօգնի, կպաշտպանի և հաջողությունից հաջողություն ու հաղթանակից հաղթանակ կառաջնորդի Աստվածորդին՝ իր փրկարար Խաչով: Եվ դա կլինի, որովհետև շարունակած կլինենք Նրան ճշմարտապե՛ս պաշտել և Նրա պատգամներով ապրել ու գործել, ինչպես այդ արել են մեր ազգի մեծերը, սրբերը, նահատակները, մարտիրոսները...

Այսպիսով, ինչպես ասվել է, թե «Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ», այնպես էլ մեր ազգի բոլոր խնդիրներն ու գերխնդիրները լուծվում, բոլոր ծրագրերը կենսագործվում և բոլոր իղձերն իրականանում են, ընդամենը (թող դարձյալ նշվի) մեր ***մտայնության, գաղափարի, կենցաղի և գործերի հավատարմությամբ Խաչյալին:***

Կարո՞ղ է ազգն իր հոգևոր և աշխարհիկ ղեկավարության առաջնորդությամբ ***ու նաև օրինակով*** այդպիսի հավատարմություն ունենալ:

Անպայմա՛ն կարո՛ղ է, եթե իր մեջ լիովին չի հանգած և դեռ լուսարձակում է իր սո՛ւրբ նախնյաց ***սո՛ւրբ հավատքը:***

Ուրեմն՝ մեր խնդիրների ու «գերխնդիրների» կատարումն ուղղակի առնչվում է մեր Արարիչ Հոր ողորմածությանը, որ Նա մեզ շնորհ տա, որպեսզի մենք մեր հավատքի լիարժեք վերականգնմամբ վերասրբագործվենք այնպե՛ս, ինչպես ազգովին ու պետականորեն սրբագործվեցինք Իր Որդու երկրային ծննդյան 301-րդ տարեթվին՝ 17 դար առաջ:

- Իսկ մենք՝ բոլո՛ր, ի՞նչ ունենք անելու:

- Մեր խնդիր-պարտականությունն է մեր ազգի հարազատ ղեկավարության առաջնորդությամբ և նրանց ու մեր սուրբ նախնիների օրինակով, մեր անցած ճանապարհների խորթ նստվածքներից սրբվենք, մաքրվենք և մաքուր սրտերով ու գործերով դառնանք մեր Արարիչ Հոր՝ Աստուծո ազգ, ժողովուրդ ու պետություն:

- Ի՞նչ փառավոր նպատակ և հոգու պարտքի կատարում հայության և նրա Եկեղեցվո ու պետության կողմից՝ Արարիչ Հոր առաջ:

Փա՛ռք Նրան:

Կիրակի, 14 - 09 - 2014թ., ժամը 14:00

ՀԱՅԿԱԿԱՆ ԷԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐ
(Աննկատորեն հեռացող հայ կյանքից)

Հայ իրականությունում դարերի ընթացքում հատկանշական մի երևույթ արտահայտվում էր ***«հոգևորականություն և ժողովուրդ...»*** բառակապակցությամբ: Սփյուռքում այն կլանեց օտարությունը, իսկ Խորհրդային պայմաններում այդ բառակապակցությունն, իր բովանդակությամբ հանդերձ, ընդհա՛նրապես բռնահանված էր և չէր կարող հնչել, լսվել: Իսկ հետխորհրդային՝ ազատ ժամանակաշրջանում (որն ազատ է՝ անազատության մեջ. անազատություն, որի ստրկացնող աքցաններն աստիճանաբար լուռ ու շատերիս համար աննկատ սեղմում, ճնշում ու ցամաքեցնում են մեր ժողովրդի մեջ շատերի միտքը, սիրտը և հոգին), այդ երևույթն արտահայտվում է ***«հոգևորականություն և հավատացյալներ»*** բառակապակցությամբ:

Տարբերությո՞ւնը. տարբերությունը շեշտադրումն է, որ իբրև թե հայ ժողովուրդն իր ամբողջությամբ այլևս հավատացյալ չէ, այսինքն՝ հայության համար քրիստոնեությունն ***ազգա-***

յին ընդհանրական հավատք չէ: Այդ տրամաբանությամբ էլ շուտով նաև սխալ, հնացած ու այլևս առնվազն ձևական կարող է հայտարարվել Հայ առաքելական սուրբ եկեղեցվո գահակալին Ամենայն հայոց կաթողիկոս կոչելը, ինչպես և քրիստոսամերժները սխալ են համարում ***հայ հոգևորականությանը հայ ժողովրդի հետ միասնականությամբ առնչելը,*** քանի որ, ըստ իրենց՝ ո՞վ է հաշվել, ո՞վ գիտի, թե քանի հավատացյալ հայ է մնացել, երբ ակնհայտորեն հայերի մի մասն է միայն հավատացյալ քրիստոնյա՝ այն էլ Հայաստանյայց եկեղեցվո հետևորդ: Իսկ մյուս մասը (ըստ այդպես մտածողների) այլևս Հայաստանյայց եկեղեցվո հետևորդ հավատացյալ չեն:

- Հապա ի՞նչ են.

- Իբրև թե, Հայ ժողովրդի մի մասը՝ քրիստոնեական այլ հարանվանությունների, մի մասն այսպես կոչված աղանդավորական եկեղեցիների հետևորդներ են, իսկ մյուս մասն էլ ընդհանրապե՛ս որևէ կրոնի չի հետևում. անհավատ է, աթեիստ:

- Ու այդ հասկացողությունից ելնելո՞վ է, որ ասվում է. ***«հայ հոգևորականներ և հավատացյալներ»,*** *այլ ոչ թե՝* ***«հայ հոգևորականներ և ժողովուրդ»*** *՝ ցույց տալու համար, որ այդ «հավատացյալները» համայն հայությունը չէ: Ինչպես ամեն կերպ դրան և դեռ ավելիին ձգտում էին այլամետ հինգերորդ շարասյունն իր խարդավանքներով և բոլշևիկյան ու խորհրդային իշխանությունները պրոպագանդայով և բռնամիջոցներով:*

- Այո՛, ցավոք այդ է նպատակը:

- Իսկ ո՞վ է ասել, որ Հայաստանյայց եկեղեցվո հավատամքից շեղվածներն ու անհավատները հայ ժողովրդի մեջ մեծամասնություն են կազմում:

- Ընթացիկ երևույթներն ու դիտարկումներն են այդ ասում:

- Ահա ահազանգող պատասխան, որ մտածել է տալիս: Պետք է մտածե՛նք:

- Այո՛, գոնե մտածե՛նք, թե արդյոք ճի՞շտ է ասվածը: Ու եթե ճիշտ է, թեկուզև մասամբ, ապա մի՞թե հարկ չէ՝ անհապաղ

ու ամենայն ճշգրտությամբ անդրադառնալ ստեղծված վիճակին, լիովին բացահայտել, լուսաբանել դրա պատճառներն ու հավանակա՛ն հետևանքները որոշելու համար, թե ինչ պետք է անի հայ մարդը, հայությունը, պետության և Հայաստանյայց սուրբ եկեղեցվո առաջնորդությամբ, որպեսզի ***հայ ազգի հավատքի Աստվածաշնորհ լույսը,*** որ դարավոր խավար փորձությունների միջով անցկացրել են հայ ազգի մեծերը, սրբերը, նահատակները և հասցրել մեզ, այժմ չուրանանք կամ չանտեսենք՝ մեր շարունակական կուրությամբ կամ արտաքին, խորթ ազդեցություններով, այլ վերալուսավորյալ հոգով ու մտքով, խղճով և գիտակցությամբ, պարտաճանաչությամբ, պատրաստակամությամբ ու նաև հմո՛ւտ պատրաստականությամբ, վերալուսավորվենք՝ լիովի՛ն վերականգնենք մեր հայրերի սուրբ հավատը, որպեսզի հայ մարդու անձնական և ազգի հավաքական հայկականության ընթացքը շարունակվի՛ այդ կենարար լույսով: Որը նաև հօգուտ մարդկության է ու ամենաէականը՝ ի փառս մեր հավատքի Զորագլխի՝ Աստվածորդու:

11 - 01 - 1997թ., ժամը 11:30

ՎԵՐՋԻՆ ՀԱՇՎՈՎ ՈՎՔԵ՞Ր, Ե՞ՐԲ

Ի՞նչ հնարավորություններ ունենք կենտրոնանալու այն պատմական, առնվազն Արևմտյա՛ն զարգացումների վրա, որ հատկապես 19-րդ դարից սկսած, հայության մեջ ևս, մասնավորապես որոշ խավերի մեջ շեղում առաջացրին (կամ եղածը մեծացրին) հոգևորից դեպի աշխարհիկը: Եվ հայ քաղաքական, ընկերային ու մշակութային կյանքի և հատկապես գրականության մեջ աստիճանաբար սկսեցին երևալ սեկուլյար հայացքները, զգալի դարձան գռեհիկ նյութապաշտությունը, հայտնի և թաքուն քրիստոսամերժությունը, իսկ խորհրդային իշխանության շրջանում ավելի դաժանացավ պայքարը Աստուծո

հավատքի և դրանից բխող և դրա վրա հիմնված ազգային գաղափարականության, բարոյականության և կենցաղավարության դեմ: Եվ այն, ինչ շուրջ երկու հարյուրամյակ առաջ սկսեց ակնհայտ դառնալ և խորհրդային իշխանության յոթանասուն տարիներին ավելի սաստկությամբ ընթանալ՝ ներառելով հայ երկու-երեք սերունդ, ու արտահայտվեց կրթության, գրականության, արվեստի և այլ բնագավառներում, ծանրորեն անդրադարձավ ազգային կյանքի վրա՝ դառնալով խորթ դաստիարակություն ոչ միայն ծանր պրոպագանդայով, այլև հրով ու սրով: Եվ պետք է նաև շատ գործնակա՛ն իմաստով և նպատակով պատկերացնել ու հաշվարկել, թե ստով, խարդախությամբ ու դաժանությամբ հայության և հատկապես մեր հայրենիքում տարածված ու ամրապնդված այդ չարիքը որքա՞ն ժամանակում և ինչպե՞ս կարող է կորցնել հայ սերունդների վրա իր ազդեցությունը: Հազիվ կարելի է հուսալ, որ այն ինքնըստինքյան կփոխվի, կվերանա մանավանդ, որ շատ շահագրգիռ կողմեր նոր թափով և նոր մեթոդներով ջանում են ավելի՛ տարածել ու խորացնել անհավատության չարիքը, որ մայրն է բոլոր ուրիշ չարիքների... իսկ նոր երևույթները ցույց են տալիս, որ աշխարհատարած մեր ժողովրդի և բազում խնդիրներ դիմագրաված մեր հայրենիքի այսպիսի՛ նախահարձակման դեմ պաշտպանությունը հետզհետե ոչ թե զորանում, այլ տկարանում է:

Հետևապես՝ էական հարց. ովքե՞ր պիտի ծրագրեն ու իրագործեն այդ ուղղությամբ պատշաճ պաշտպանություն ու անհապաղ հաղթանակի ապահովում, քանի դեռ անհավատության կամ կեղծ, ձևական, մակերեսայի՛ն հավատքի (որ ավելի վատ ու ավերիչ է) վարակը չի կլանել մեզ և մեր մատաղ սերնդին:

01 - 11 - 2014թ., ժամը 08:30

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՏԵՂՅԱԿՈՒԹՅՈ՞ՒՆ

Հայոց կրթությունը, մշակույթը և մասնավորապես տեղեկատվությունը՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցու եթե ոչ առաջնորդությամբ, ապա գոնե ամենասերտ գործակցությամբ հային ու հայությանը (անկախ տարիքից, սեռից, սոցիալական վիճակից և գտնվելու վայրից) հո՛ւյժ նպատակահարմար է, որ ուսուցանեն ճանաչել Աստուծո խոսքը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով:

Օրինակ՝ անհնա՛ր է համարել, որ հայ ազգի հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունները կատարում են իրենց հիմնական պարտականությունները, եթե հայն անհատապես և հայությունը հավաքականորեն ծանոթ չեն, չեն ուսուցանվում և չգիտեն կամ ծանոթ են, բայց չեն հասկանում Փրկչի խոսքերը, պատգամները, և ըստ այնմ՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո Հավատամքը:

Եվ սա լոկ տեղեկության պակաս չէ՛ (որը միշտ էլ ինչ-որ չափով լինում է), այլ տեղեկանալ է, թե մեր կյանքում ի՞նչ պիտի անենք, ինչպե՞ս պիտի անենք ու ի՞նչ, ինչպե՞ս երբե՛ք չպետք է անենք, որպեսզի ապահո՛վ լինենք, կենսունա՛կ լինենք, զարգանանք, աճենք, բարգավաճենք մեր սերունդներո՛վ հանդերձ ու նաև հավիտենակա՛ն կյանք ունենանք:

31 - 05 - 2006թ.

ՀԱՎԱՏՔՈՎ՝ ԿՐՈՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ճշմարիտ հավատքի վրա հիմնված կրոնն ու եկեղեցին՝ Ավետարանով և Խաչով Աստուծո հավատքն ուսուցանողը, տարածողը, ամրապնդողը և կյանքի ապրում դարձնողն է:

Մինչդեռ հավատքից բխող և դրա վրա հիմնված ազգի գաղափարախոսությունն այդ հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է, այսինքն՝ կյանքում իր բոլոր ազգաշեն հետևանքներով դրանց կիրառությունն է պետության միջոցով (պետության ու եկեղեցվո համերաշխ գործակցությամբ): Իսկ պետության բացակայության պայմաններում պետական գործառույթները ստանձնածների՝ եկեղեցվո, իշխանական, ազնվական դասի, պետական մտածելակերպով մտավորական խավի, քաղաքական կազմակերպությունների և այլնի միջոցով:

Հայաստանյայց եկեղեցու՝ հայ ազգի մեջ քրիստոնեական հավատքի ուսուցումն ու նաև որոշակի կիրառումը որպես ազգային կրոն՝ պատմության ընթացքում ունեցել է վերիվայրումներ: Սակայն վերջին շուրջ հարյուր հիսուն տարիներին Հայոց ազգային եկեղեցու կոչումից բխող այդ ծառայությունը թուլանում է: Վերջին շուրջ քսան տարիների ընթացքում թեև թվում էր, թե նախադրյալները դրական են, և եկեղեցին իր կոչումից բխող պարտականությունը պիտի կարողանար լիովին վերականգնել, պատշաճորեն կատարել, բայց փաստերը դա չեն ապացուցում:

Ինչ վերաբերում է Հայ Ազգային Գաղափարախոսության քաղաքացիականացմանն ու քաղաքականացմանը պետության

միջոցով (որն այժմ փառք Աստուծո ունենք, և փոխարինողի կարիքը չկա), այդ գործընթացը նույնպես շատ թույլ է, եթե ընդհանրապես այն կա: Նորանկախության ժամանակաընթացքի որոշ հատվածներում նույնիսկ մեր հավատքի քաղաքացիականացման և քաղաքականացման գաղափարախոսության հակառակն էր կատարվում, որը հիմա էլ դեռ լրիվ չի՛ դադարել: Ափսոս, շատ ափսոս... Ի՞նչ պետք է անել... Ովքե՞ր պետք է անեն... Ովքե՞ր են պարտավոր սկսել անել...

19 - 10 - 2010թ., ժամը 20:30

Ի՞ՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ Է ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում հոգևոր կյանքի վիճակը շատ ընդհանրացած հարց չէ, սակայն դրանից դրա կարևորությունը չի նսեմանում: Ու առավել կարևոր է այն, թե Հայաստանում հոգևոր կյանքն արդյոք իր բնականո՞ն վիճակում է, այն ազդված չէ՞ օտար, խորթ, նյութապաշտական ուսմունքներից, հայացքներից, սովորություններից, ապրելակերպից: Եթե մեր երկրի (նաև համայն հայության) հոգեկանության մեջ տեղի է ունեցել խորթ ներթափանցում, ապա հույժ կարևոր է գիտենալ, թե ի՞նչ աստիճանի է այն հասարակության մեջ և հատկապես ղեկավարության, մտավորականության ու նոր սերնդի մեջ: Եվ ո՞ր կողմերից, ի՞նչ ուղիներով, միջոցներով ինչպե՞ս է կատարվում այդ այլասերության ներթափանցումը:

Ու այժմ, ներկա իրականությունում, հայ հասարակության և վերոնշյալ խավերի մեծ մասը հոգևոր կյանք ասելով ի՞նչ է հասկանում ու ինչքանո՞վ է այդ հասկացողությունը համապատասխանում հայոց ճշմարի՛տ հավատքին ու հայ ազգային տոհմիկ՝ մեր հոգևոր կյանքին: Ինչի՞ց է բաղկացած ներկայիս

հոգևորն ու ինչպե՞ս է արտահայտվում, դրսևորվում ու գործում այսօրվա մեր ղեկավարության, մտավորականության և նույնիսկ մեր կղերականության և իհարկե նաև ժողովրդի լայն շրջանակների մեջ. եղե՞լ է հոգևոր կյանքի ընկրկում, նվազում և նույնիսկ այլասերում, թե՞ ոչ: Եթե այո, ի՞նչ չափով է եղել ու ինչ հետևանքներ է ունեցել, և գուցե շարունակում է ունենալ:

Եվ ինչքանո՞վ հայ հասարակության մեջ կրթությամբ, գիտությամբ, մշակույթով, արվեստով, գրականությամբ և ղեկավարության, կղերականության ու մտավորականության միջոցով, ներառյալ նրանց կյանքի օրինակով, դրական անդրադարձ է լինում հայ հոգևոր կյանքի մեջ, բացատրելով, պարզաբանելով դրա էական նշանակությունը ազգի, երկրի և պետության ապահովության, զարգացման, զորացման ու համընդհանուր վերելքի համար:

Այս հարցերի համարյա անպատասխան լինելն արդյո՞ք անհրաժեշտություն չեն առաջացնում ստուգելու մեր ազգային հոգևոր, որով և մեր ազգային ամբո՛ղջ կյանքի ընթացքի ուղղությունը, ապրումի բարոյական որակը, կենսունակության մակարդակը, որից կախված է մեր մարդկային-ազգային գոյության նախապայմանը, մեր սերունդների ինչպիսին լինելը կամ ինչպիսին չլինելը:

Եվ այս հարցադրումների մասին ի՞նչ է ասում մեր հոգևոր սահմանադրությունը՝ Տիրոջ Ավետարանը և ըստ այնմ ի՞նչ են ասում մեր նախնիների՝ մեր ազգին սուրբ ժառանգություն թողածներից փրկված հազարավոր մատյանները, որոնք ամփոփված են Հայաստանի Հանրապետության, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի և Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի մատենադարաններում: Չէ՞ որ այդ մատենադարանները չպե՛տք է դիտենք որպես ցուցասրահներ և հյուրերին ու զբոսաշրջիկներին տպավորելու միջոց (թե տեսեք ովքե՞ր ենք եղել մենք, երբ դուք դեռ…), այլ մեր ազգային կենսական հարցերի պատասխաններ պարունակող և շնորհ ու իմաստություն հաղորդող աղբյուրներ:

Թող ներվի, եթե վերջին հորդորն ու համեմատությունը կարող է մի քիչ անհամեստ թվալ: Բայց, ի վերջո, դրա չհնչելն էլ, հավանաբար կլինի մեղսակցություն ու զանցանք...

Բարձրյա՛լը բոլորի՛ս գթա, ողորմի ու ների...

22 - 11 - 2012թ., ժամը 05:15

ՄԵՐԺՈՒՄ ԵՎ ԽՈՒՍԱՓՈՒՄ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՅԼԱՍԵՐՈՒՄԻՑ (ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻՑ)

Հայ ազգային հոգեբարոյագիտության ու ազգային քաղաքագիտության համաձայն (ցարդ պատշաճորեն չուսումնասիրված և չգործարծված), հայության՝ աշխարհում բնականոն գոյության ու զարգացման համար անհրաժեշտ հայի մարդկայնությունը՝ լիարժեք մարդ լինելը, որով և իր ազգի, հայրենիքի և պետականության հանդեպ նրա մարդկային ու ազգային Աստվածապատգամ սերը, հավատարմությունն ու կյանքում դրանցով և դրանց համար ապրելն ու գործելն սկսվում է հավատքով՝ ճանաչված, ընդունված և հայկականության ապրում դարձած Ավետարանի իմաստությամբ, գիտությամբ և Խաչի խորհրդով ու զորությամբ, որպես ***Աստվածաշնորհ մարդկային ու ազգային սուրբ արժեք:***

Սակայն այս էական ճշմարտության գիտակցումն անցյալի խորքերից մեզ չհասավ իր լիարժեք կիրառությամբ. իսկ այն կիրառությունը, որ հասավ, մեր սերնդի իսկ օրերում, խամրում, առավել արժեզրկվում, հետին պլան է մղվում և նույնիսկ այլասերվում ու կորչում է: Իսկ դրանից էլ ավելի վատն ու վնասակարն այն է, որ շատ հայեր իրենց մտայնությամբ, գաղափարով, վարքով, բարքով և գործունեությամբ, իրենց «բարեկամ քաղաքակիրթների, արդիականների, զարգացածների» օրինակով և դրդմամբ կամա թե ակամա հակառակվում են իրենց այդ

սուրբ արժեքին և նույնիսկ ինչ-որ չափով ու ձևով թշնամի դառնում:

Շատ դեպքերում հայերի մեջ տեղի ունեցող այդ հոգեգաղափարական արժեզրկումը, որով և բարոյական այլասերումը (դեգրադացիան) սկզբում լինում է համարյա աննկատ, առանց զգացվելու. տարվելով օտարածին, սին գաղափարներով ու նաև ժամանակակից, «արդիական» (մոդեռն), մոդայիկ, «իրապաշտ», երբեմն էլ «հեղափոխական» երևալու ցանկությամբ: Եվ այդպիսի հայերը հեռացել ու հեռանում են հավատքից, կրոնից և դրանով նաև Աստուծո առաջ ազգի և հայրենիքի հանդեպ պատասխանատվությունից, պարտաճանաչությունից: Եվ դա հաճախ պատճառաբանում են իրենց կարծիքով այս կամ այն կղերականի, պետական գործչի, մտավորականի և կամ որևէ հայտնի մարդու քաղաքացիական անբարեխղճությամբ, կոռումպացվածությամբ կամ ախտավոր վարքուբարքով, բարոյական արատներով և կամ նրա հանրային անպարկեշտ կեցվածքով, վերաբերմունքով: Կամ էլ պատճառաբանում են այլ երկրների, այլ մշակույթների, այլ ապրելակերպի կամ հեղափոխությունների օրինակով՝ իբրև առաջավոր, ժողովրդավար, արդար ու օգտակար, որն արժե ընդօրինակել:

Ու Աստուծո հավատքից, կրոնից, եկեղեցուց, ազգային կյանքից բողոքները և նույնիսկ չարախոսությունները հետո տարածվում են Աստվածորդու «վրա»՝ մոտավորապես ասելով. «Գերբնական մի ուժ, իհարկե, կա տիեզերքում, որին ուզում ես՝ Աստված անվանիր, ուզում ես՝ այլ անվամբ կոչիր, բայց որ Նա Որդի ունի, Ով Սուրբ Հոգով ծնվել, մարդացել, ուրիշներից տարբեր կյանքով ապրել և մահանալուց հետո կենդանացել, հարություն առել ու համբարձվել է երկինք, Արքայություն և նորից գալու է մարդկանց դատն ու դատաստանն անելու, և այլն, և այլն, սրանք գրագետ մարդու մտքեր չեն, այլ հետամնաց, խավարամիտ կամ էլ ժողովրդական զանգվածներին խաբելու, իսկական կյանքից ապակողմնորոշելու, հաճույքներից զրկելու և նրանց վրա տիրելու, կեղեքելու, շահագործելու նպատակով սուտ հնարքներ են»:

Ուշագրավ և հայի համար կարևոր է այն հանգամանքը, որ այդպես մտածողների, արտահայտվողների ու գործողների մեջ դեռևս կան այնպիսիները, որոնք իրենց ներկայացնում են (գուցեև դրան անկեղծորեն հավատում են) որպես ազգասերներ, հայրենասերներ, նաև մարդասերներ: Բայց ինչպես վերը նշվեց, կյանքն ապացուցո՛ւմ է և մի՛շտ կապացուցի, որ Աստուծո հավատքից հեռացողների հաջորդ վիճակը հենց մարդասիրությունի՛ց զրկվելն է, որից հետո նաև ազգասիրությունից ու հայրենասիրությունից զրկվելը:

Եվ աստվածամերժությամբ՝ Ավետարանի և Խաչի մերժումով սկսվում են հայ մարդու հավատազրկումը, հոգեղենության, գաղափարականության ու բարոյականության գահավիժումը և նրա այլասերումը՝ ի կորուստ հենց ա՛յն մարդասիրության, ազգասիրության ու հայրենանվիրումի գաղափարների, որոնց իբրև թե ջատագով և որոնց համար իբրև պայքարող է ինքը:

Եվ դա լինում է, որովհետև այդ իսկակա՛ն ջատագովության և պայքարի արդյունավորման համար ***օրինաչափորեն*** անհրաժեշտ ազնվությունը, հավատարմությունը, հետևողականությունը և նվիրումով հարատև ծառայությունն ու ամենայն նման առաքինությունները լինում են միայն Անմահ Հոգու հավիտենական հատուցման հանդեպ քրիստոնեական ***անսասա՛ն հավատքով:***

Չկա՛ հայի մեջ այդ հավատքը, ուրեմն՝ չկա՛ նաև որևէ բան, որը բարի է, օգտակար և մանավանդ՝ հարատև:

Սա՛ է հասկացել հայ մարդը դարերի ընթացքում, սա՛ է ապրեցրել նրան որպես մարդ և որպես հայ, և սա՛ է առանցքը Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված ***Հայ Ազգային Գաղափարախոսության,*** որով տոգորված հայի կյանքն ու գործունեությունը, հակառակ բազում, երկարատև ու ամենասարսափելի դժվար անցքերի, մինչև այսօր ապահովեցին ***հայի գոյությունը:***

Որպեսզի այդ ***գոյությունն*** առողջ պահենք, զորացնենք, զարգացնենք, հարստացնենք, վեհացնենք ու արժանավայել վիճակում փոխանցենք մեր թոռներին, և նրանք էլ՝ իրենց թոռ-

ներին՝ սերունդներին, ապա ***անխախտ օրինաչափությամբ անհրաժեշտ է,*** որ.

- ազա՛տ լինենք իրակա՛ն ազատությամբ՝ մեր քրիստոնեական հավատքով,

- գաղափարակա՛ն լինենք իրակա՛ն գաղափարով՝ մեր Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է մեր այ՛դ իսկ հավատքի վրա,

- ապրե՛նք ոչ թե անբարոյակա՛ն մոդայիկ, այլ մարդկային-ազգային տոհմիկ բարոյականությա՛մբ մոդայիկ կյանքով:

Եթե դրանք մոռացել ենք, պետք է հիշենք:

Եթե չգիտենք, պետք է սովորենք:

Եթե պատասխանատվություն, պարտաճանաչություն և պատրաստակամություն դեռ մնացել է մեր մեջ մեր մարդկային-ազգային գոյության համար ***այդ անհրաժեշտության*** նկատմամբ, ապա դրա ***օրինաչափությունը*** հիշելը և կամ սովորելն ու կյանքում կիրառելը հիմնական ***նախապայման է:***

Այդ նախապայմանը կկարողանանք կատարել Աստուծո օգնությամբ: Ու այդ մենք հավատքով կանենք նախևառաջ Նրա փառքի համար:

Առանց հավատքի ամեն ինչ ունայն է, հավատքով՝ իմաստալի ու անանց:

Փա՛ռք այդ ***օրինաչափությունն ստեղծողին***: Հավատա՛նք Նրան, հավատարի՛մ լինենք Նրան, ընթանանք Նրա շավիղներով, ու մենք էլ փառավորվենք այժմ, մեր օրերում և հավիտյանս:

Ամեն:

Կիրակի, 05 - 08 - 2001թ., ժամը 23:30

Ո՞Ւ՞Մ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ, ԻՆՉՊԵ՞Ս ՈՒ ԵՐԲ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Չարը հարվածում է հոգեկանի, գաղափարականի և բարոյականի արհամարհումով: Կռիվը շարունակվում է: Չարի հարձակումները նվաճում են ժողովուրդների գիտական, կրթական, մշակութային և տեղեկատվական տարածքը՝ ներթափանցելով և գրավելով հանգուցային կառույցների ղեկավար պաշտոնները:

Արևմտյան հոգեբարոյական մթնոլորտը հարաճունորեն աղարտվում է ու այդպես ներթափանցում և վարակում է համարյա ամբողջ աշխարհի կյանքը:

Չարի ամենաազդեցիկ նվաճողական զենքերից է կոռուպցիան՝ բազմաբնույթ, բազմապիսի, հետևողական և տոտալ: Այդպիսի կոռումպացումն սկսվում է հոգևոր, գաղափարական և բարոյական արժեքներից: Այդ բոլորի կոռումպացման ամենանենգ խտացումն ուղղված է քրիստոնեական հավատքի դեմ: Հատկապես Ավետարանի վարդապետության, Խաչի խորհրդի, հավատքի հարազատ, հավատարիմ և կարող հոգևորականների, գործիչների, հետևորդների և մատաղ սերնդի դեմ: Ուր որ քրիստոնեական հավատքը զորեղ է և գործով կենարար, այնտեղ գրոհն ավելի զորեղ ու նենգաբար է կատարվում: Շատ տեղերում այդ գրոհների դեմ պաշտպանությունը տեղի է տվել արդեն, շատ տեղերում էլ միայն նահանջում է առայժմ: Եվ այդ իրավիճակի լրիվ վտանգը միշտ չէ, որ ակնհայտ է: Երբ այն երևում, զգացվում է, արդեն ուշ է լինում դրան չենթարկվել: Շատերը նույնիսկ գերվելուց հետո էլ չեն տեսնում իրենց հոգեբարոյական ստրկացումն ու ինքնության կորուստն ու առավել ևս

ոչ մի բան չեն կարողանում անել, բացի հանձնվելը, ի կորուստ տրվելը:

Հայության տարբեր հատվածներն այդ պատերազմի տարբեր գոտիներում տարբեր չափերով են ազդվում՝ մարդկային ու ազգային իմաստով: Իսկ Հայաստանի վրա վաղուց սկսած հարձակումներն ավելի սուր, բարդ ու համընդհանուր ձև են ստանում:

Դրանից երկու եզրակացություն. մեկը, որ ազգը և ղեկավարությունը լրիվ չեն տեսնում ու ըմբռնում կատարվածը, դրա վնասը և դեռ ըստ այնմ հետևանքները:

Երկրորդ (հենց առաջինի իսկ պատճառով) հարկ եղած միջոցները ձեռք չեն առնվում, ո՛չ ահազանգելու, զգուշացնելու համար, ո՛չ էլ պաշտպանվելու և հակահարձակվելու համար:

Եվ էական հարց. այդպիսի կոռուպցիոն վարակը չեզոքացնելը, դրա կորըստաբեր վնասներից պաշտպանվելն ու ազատվելը մեր ազգի ու հայրենիքի ո՞ր կառույցների պարտականությունն է: Ո՞վ, ովքե՞ր են պատասխանատու ազգի հոգեբարոյական և գաղափարական անաղարտության պաշտպանման համար: Ինչո՞վ, ինչպե՞ս, ե՞րբ պիտի պատվով, խղճով, գիտակցությամբ ու պատասխանատվության բարձրագո՛ւյն զգացումով լիարժեքորեն կատարվի այդ պարտքն ու պարտականությունը...

Այս հարցերի պատասխանները որտեղի՞ց պետք է հնչեն հայ իրականությունում: Ու եթե այդ պատասխանները չկան և ըստ այնմ ոչինչ էլ չի՛ պատրաստվում անել, դա ի՞նչ է նշանակում, և ինչպիսի՞ն կարող են լինել դրա հետևանքները հայության մարդկային-ազգային գոյության համար: Ինչպիսի՞ն կլինի հայ նո՛ր սերունդը՝ հայ ազգի ապագան: Եվ դա ինչպե՞ս կգնահատվի հայ մեծերի, սրբերի, նահատակների հոգիների կողմից. ո՛ւ Արարիչ Հո՛ր կողմից:

Ինչպիսի՞ն կլինի հայոց հոգիների վիճակը…

Երբ ազգն ու հայրենիքն այսպիսի հեռանկարի հավանականության առաջ են գտնվում, հայ պետությունն ու եկեղեցին կարո՞ղ են միմյանցից գործնականապես անհաղորդ ու անջատ

լինել, փոխանակ միասի՛ն և համա՛յն հայությունն էլ իրենց միացրած ազգի ու հայրենիքի Վարդանանց նո՛ր պաշտպանության ու հաղթանակի կազմակերպման վրա աշխատեն: Ազգովին, սիրտ սրտի, օրնիբուն, ամբողջ հոգով, քաջությամբ և հմտությա՛մբ աշխատեն: Ու այնժամ Տերն էլ կօգնի, որով և ամեն վտանգ կկորչի, հայրենիք Հայաստա՛նը կծաղկի, կզարդարվի, ազգն Հայկազյան, կօրհնվի, կսրբվի և իր արժանացած բարձունքից՝ համա՛յն մարդկությանը եղբայրաբար օգտակար կլինի:

Եվ կցնծան հոգիները մեր նախկին ու նոր հերոս նվիրյալների:

Եվ իր սիրեցյալ հայ ազգից կգոհանա Արարիչ Հայրը երկնքի ու երկրի:

05 - 01 - 2016թ., ժամը 20:35

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՅԼԱՍԵՐՈՒՄԻՑ

Ամբողջ աշխարհում, սակայն, ըստ երևույթին, հատկապես մեզ առավել առնչվող աշխարհամասերում՝ Եվրոպայում, Եվրասիայում, Մերձավոր Արևելքում, Ամերիկաներում և, դժբախտաբար, դրանց մեջ նաև մեր հայրենիք Հայաստանում թևածում է մի հիվանդություն, մի վարակ, որը համաճարակային բնույթ է ստացել և հարաճունորեն ախտահարում, ճարակում է մարդկանց, և հա՛յ մարդկանց հոգեկանությունը, որով և գաղափարականությունն ու բարոյականությունը և աղճատում, քայքայում է նրանց կենսակերպը:

Մարդկանց, հասարակությունների, երկրների մեջ տարածվող այդ նախնական ու հիմնական վարակի հարուցիչը, որը հավատքի անբավարարությունն է, առաջացնում է հավա-

տազրկություն, դրանով՝ գաղափարազրկություն ու բարոյազրկություն, որով և խախտվում է մարդկության, հետևապես և ազգերի, ժողովուրդների, հասարակությունների մարդկայնությունը՝ իր բնությամբ, բնազդով, զգացումներով ու գիտակցությամբ՝ (խիղճ, անմեղություն, ազնվություն, բարություն, գթասրտություն, արդարամտություն և սեր. սեր դեպի մերձավորն ու նաև ամեն «հեռավորը», որ Աստվածաստեղծ է). այդ բոլորը ներկայացնելով որպես կեղծ, ձևական ու անբովանդակ:

Եվ մարդը, հասարակությունը, համայնքը, ազգն ու ժողովուրդը, այդ կորուստներով՝ իրենց էության վարակամերժ կարողության խախտումով («իմունազրկմամբ») վարակվում, տկարանում, դառնում են անկենսունակ, էականի հանդեպ անընկալունակ, ու ամուլ, անկարող հոգևոր, գաղափարական, բարոյական «կենսաբեղմնավորման» համար, որով և հարաճունորեն կենսազրկվում են՝ դառնալով անպաշտպան ու ենթակա պղծվող միջավայրի ամեն տկարացնող, չեզոքացնող ու մինչև իսկ զրոյացնող ազդեցություններին: Եվ որպես մարդկային հասարակություն դառնում են անընդունակ պարզ ինքնապաշտպանության, անընդունակ ազատ ու ինքնակամ լինելու և չարի գործիք չդառնալու՝ ի վնաս, կորուստ թե՛ իրենց, թե՛ յուրայինների, հարազատների և թե՛ այլոց համար: Այս վարակիչ հիվանդության (որը հարանման է ՄԻԱՎ-ի, անգլերեն AIDS-ի, ռուսերեն СПИД-ի) հակիրճ բնորոշումը հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ կարողազրկումն ու դրանց անդամալուծությունն է:

Ու եթե աշխարհի նյութապես հարուստ ու առաջադեմ երկրները, միջազգային կարող կազմակերպությունները, անհատները, միությունները միլիարդավոր դոլարների «մարդասիրական» ներդրումներ են կատարում, որպեսզի բուժում գտնեն ՄԻԱՎ-ի դեմ, և որպեսզի դրանով մարդկանց, հատկապես երիտասարդների նորանոր զանգվածներ չվախենան արատավոր կյանք վարելով վարակվելուց, իմունազրկվելուց (քանի որ իբր դրա դեմ արդեն դարման կա), ու եթե Հայաստանում էլ այդ գործընթացի նախանշաններն այս կամ այն

ձևով և չափով ի հայտ են գալիս, ապա այդ ամեն տեսակ «մարդասերներն» ու «բարերարները» ո՛չ միայն անհոգ են հոգեբարոյական և գաղափարակա՛ն վարակների բուժման համար, այլև ուղղակի կամ անուղղակի միջոցներով խանգարում կամ առնվազն ապաքաջալերում են այդ ուղղությամբ նպատակներն ու կատարվող ջանքերը:

Ուրեմն՝ ի՞նչ է, մնում է «Բարի նպատակի, բարի կամքի աշխարհազո՞ր» կազմվի, եթե դեռ ոչ ամբողջ աշխարհում, ապա գոնե մեր ազգի մեջ և մեր հայրենիքո՞ւմ: Եվ դա, գուցե, առանց ֆանֆառների՞, բայց անպայմա՛ն վճռական, հետևողական ու հարատև գործունեությա՞մբ... Ու երկնային օգնությա՞մբ...

Տերը մեզ ու բոլորին հասնի:

Կիրակի, 09 - 10 - 2003թ., ժամը 09:45

ԲԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔ՝ ՀԱՎԱՏՔՈՎ

Ինչպես ամեն ինչ, նույնպես ու առավե՛լ ևս գիտությունը, կրթությունը, ուսումն ու մշակույթը հավատքի բեղմնավորմամբ են բարի արդյունք տալիս: Առանց հավատքի, Սուրբ Հոգու ներկայության ու ներգործության, ազգի, երկրի ուսումը, գիտությունը, մշակույթը, արվեստը, ճարտարապետությունը և նույնիսկ լրագրությունը անպտուղ, վայրագ, պիղծ և կորստաբեր են լինում...

Սեկուլյար մարդկության՝ հավատքի ուրացումը և դրա նկատմամբ փաստորեն թշնամանքը՝ արտահայտված (տարբեր «իզմերի») մեծագույն խաբկանքով, թե բացարձակ ճշմարտություն և բացարձակ սխալ չկա, կործանարար է:

Հայությունը երկար ժամանակից ի վեր հարձակումների է ենթարկվում իր մարդկային ու ազգային գոյության հիմքերը

քայքայող նաև աստվածամերժ գաղափարների՛ կողմից, միջոց և հայությանը թելադրում և տարբեր ձևերով ու կերպերով նաև ստիպում, պարտադրում էին (ու այժմ էլ դա արվում է «փափուկ բարձի» տարբերակով), իրենց քաղաքական, հասարակական, մշակութային և կենցաղավարական կեղծ ու արատավոր չափանիշները, կանոնները ներմուծելով մեր մեջ:

Եվ մենք հարաճունորեն «կուլ» ենք տալիս այդ «շաքարածածկ» թույնը, այժմ գովազդված և հաճախ «նվիրաբերված» որպես մարդասիրական և կամ տեխնիկական օգնություն...

Մենք տեսնում և զգում ենք մեր ազգային-հասարակական ու պետական օրգանիզմի հիվանդագին խմորումները՝ վարակային ներթափանցումը՝ հարազատության, առաքինության, հավատարմության, պարտաճանաչության ու նվիրումի ***անբավարարվածությունը, պակասը,*** իրենց եթե ոչ բոլոր, բայց բավական որոշակի հետևանքներով: Բայց լավ չե՛նք տեսնում, լավ չե՛նք զգում այդ ախտահարման հարուցման աղբյո՛ւրը, պատճառը (նպատակը) և բոլոր հետևանքները...

Մեր ազգին, մեր պետականությանը և պետական կառույցին դեռևս պակասում է համակարգված հոգեկանությունը, գաղափարականությունը և բարոյականությունը, ինչպես նաև պակասում է դրանց համակարգված պաշտպանությու՛նը այն ժամանակ, երբ ազգի և պետության համար առանց դրանց շա՛տ դժվար ու ինչ-որ տեղ նաև անհնարի՛ն է պաշտպանվել մեր դեմ մասնագիտացած, համակարգված, զորեղ ու ազդեցիկ միջոցների գործադրմամբ կատարվող հարձակումներից... Բացի, եթե Երկնային արքայությունը չողորմի ու պաշտպան չկանգնի իրեն դարձյա՛լ հավատարիմ ու սիրեցյալ դառնող հայ ազգին, ինչպես դարերի ընթացքում և մինչև հիմա արել է...

Ուրե՞մն: Հայոց ազգային և պետական (իրապե՛ս լիարժեք) ռազմավարական նպատակի կենսագործումն սկսվում է ***հավատարմությամբ մեր քրիստոնեական հավատքին, լինելով Երկնքի արքայությանը՝ երկրի վրա Նրա անվերապահ ու հավատարիմ դաշնակիցը:***

Հինգշաբթի, 16 - 04 - 2009թ.

ԻՍԿ ՀԻՄԱ՞

Հայ եկեղեցին, հայ կղերականությունը, պատմության երկարատև ընթացքում ազգի դիմագրաված բոլոր տեսակի դժվարություններում, բոլոր տեսակի ճգնաժամերում հայ ժողովրդի հետ է եղել, կիսել է նրա դիմագրաված բոլոր դժվարություններն ու ցավերը և դրանք վերացնելու գլխավոր կռվանն է եղել:

Իսկ հիմա՞. վերջին ժամանակաշրջանում մեր եկեղեցին, կղերականությունը կիսո՞ւմ է հայ ազգի կրած դժվարությունների ու վտանգների անձկությունը, առաջին շարքում աշխատո՞ւմ է, պայքարո՞ւմ է դրանց վերացման և հայության տարբեր խնդիրների կատարման համար և առաջին հերթին այդ խնդիրների կատարման նախապայման հանդիսացող հայության՝ հոգեկան և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ կենցաղի անաղարտության պաշտպանումն ապահովելու համար:

Թե՞ վերջնականորեն հրաժարվել է այդ անելուց և որոշ անհիմն ու ոչ ***հայկական*** պատճառաբանություններով այդ անելը թողել է նորանկախ ու այդ հարցում բավականին անփորձ պետության վրա: Ու, երբեմն, նույնիսկ իր հեղինակության, դիրքի ու իրեն ոչ հարիր բաների պաշտպանությունն է ակնկալում պետությունից:

Մինչդեռ մեր դարավոր եկեղեցին իր պաշտոնեությամբ հանդերձ այդ էական պարտականությունը կատարել է առնվազն երկու պատճառով՝ առաջինը, որովհետև դա ազգի գոյության խնդիր է, և երկրորդ, որովհետև դա անելն իրապես իր՝ («երկրի աղի») կոչումն ու գործն է, ու վա՛յ իրեն, վա՛յ բոլորիս, եթե դրանում թերանա, անհաղորդ, անտարբեր մնա:

Եվ դա վերաբերվում է բոլորիս, որովհետև Հայոց Աստվածորդու եկեղեցին մենք ենք, և մենք, մեր պետությա՛մբ Նրանը՝ այժմ և հավիտյանս: Փա՛ռք Նրան:

24 - 08 - 2011թ.

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՂ ՈՒԺ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

«Շատ անգամ չար ոգին կրակի և ջրի մեջ է նետում նրան, որ կործանի. արդ, եթե մի կերպ կարող ես, օգնի՛ր մեզ, Տե՛ր՝ գթալով մեզ»:

Եվ Հիսուս նրան ասաց. «Ասացիր՝ եթե կարող ես. ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է»: Երեխայի հայրը իսկույն աղաղակեց ու ասաց. «Հավատում եմ, օգնի՛ր իմ անհավատությանը» (Մարկոս, 9. 21-23):

Այն, որ *«Ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է»*, Աստվածորդին ասել է աշխարհին, մարդկությա՛նը:

Ավելի քան 1700 տարի առաջ հայ ազգն այդ ասվածն ընկալեց պետականորեն, և մենք հավատքով ու մեր մեծերի, մեր սրբերի ուսուցմամբ, առաջնորդությամբ ու օրինակով ազգովին *սիրեցինք ու հետևեցինք Աստվածորդուն՝ մեր Տիրոջը* և դրանով ապրեցինք և մասամբ էլ դեռ ապրում ենք՝ հակառակ դրա համար մեր դիմագրաված բազում խոչընդոտներին, խաբկանքներին, վտանգներին ու «կորուստներին»:

Ավետարանում՝ հավատացյալի կյանքի սահմանադրությունում ու հրահանգավորումում ասվում է. «*Սերը համբերող է... Ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես*

հույս է տածում, ամեն բանի համբերում: Սերը երբեք չի անհետանում...» (Ա Կորնթացիս, 13. 4-8):

Ու այդ ճշմարտության ընկալմամբ ու կիրառմամբ՝ ապրումով մեր ժողովուրդը, մարդկայնորեն անհնարինը հավատքով հնարավոր դարձնելով, ***«ընկավ, բայց չկորավ»,*** դիմացավ, ստեղծեց, ստեղծագործեց ու ապրեց: Ապրո՛ւմ է:

Սակայն այժմ հավատո՞ւմ ենք այնպես, որ ***«ամեն ինչ հնարավոր»*** լինի մեզ համար, երբ հրամայական կարիքն ունենք ազգի ու հայրենիքի ամեն տեսակի պահանջների բավարարման ու առաջին հերթին հոգեմտավոր և ֆիզիկական անվտանգության, պաշտպանության, ինչպես նաև միասնության՝ ազգահավաք, ազգային կարողության և ներուժի ազնիվ, հմուտ, նպատակասլաց ու լիարժեք օգտագործում՝ ազգի ու հայրենիքի բարօրության համար: Կամ եթե չե՛նք կարող հավատալ, գոնե թերահավատորեն գոչո՞ւմ, աղաղակո՞ւմ ենք մեր Տիրոջն ու Փրկչին. «***Օգնի՛ր իմ անհավատությանը***»:

Սրանք ավելորդ հարցադրումներ չեն, ընդհակառակը՝ ամենաէական հարցերն են մեր ազգի, պետության ու Հայրապետության գոյության ու նաև բոլորիս հոգևոր և մարդկային-ազգային ինքնության գոյության համար: Դրանք մեր նախնիները հաճախ շատ ավելի դժվարին պայմաններում պաշտպանե՛լ, պահե՛լ են ու փոխանցել մեզ, որպեսզի մենք էլ պաշտպանե՛նք, պահպանե՛նք և փոխանցե՛նք մեր զավակներին, թոռներին այնպե՛ս, որ նրանք էլ նախ՝ ուզենա՛ն, պարտականությո՛ւն զգան և երկրորդ՝ կարողանա՛ն, ի վիճակի՛ լինեն ու նաև արժանի՛ լինեն փոխանցելու իրե՛նց հաջորդներին՝ առո՛ղջ, կենսունա՛կ ժառանգություն. ազգ, հայրենիք, պետականություն, պետություն և մարդկային-ազգային Աստվածապատգամ ու Աստվածահաճո ինքնություն:

Աստվածորդու հավատքով ամե՛ն ինչ հնարավոր է, որովհետև Նա Տե՛րն է:

16 - 03 - 2002թ.

ԻՆԵՐՑԻԱՅԻ ՈՒԺԸ
(Դրական և բացասական)

Իներցիայով ասում ենք, թե մենք առաջինը պետականորեն քրիստոնեությունն ընդունեցինք (թեև մոտ անցյալում, տառացիորեն ասում էինք՝ հռչակեցինք որպես պետական կրոն): Բայց իրականության մեջ ո՛չ «ընդունեցինք»-ը, ո՛չ էլ «հռչակեցինք»-ը չեն բնորոշում եղելությունը, որովհետև քրիստոնեությունը մեզ Աստվա՛ծ շնորհեց: Մենք ո՛չ ուզեցինք, ո՛չ փնտրեցինք, ո՛չ էլ գտանք, այլ մեզ շնորհվեց-տրվեց որպես կյանքի շնորհ՝ Աստվածային Սիրով, որ լուսավորեց-սնեց մեզ Աստվածորդու Ավետարանի շնորհներով՝ իմաստությամբ և գիտությամբ...

Ինչպես մայրը երեխային կյա՛նք է տալիս և կա՛թ է տալիս, ու երեխան ո՛չ ընդունում է իր ծնունդն ու կաթն իր մորից, ո՛չ էլ հռչակում է դրանք... Մի՞թե այսպես չեն բնորոշում եղելությունը հայոց քրիստոնեական կյանքի ճարտարապետներն ու կառուցողները և այդ կյանքով ապրողները՝ Լուսավորչից, Թարգմանիչներից մինչև վասն հավատո և վասն հայրենյաց մեր նախկին և նորագույն նահատակները: Եվ Տերն այդպես չի՞ ասում, թե. ***«...Եվ այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե տերն ինչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ Իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ: Ոչ թե դուք Ինձ ընտրեցիք, այլ Ես ձեզ ընտրեցի և ձեզ կարգեցի, որ դուք գնաք և շատ պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա, և ինչ էլ որ Իմ անունով Հորից խնդրեք, ձեզ տա: Այս եմ ձեզ պատվիրում՝ որ սիրեք միմյանց» (Հովհ., 15. 15 - 17):***

Ահա թե ինչու մեր հոգևոր լուսավորման հենց արշալույսին առաջացավ Թարգմանչաց շարժումը՝ վերաճելով մշակու-

թային ոսկեդարի և շարունակելով իր ուսուցանող, զարգացնող ու շնորհազարդող կենսատու հաղթարշավը դարերի միջով նույնիսկ ամենածանր պայմաններում և պահպանեց, հասցրեց մեզ մինչև մեր օրերը:

Հայոց շնորհընկալ Հայրերը Հավատքի Ջորագլխի պատգամով, հոգևոր զորաշարժի ենթարկվելով՝ մարմնավորեցին՝ քաղաքացիականացրին և քաղաքականացրին Ավետարանի Լույս հավատքի իմաստությունն ու գիտությունն ազգի և պետականության կյանքում՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Տիրոջ պատգամն այսօ՛ր էլ անփոփոխ նույնն է, որովհետև հավիտյա՛ն է: Ոչի՛նչ չի փոխվել, ամեն փոփոխություն ձևի մեջ է, էությունը նույնն է՝ հարատև: Հարատև պետք է լինի նաև մեր Թարգմանչաց շարժումն իր հոգեկանությամբ, որպեսզի հարատև լինի նաև ***հայոց ազգային և պետական Ոսկեդարը՝ դառնալով ոսկե դարեր...***

Այս է եղել, հետևապես օրինաչափորեն և է՛ 301 թվականին մեր սրբագործված հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որն ինչքան ժրաջանորեն ընկալվի, գիտակցվի, ազնիվ, անկեղծ, հետևողական ու հարատևորեն կիրառվի, այնքան ամուր, ապահով և պտղաբեր կլինի հայ կյանքը, հօգուտ նաև համա՛յն մարդկության ու ամենաէականը՝ ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Եվ այդ բոլորն անելը, ապահովելը առաջին հերթին Հանրապետության և Հայրապետության առաջնորդների, նրանց անձնակազմերի ու ազգի իրա՛վ մտավորականության խնդիրպարտականությունն է, որը պետք է կատարվի անհապաղ ու անթերի: Որովհետև ա՛յդ է նախապայմանը հայության ու Հայաստանի վայրընթացի կասեցման և վերելքի ապահովման՝ միշտ, ամենուր, ամեն ինչում...

Հունվար, 2016թ.

ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ
(Ազգային տկարության սերմնացանում)

Ներազգային անհիմն կասկածամտությունը, անվստահությունն ու բաժանումը հայ ազգի թշնամիներն են եղել ու կան: Այդ թշնամիներին հիմնականում մենք ինքներս ենք ստեղծում, սնում, աճեցնում ու «մեջտեղ գցում», գործարկում: Ինչո՞վ. նախևառաջ ազգի, հայրենիքի և պետության հանդեպ անտարբերությամբ, անազնվությամբ ու, ի վերջո, խորթությամբ:

Մենք և հիմնականում մե՛նք ենք այդ «ներդրումն» անում մեր դեմ, դրա մեջ նկատի ունենալով մեր անձնական շահադիտությունը և կա՛մ ինքնաապահովումը (самостраховка), և մեծացնում ենք մեր անվստահությունը, կասկածամտությունը՝ դրանով զորացնելով մեր թշնամիներին, նրանց դաշնակիցներին և նրանց՝ մեր մեջ ունեցած գործակալներին:

Քանի որ անվստահությունն ու կասկածամտությունն անտարբերությամբ, տգիտությամբ ու անազնվությամբ են առաջանում ու գործում՝ (առաջացնելով նաև թե՛ զգոնության և թե՛ մարդկային օգտակար ռեսուրսների սահմանափակումներ), ու երբ դա մեր ազգային ու պետական համակարգում է լինում, ապա խաթարվում են մեր ներազգային ու ներպետական հոգեբարոյական մթնոլորտը, նվիրումի գիտակցությունն ու տրամադրությունը և կազմակերպվածությունն ու գործառույթները: Եվ դրանք հստակ, արագ և բարձր արդյունավետությամբ լինելու փոխարեն՝ ապարդյունորեն խճճվում, կաշկանդվում են անտարբերության, տգիտության ու անազնվության բյուրոկրատական, մե՛ր իսկ «սեփական» սրիկաների կողմից պատրաստված լաբիրինթոսներում, որոնք ներկայացվում իբրև թե հանուն «զգոնության պաշտպանության համար»: Ու այդ դրվածքը

դառնում է մեր միասնության ու առաջընթացի հույսերին, ձգտումներին, ջանքերին շղթայված տաժանակրության դատապարտվածների թուջե գունդ:

Իսկ իրենց պարտականություններն արագ, ճիշտ, որակով ու բարձր արդյունավետությամբ կատարելու հանձնառությամբ ազնիվ ծառայողները, ընկնելով այդ «զգոնություն» բանեցնողների «դրբի» տակ, կա՛մ ընկճվում, հուսալքվում, թևաթափ են լինում, կա՛մ ընդվզում ու ավել-պակաս բաներ անում ի վնաս հենց իրենց ու նաև իրենց հավատացածի ու սիրածի հանդեպ կամ էլ թափառականի ցուպ ձեռք բերելու մասին են մտածում…

Եվ մի՞թե այդպիսի վիճակում կարելի է զարգանալ, զորանալ և ոչ միայն ընտանիք, այլև երկիր ու պետություն պահել, պաշտպանել. ու ո՛չ միայն պահել, պաշտպանել, այլև զարգացնել, բարձրացնել, երջանկացնել՝ համաշխարհային բարձրագո՛ւյն աստիճանի՝ միշտ հաղթական դուրս գալով կյանքի տարբեր բնագավառներում, պարագաներում:

Այդպիսի ողբերգական ու նաև կատակերգական վիճակից (որը նաև բավական նուրբ է) դուրս գալու համար ի՞նչ կարելի է անել, ինչպե՞ս անել, ովքե՞ր անեն ու ե՞րբ անեն, երբ մեր դեպքում, վերելքի կամ անկման տանող ժամանակն արդեն իսկ ընթանում է, և հաշվիչը միացված է… Ուրեմն՝

- Ե՞րբ անեն:

- Մ՛յժմ, անհապա՛ղ:

- Ինչպե՞ս անեն:

- Ազնվանալո՛վ ու ազնվացնելո՛վ:

- Ինչպե՞ս ազնվանան ու ազնվացնեն:

- Հավատքո՛վ:

- Ինչպե՞ս այդ հավատքը ստանան, հավատան:

- Աստվածապարգև շնորհով:

- Ինչպե՞ս արժանանան այդ շնորհին:

- Մաքուր սրտով, խնդրելով ու Աստվածապատգամ կյանք ապրելով:

Այստեղ մեր երկնային ու հոգեկան, աշխարհիկ ու նյութական զգացումները, գիտակցությունը և կամքը պետք է համատեղ ու միմյանց լրացնելով գործեն, ինչպես և մեր եկեղեցին ու պետությունը:

Փա՛ռք մեզ շնորհներ պարգևող Երկնային Արարիչ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Կիրակի, 03 - 02 - 2013թ., ժամը 23:30

ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՌՎԱՆՆԵՐԸ

Փա՛ռք Աստուծո, որ ընդհանրական ու առաքելական սուրբ եկեղեցու, հետևապես և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո գլխավոր ու հիմնական առաքելությունը մարդու հոգու փրկությունն է: Սակայն հատկապես Հայաստանյայց եկեղեցվո համար անմիջականորեն *հայ մարդու հոգո՛ւ փրկությունն է որն առնչվում է համայն մարդկությանը և առաջին հերթին՝ հայությանը և հայոց պետականությանն ու պետությանը:*

Իսկ ի՞նչ է հոգու փրկությունը, ինչպե՞ս է լինում այն:

Նախևառաջ լինում է Հիսուս Քրիստոսի Աստվածության ճանաչմամբ, որը նշանակում է հրաժարում, հեռացում նյութականացումից, նյութապաշտությունից, որովհետև հոգու փրկությունն արժեքներով է՝ հոգևոր, գաղափարական և բարոյական արժեքներո՛վ, ու ըստ այնմ՝ ապրումո՛վ, կենցաղո՛վ, որոնք բխում են Աստուծո հավատքից և հիմնված են այդ հավատքի վրա, որը քրիստոնյաները և նրանց մեջ մենք՝ հայերս, ճանաչում ենք Ավետարանով և Խաչով:

Էական է, որ մարդը, ու նաև հա՛յը իր երկրային կյանքի ընթացքում հավատարիմ մնա ու ապրի և գործի ա՛յդ հավատքով և դրանի՛ց բխող արժեքներով, որոնց դեմ է նյութը, նյութա-

կանը, մամոնան: Ու երբ մարդու, ազգի, մարդկության և հայության՛ն կյանքում կենսական դիրքեր է գրավում մամոնան, և նյութապաշտության հետևանքով ավելանում նյութական ագահությունը, ապա մարդկանց աչքին նվազում ու արժեզրկվում է հոգեկանը, գաղափարականը, բարոյականը և ըստ այնմ՝ կենցաղավարությունը:

Մարդկային, հետևապես և հայության կյանքում կան ավանդական արժեքներ, որոնք հոգևոր լինելով՝ հավատքից են բխում: Սակայն երբ հավատքը տկարանում, նվազում է, տկարանում ու նվազում են նաև այդ հոգևոր արժեքները, և դրանց փոխարինում ու տիրություն են անում մարդակենտրոն սեկուլյար և դրանց «մարդասիրությունից» բխող արժեքները, որոնք էլ այժմ ողողում են աշխարհը, նաև «հայ աշխարհը»: Եվ դա տեղի է ունենում նորագույն պատմության որոշ հեղափոխությունների ինչ-որ տեղ հաղթանակող փիլիսոփայությամբ, իրագործելով սեկուլյարության (աշխարհիկության) նպատակները: Եվ դրանք, արդեն ներթափանցել են նաև հայության և մասնավորապես Հայաստանի մեջ փորձելով տարբեր սուտ, խարդախ ու դավադրական միջոցներով, մեթոդներով դուրս մղել մեր տոհմիկ հիմնարար արժեքները, այսինքն՝ ***հայի երկրային հայկական գոյության և հոգու փրկության, երանության*** կռվանները:

Եվ քանի որ դա մեր առաքելական սուրբ եկեղեցու գլխավոր, հիմնական կոչումն ու առաքելությունն է, ապա այդ ներթափանցող քայքայիչ ու կորստաբեր «արժեքները» մերկացնելը և մեր պետականության ու պետության հետ միասին, լայն ճակատով ու արդյունավետորեն դուրս մղելը մի՞թե գործը, «պատերազմը» չէ նաև Հայաստանյայց առաքելական սո՛ւրբ եկեղեցու (գուցե և առաջի՛ն հերթին նրա գործը), որ պետք է վարի որպես, հայ հոգիների պաշտպանության և փրկության հիմնական կառույց, «հոգևոր պաշտպանության գերատեսչություն»:

Իսկ մեզ պարտադրված ա՛յդ բնույթի պատերազմում ևս հաղթական դուրս գալու համար անհրաժեշտ հայկական այդ-

պիսի՛ իրականություն ստեղծելու համար անպայման հարկ է համապատասխան փոփոխություն լինի մեր սրտերի ու մտքերի մեջ՝ մեր անձնական, հասարակական և եկեղեցի-պետություն հարաբերությունների մեջ՝ նորոգված հավատքով և Տիրոջ ողորմությամբ ու օգնությամբ:

Եվ դա ի կյանք հայության և նրա սերունդների, հօգուտ նաև համայն մարդկության ու ամենաէականը՝ ի փառս մեր հավատքի:

Կիրակի, 16 - 09 - 2012թ., ժամը 21:40

ՎԵՐԵԼՔ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾՄԱՄԲ

Եվ ազգի կենսունակությունը ճարակող կոռուպցիայի արմատազերծումը՝ վախից ստիպվա՞ծ, թե գիտակցված կամավորությամբ: Նյութո՞վ, թե՞ հոգով:

Դարձյալ և դարձյալ նշե՛նք, արձանագրե՛նք, որ մեր երկրի ու հատկապես նրա կառավարման մեջ կաշառելիությունը, կոռուպցիան՝ մեր ազգի, հայրենիքի և պետության համար գոյության իսկ վտանգ հանդիսացող այդ չարիքն անհնա՛ր է վերացնել կամ էապե՛ս նվազեցնել, ***այն էլ հարատևո՛ւմ,*** միայն տեղդերների ճիշտ գործադրմամբ, իրավական, իրավապահ ու այլ կառույցների ակտիվության բարձրացմամբ և ընդհանրապես պետական ու հասարակական վերահսկողության առավել զորացմամբ, այսինքն՝ վարչահրամայական միջոցներով: Մինչդեռ ազգի երկրի, պետության կոռումպազերծման այդ գե՛ռազմավարական և նույնիսկ մեր ազգի լինել-չլինելու նշանակության խնդիրը կարելի է և պե՛տք է կատարել մեր ժողովրդի ու հատկապես պետական, հասարակական (դրանց մեջ նաև

անպայման հոգևորական ու մտավորական) և գործարար շրջանակների ***հոգեկանացմամբ, այսինքն՝ մեր քրիստոնեական հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված ազգային գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ կենցաղավարությամբ:*** Միայն այս երեք հիմնասյուների՝ հավատքի, գաղափարականության, բարոյականության և ըստ այնմ՝ ապրելակերպի վրա հիմնված վարչական միջոցները կարո՛ղ են այդ խնդիրը կատարել՝ ***համայն Հայության մեջ և Հայաստանում կոռումպացիան ամբողջությամբ, էապես և հարատևորեն վերացնել:***

Սակայն կոռուպցիոն մտածողության, որոշումների և տարբեր բնագավառներում տարբեր բնույթի, տարբեր չափերով ու ձևերով ամրացած և կիրառվող կոռուպցիոն արարքների վերացման համար աշխարհի տարբեր վայրերում ու նաև մեր երկրում բազում տարիների ընթացքում կիրառված միջոցները ճիշտ չլինելով, անզոր ու անբավարար են դուրս գալիս: Եվ դա այն պարզ պատճառով, որ կոռուպցիան, ինչպես ամեն տեսակի զանցանք, հանցանք, չարագործություն վերացնելու համար նախ և առաջ պետք է ***չուզենա՛լ այն անել:***

Գողին բռնելն ու պատժելը բավական չէ գողությունը վերացնելու նպատակի իրագործման համար, կարևորը անձի՝ գողանալ չուզելն է... Անձը չուզենա՛ գողանալ, չուզենա՛ անառակություն անել, չուզենա՛ դասալքել, դավաճանել, չուզենա՛ ծխել, հարբե՛լ, չուզենա՛ հայհոյել, ստել, խաբել, անպարկեշտ լինել, այդ դեպքում դրանք՝ այդ երևույթները կսկսեն վերանալ, իսկ եթե անձն ուզում է այդ բոլորն անել, որովհետև դրանք շահավետ և կամ հաճելի են, բայց զգուշանում է՝ չի՛ անում՝ վախենալով կամ ամաչելով հայտնաբերվելուց և պատժվելուց կամ խայտառակվելուց, ապա դա՛ էլ նշանակություն կունենա, ինչ-որ արդյունք կտա, սակայն այն կլինի մասնակի և ժամանակավոր: Որովհետև միա՛յն վարչական միջոցներով ազդեցության հետզհետե չեզոքացումն ու անհետացումը լոկ ժամանակի հարց է, իսկ ժամանակն էլ կախված է տվյալ ժողովրդի հասարակության գիտակցության, խղճի և վարչական համա-

կարգի որակական մակարդակից՝ հմտությունից և նրա միջոցառումների ինտենսիվությունից: Բայց ինչ էլ լինեն դրանք, միևնույնն է, ի վերջո «կոտրած տաշտակի» առաջ կանգնելն անխուսափելի է: Որտեղի՞ց գիտենք. դա աշխարհի, մարդկության փորձառությունն է ասում, վկայում և ամենակարևորը՝ մեր Տերն է ուսուցանում,պատգամում:

Իսկ թե ինչպե՞ս կարող է լինել, որ անձը չուզենա կոռումպանալ (ու այդ բառի անգլերեն բացահայտությամբ՝ ստորանալ, նվաստանալ, խաբել, խարդախել, օրինազանց լինել), այլ ***միշտ ու բոլոր պայմաններում*** լինել առաքինի, ազնիվ, վեհ, քաջ, անկաշառ ու օրինապահ, դա լինում է հավատքով՝ դատավոր ունենալով իր խիղճը և առաջնորդվելով Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, ըստ այնմ՝ ազգային ինքնագիտակցությամբ ու տոհմիկ բարոյականությամբ:

Դա կարող է լինել միայն ու միայն հավատալո՛վ Աստծուն, հավատքո՛վ ճանաչելով Աստուծո կամքը, զորությունը, պատգամները և կատարելո՛վ դրանք՝ սիրելով Նրան ու վախենալո՛վ Նրանից: Սակայն, նա՛խևառաջ, սիրելո՛վ Նրան՝ Հորը, Ամենակալին, երկնքի և երկրի, տեսանելիների ու անտեսանելիների Արարչին և մեզ գթացողին, ներողին, փրկողին ու կյանք պարգևողին՝ Իր Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի Հարությամբ:

Սա՛ է մեր՝ հայերիս հավատքը, հավատամքը, որին առնչված են մեր ազգային խիղճն ու գիտակցությունը և մեր հավատքից բխող ու դրա վրա հիմնված գաղափարը՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը և բարոյական արժեհամակարգը, որոնցով ապրել, գոյապայքարել ու զարգացել է մեր ազգը և որի շնորհիվ մենք այսօր կանք: Ու եթե հույս ունենք, որ դեռ պիտի՛ լինե՛նք, ապա այդ հույսը հավատքո՛վ է իրական ու հաստատուն: Հայը չպե՛տք է մոռանա իր հայրերի հավատքի հույսը, որը տալիս է նրան ուժ ու զորություն, նաև կամք ու իմաստություն՝ միշտ լինելու արդարության կողմը և դրանցով նաև ստեղծագործություն, աշխատանք ու երջանիկ հարատևություն:

Հետևապես դրանից՝ մեր հավատքից էլ պետք է բխեն մեր

հասարակական և պետական կյանքի վերոնշյալ գե՛րռազմավարական քաղաքականությունը, ինչպես նաև կենցաղավարությունը, մեր ազգային և քաղաքացիական ինքնաբուխ պարտաճանաչությունը, ինքնակամ պատրաստակամությունը և այն ամենը, որով պետք է՝ հավատարիմ մնանք Աստվածաշնորհ Քրիստոսաբուխ մեր մկրտության էությանը, խորհրդին և քրիստոնյայի մեր կոչումին ու ընտրությանը՝ Ավետարանով և Խաչով:

Եվ մեր անձնական ու ազգային հոգեկանությունը գոյացնող երեք հիմնասյուների՝ հավատքի, գաղափարականության և բարոյականության վրա միայն կարելի՛ է, (և մենք կարո՛ղ ենք) կառուցել մեր ազգի, հայրենիքի և պետության ապահովությունը, անվտանգությունն ու արժանապատի՛վ բարգավաճումը համապատասխան կենսամակարդակով և բոլոր բնագավառների զարգացման ու վերելքի առավելագույն նախադրյալներով:

Որովհետև մենք այդ երեք հիմնասյուների հանդեպ հավատարմությամբ, նվիրումով և դրանց վրա մեր կյանքը կառուցելով կունենանք Աստուծո բարեհաճությունը, օրհնությունն ու օգնությունը՝ ***գերերաշխիքն ապահովության ամեն տեսակ փորձություններից, փորձանքներից և դրանց փոխարեն երանելիության ա՛յժմ և հավիտյանս:***

Եվ մի «գործնական» նշում. խնդիրը, որը բնորոշեցինք որպես մեր ազգի համար պատմական ու վճռական նշանակություն ունեցող, դրա կատարման երաշխիքի՝ նախապայմանի՝ երեք հիմնասյուները՝ (հավատք, գաղափարականություն և բարոյականություն) ունենալու համար համաշխարհային բանկերի վարկերի կամ տարբեր բարերարների ողորմության և կամ տարբեր բարձրակարգ, թանկարժեք, դժվար ձեռք բերվող, յուրացվող տեխնոլոգիաների և սրանց նման այլ բաների կարիքը չկա՛, չի՛ զգացվում, այլ զգացվում է կարիքը մեր վերափոխմա՛ն, որով և այդ բոլորը կլինեն՝ դեռ մեր պատկերացրածից էլ ավելի:

Վերափոխվենք բոլորս՝ վերևից մինչև ներքև և ներքևից մինչև վերև, տարեց ու երիտասարդ, կին և տղամարդ, քաղա-

քում թե գյուղում, երկրի ներսում թե երկրից դուրս՝ Սփյուռքում: Ու մեր առաջին փոփոխությունը թող սկսվի նրանից, որ մեր մտքերից ու սրտերից դո՛ւրս մղվեն, այնտեղ չմնա՛ն ու այլևս երբեք չմտնե՛ն չարը, ստորն ու անարգը, նախանձն ու նենգությունը… այլ միշտ լինեն ու մնան ազնիվը, վեհը, սուրբը, սրբությունն ու սերը: Սերը մեր ընտանիքների, ընկերների և յուրաքանչյուր հայրենակցի հանդեպ. սերը մեր ազգի, հայրենիքի և պետության, պետականությա՛ն հանդեպ. և սերը, անպայման ու ամենաէականը, մեր Աստուծո հանդեպ: Ու եթե Աստծու հանդեպ, ապա և Նրա ամեն ստեղծածի և մեր մերձավորի հանդեպ:

Ուրեմն՝ (թող դարձյալ նշվի) առանց բազմամիլիարդ ներդրումների ու առանց բարդ տեխնոլոգիաների և կարևոր պայմանագրերի, դաշնագրերի և դեռ շատ ու շատ բաների, եթե մենք անձնապես ու ազգովին վերափոխվենք՝ կհասնենք ամեն տեսակի ապահովության, համընդհանուր երջանկության, փառքի ու ամենայն արժանապատիվ վիճակի ամենաբարձր աստիճանին, որ երբեք չենք էլ երազե՛լ:

Իսկ մեր գե՛րերջանկությունը կլինի Աստուծո հաճությունը, օրհնությունն ու մեր որդեգրումը, որպես Աստուծո ժողովուրդ և մարդկության համար ընդօրինակման երանելի նմուշ-օրինակ:

Կուզենա՞նք այսպիսի հայեր լինել, այսպիսի ազգ, երկիր և պետություն դառնալ: Դա կլինի, եթե ճշմարտապես և լիովին հաղորդվենք Ավետարանի շնորհին, իմաստությանն ու գիտությանը, վերցնենք Տիրոջ Խաչը և գնանք Նրա հետևից՝ ապրելով ու գործելով ըստ Նրա պատգամների:

Եվ սա նաև մեր ազգի մեծերի, մեր սրբերի մեզ կտակած Աստվածաշնորհ ժառանգությունն է: Հավատքով հավատարի՛մ մնանք, տե՛ր կանգնենք, արժանանա՛նք ու վայելե՛նք մեր ազգի մեծերի, սրբերի Աստվածաշնորհ առաքինությունների կենարար, սո՛ւրբ ժառանգությունը, փոխանցելով այն մեր սերունդներին, որը կլինի նաև հոգուտ համայն մարդկության և ի փառավորումն մեր Աստվածաշնորհ հավատքի:

Փա՞ռք այն մեզ պարգևող Արարիչ Հորը:

Երեքշաբթի, 17 - 04 - 2007թ.,
Գլենդել, ԱՄՆ, ժամը 07:10

ՈՎՔԵ՞Ր ԿՏՆՕՐԻՆԵՆ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Համամարդկային և պատմական առումով հայ ազգային հիմնական, էական ու անանց ժառանգությունն իրենց հավատքին ու մարդկային-ազգային ինքնությանը հավատարիմ մնացած հայ մարդկանց և հատկապես նահատակվածների, մարտիրոսացածների երկնային վարձատրությունն է...

Այդ վարձքը աշխարհի կյանքի ամենաթանկարժեք գանձն է, որ պարունակում է Աստվածային կամքի, նպատակների, գործերի կատարման շնորհ՝ իմաստություն, ուժ, կարողություն ու նաև Աստվածային պաշտպանություն, որով և ամեն ինչում հաջողություն ու երանելի գոյություն այժմ և հավիտյանս:

Այդ գանձն անանց է և ոչ մի արժեզրկման (ինֆլյացիայի) ենթակա չլինելով՝ հավերժ պատկանում է հայ ազգին...

Բայց ո՞ր բանալիով և ովքե՞ր են արժանի բացելու գանձատունը, օգտվելու գանձից:

Հայ ազգային ո՞ր իշխանությունն է ի զորու և գիտակ՝ տնօրինելու այդ գանձը:

Ինչպես աշխարհի համարյա բոլոր դրամատներում, հայության երկնային գանձարանի գանձարկղերն էլ հավանաբար բացվող են երկու բանալիով՝ մեկը սրտի, մյուսը՝ մտքի: Ու եթե երկրային ամենակարևոր գանձատների բանալիները լինում են կոդավորված թվերով, տառերով, մատնահետքով, դիմագծով, աչքի գույնով, և այլն, ապա երկնային գանձարանի գանձարկղերի դեպքում բանալի-կոդը բացողի սրտի և մտքի պարունակությունն է՝ հավատքով, գաղափարով և բարոյականությամբ՝ խիղճ, գութ, ազնվություն ու ըստ այնմ՝ գիտակցություն և կյանքի ապրում:

Այդ հատկությունները մեր հայ իրականության մեջ առավել առկա, կիրառելի ու արգասաբեր են լինում՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Հետևապես, երբ Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ և գործադրմամբ հայ անձը, հայությունը և մեր աշխարհիկ և հոգևոր պաշտոնեությունը տոգորվում են սրբությամբ, ազնվությամբ, ազնվական բարքուվարքով ու կենցաղավարությամբ, նրանց առջև բացվում է իրենց հավատքին հավատարիմ նախնյաց՝ մեր ապուպապերի Աստվածապարգև գանձը՝ բարի, ստեղծարար, հզոր ու ամենահաղթ շնորհով կարողությունը:

Եվ այդ կարողությունը, որ ոչ աշխարհի բոլոր բանկերն իրենց գումարներով (արժույթներով), ոչ աշխարհի բոլոր զինանոցներն իրենց զենք ու զինամթերքով, ոչ էլ աշխարհի բոլոր ակադեմիաներն իրենց գիտությամբ չեն կարող փոխարինել, Հայկյան ազգի Աստվածապարգև սուրբ ժառանգությունը, որը հատո՛ւկ տնօրինությամբ կարող է վերակառուցել (կամ վերաարարել) Աստվածորդու Ծննդյան ժամանակաշրջանի բովանդակությամբ Հայոց Տունը 21-րդ դարասկզբի ձևով:

Եվ հայ պետության, Հայրապետության ու մեր ազգի ղեկավարության Աստվածապատգամ խնդիրն է այժմ ևեթ սկսել պատրաստել մեր ժառանգության տնօրինողներ՝ Հայկականության 21-րդ դարի Տան վերակառուցման (վերաարարման) ճարտարապետներ ու շինարարներ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՄՈՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔՈՎ

ԽԱՉ

(Հավատքով ու Հայ Ազգային Գաղափարախոսությամբ)

Խաչը հայ մարդու մեծ ընտանիք հայության՝ հայ ազգի և նրա հայրենիք Հայաստանի խնդիրներն են, որոնք ինքը պետք է կրի կյանքի ընթացքում և լուծի՛, կատարի՛, այլ ոչ թե դրանցից փախչի և կամ դրանք մոռացության տա:

Հայ ազգի ու հայոց պետության այդ խնդիրներն անպայման լուծվում, կատարվում են Խաչի ***հավատքով, հույսով ու սիրով, որոնցով և հավատարմությամբ՝ մեր հոգևոր ու ազգային ինքնությանը և մանավանդ այդ ինքնությունը ստեղծած Երկնավոր Հոր հանդեպ:***

Ու հայի այդ ***հավատարմության հատկություններն*** ինչքան անկեղծ, հետևողական, հարատև և մինչև իսկ սուրբ լինեն, այնքան արագ, դյուրին, հաջող ու լիարժեք կլուծվեն մեր անձնական, ազգային, հասարակական ու պետական նույնիսկ ամենադժվարին հարցերը, կկատարվեն ամենաանհուսալի խնդիրները, և կիրականանան ամենաաներևակայելի իղձերը:

Մեզ՝ հայերիս, տրվա՛ծ են այդ ***հատկությունները:***

Մեր երջանկահիշատակ նախնիք ապրո՛ւմ էին դրանցով, որի հետևանքը մեր այսօրվա ***գոյությունն է՝ որպես հայ և որպես մարդ:***

Բայց որպեսզի մենք լիարժեքորե՛ն օգտվենք դրանցից ու նաև փոխանցենք մեր երեխաներին, թոռներին ու սերունդներին, որպեսզի նրանք էլ օգտվեն, արժանապատվորե՛ն գոյատևեն ու իմաստալից կյա՛նք ունենան (որը կնշանակի նաև մեր կյանքի սրբագործված շարունակություն, ***հարատևություն),*** հարկավոր է, որ ***մե՛նք ևս ունենանք մեր նախնյաց այդ հատկությունները և լինենք հավատարիմ այդ հատկությունների էությունը Ստեղծողին՝ Արարիչ Հորը՝ ԱՍՏԾՈՒՆ:***

Ու այնժամ Նա մեզ մի՛շտ կլինի օգնական, և մենք՝ մի՛շտ հաղթակա՛ն, ինչպես միշտ ԽԱ՛ՉՆ է ՀԱՂԹԱԿԱՆ:

Շաբաթ, 20 - 06 - 2015թ., ժամը 07:00

ՀԱՎԱՏՔ ԵՎ ԿՅԱՆՔ

Հավա՛տքն է, որ մարդուն պահում է մարդ, դարձնում Աստուծո որդի և տալիս է կյա՛նք՝ ընդմի՛շտ, հավե՛րժ:

Հավատքն Աստվածաշնո՛րհ է, մարդ հավատքը չի կարող գնել (թեկուզ ամբողջ աշխարհի բոլոր բանկերի փողը վճարի), այն չի կարող նվաճել (թեկուզ աշխարհի ամբողջ զենքն ու զինամթերքը գործածի) և հավատքը չի կարող ստեղծել (թեկուզ աշխարհի ամբողջ գիտությունը կիրառի): Հավատքն Իր հանդեպ, Իր Միածին Որդու հանդեպ, Սուրբ Հոգու հանդեպ և Իր սրբերի ու սրբությունների հանդեպ տալիս է Աստված՝ Արարիչ Հայրը, տալիս է Միածին Որդին, տալիս է Սուրբ Հոգին, և տալիս են սրբերը: Հավատքն Աստվածային շնորհով է տրվում՝ ձրի, և Նրա որդիները՝ հավատացյալներն էլ այն պետք է տան, փոխանցեն, կիրառեն ձրի. ***«...Ձրի առաք, ձրի էլ տվեք» (Մատթ., 10.8):***

Եվ Աստուծո որդիները՝ ծառաները, մշակները հավատքը, չպետք է թաքցնեն, այլ «գործի մեջ դնեն», գործի վերածեն (որպեսզի այն մեռած չլինի, այլ կենսագործվի)... ***մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Եվ ճրագ վառելով կաթսայի տակ չեն դնում, այլ աշտարակի վրա... (Մատթեոս, 5.14-15):***

Եվ գործ է նաև հավատքն ուրիշներին տալը, փոխանցելը և կյանքում ամեն ինչի մեջ կիրառելը: Եվ կիրառելը բոլոր խոհերում, մտահղացումներում, եզրահանգումներում, ծրագրերում և արարքներում: Ու այդ բոլորը անշահախնդիր՝ երկնայի՛ն իմաստով և ինքնըստինքյան շահեկան՝ երկրայի՛ն իմաստով:

Եվ ուրեմն, քանի որ հավատքը կենսագործմամբ է կենդանի մնում մարդու, մարդկային կյանքի մեջ բոլոր հանգըր-

վաններում ու բնագավառներում և առաջացնում է գաղափար, գաղափարականություն, ըստ այնմ՝ բարոյականություն, բարոյական արժեհամակարգ, ու ըստ այնմ էլ՝ կենցաղ, ապրելակերպ, մշակույթ, ավանդույթ, սովորույթ, ապա յուրաքանչյուր ազգի համար, ըստ նրա հոգեկերտվածքի, խառնվածքի, մտածելակերպի և բնական ու պատմական պայմանների, վիճակի ստանում է իր ձևը՝ գույնը, համը, հոտը, սակայն բոլորի մոտ էությամբ այն նույնն է ու անփոփոխ, Աստվածաբուխ, Աստվածաշնորհ, ինչպես օրինակ՝ վարդը, ստանալով տարբեր չափ, գույն ու հոտ, չի դադարում վարդ լինելուց:

Դրա համար հայ ազգի նախահոր Հայկին, (ինչպես Աբրահամին) տրված հավատքը հայկակա՛ն լեռնաշխարհում և դրա պատմական անցքերում, փորձություններում ստացավ իր ձևը, գույնը, համը, որոնք արտահայտվեցին Աստուծո հավատքից բխող և այդ հավատքի վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, ըստ այնմ՝ բարոյական արժեհամակարգով, կենցաղավարությամբ և գրված ու չգրված օրենքներով, կանոններով, ավանդույթներով: Եվ դրանց հետ նաև Հայկ Նահապետի Աստվածատուր առանձնահատկությամբ ձևավորված և դարերի ընթացքում ապրած, գործած մեր ազգի հոգեկանությամբ առաջացավ հայկականությունը՝ հայ քաղաքակրթությունը, որը սրբագործվեց 301 թվականին Աստվածորդու շնորհով՝ Գրիգորի լուսավորությամբ ու առաջացավ հայ նո՛ր Հայկականություն՝ Հայ քրիստոնեակա՛ն քաղաքակրթությունը, համապատասխան հոգեբարոյական և գաղափարական համակարգով:

Դրա արդյունքում մեր ազգի հավատքը, դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, ըստ այդմ՝ բարոյական արժեհամակարգը (նորմերը) ու ըստ այդմ՝ բարոյական ըմբռնումները, աշխարհայացքը և կենցաղավարությունը, նույնիսկ մարդկային պատմության մեջ եղած ամենաբարդ ու դժվարագույն պայմաններում ուղղորդեցին, պահպանեցին մեր ազգը և հասցրին մեր օրերին: Փորձություններով լի պատմական այդ երկարատև ընթացքում մենք ունեցանք նաև շեղումներ, անկումներ ու կորուստներ, որոնք հիմ-

նականում առաջանում էին մեր ազգի կենսունակ գոյության երեք՝ հավատքի, գաղափարի և բարոյականության հիմնասյուների՝ դրսից և ներսից, սակայն հիմնականում մեր կողմից ստեղծվող տատանումներից ու խախտումներից:

Ինչքան ուժեղ ու երկարատև էին տատանումները, խախտումները, այնքան մեծ ու երկարատև էին լինում մեր շեղումներն, անկումներն ու կորուստները, բա՛յց: …Բայց քանի որ այսօր դեռ կա՛նք, և մեր հույսն էլ կա, որ դեռ կլինենք, դա նշանակում է, որ Աստվածապատգամ ու Աստվածահաճո մարդկային-ազգային մեր գոյության հիմնասյուների տատանումներն ու խախտումները կրիտիկական կետին չեն հասել: Ինչո՞ւ:

Այս կարևորագույն հարցի պատասխանները կարող են երկար ու շատ տարբեր լինել: Մեր համոզմամբ ճիշտն ու կարճն այն է, որ մեր ազգի մեջ դեռևս (գոնե ինչ-որ չափով ու ձևով) մնացել է մեր գոյության հոգևոր, գաղափարական և բարոյական վերոնշյալ հիմնասյուների որոշակի կայունություն: Եվ դա մեր ազգի հայտնի և (գուցե ավելի շատ) անհայտ մեծերի, սրբերի՝ հերոսների ունեցած և կիրառած հոգեկանությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ է: Արարիչ Հորը՝ Աստծուն, նրանց հավատարմությամբ է, որով և հայ ազգին ու հայրենիք Հայաստանին նվիրված կյանքով նրանց ապրելու շնորհիվ է: Իսկ դա գալիս է փաստելու, որ Աստված, տալով այդպիսի շնորհ, դեռ սիրում և պաշտպանում է հայ ազգը, նրա հայրենիք Հայաստանը և պետականությունն ու պետությունը, որոնք կարող են ոչ միայն գոյատևել (որն ինքնըստինքյան շատ մե՛ծ բան է, մանավանդ պատմության ընթացքում տարբեր ազգերի և պետությունների կորուստը հաշվի առնելով), այլև կարող են բարձրանա՛լ մարդկային գոյության ամենավերի՛ն շարքերը՝ ի երջանկություն հայոց սերունդների, հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Միայն թե հավատա՛նք ու ըստ այնմ ապրենք և գործե՛նք:

Ըստ սուբ Ավետարանի՝ Հավատա՛ և կփրկվե՛ս:

Հինգշաբթի, 31 - 10 - 2019թ., ժամը 00:35

ՓԱՌԱՎՈՐԱԳՈՒՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ
(Մնացած անհայտ ու անսովոր)

Հայը, հայությունը, մենք բոլորս այսօր որպես ազգ գոյություն ունենք աշխարհում ու ապրում ենք, այն էլ մեր պետության դժվարագո՛ւյն՝ պայմաններում: Սակայն ապրում ենք շուրջ 7 միլիարդ մարդկության կեսից ավելիի լա՛վ կենսապայմաններում ու նաև դիմադրում ենք, հաղթում ենք և դեռ հույս ունենք հզորանալու, հաղթելու, զարգանալու, աճելու, բարգավաճելու, բարձրանալու: Ու այդ բոլորը ***հրաշալի շնորհ է մեր Տիրոջ կողմից՝ ի սեր մեր նախնիների և նրանց հավատարմության համար հավատքին:*** Ինչպես նաև մեր Վարդանանց՝ և նրանց դարավոր հետևորդների վասն հավատո, վասն ազգի և վասն հայրենյաց հրաշափառ նահատակության:

Վարդան Մամիկոնյանն իր զինակիցներով, զորքով և հետո նրա եղբորորդի Մուշեղ Մամիկոնյանն իր հետևորդներով, մարտիկներով հավատքի՝ աշխարհի մեծագույն հոգեբարոյական ճակատամարտերից և ռազմաքաղաքական պատերազմներից մեկը շահեցին: Նրանք այնպիսի՛ հաղթանակ տարան, որի ազդեցությունն ու հետևանքը լինելով անանց՝ անկորնչելիորեն գործել է դարերի ընթացքում և գործելու է հավիտյան, քանի գոյություն ունեն աշխարհը և մարդկությունը: Որովհետև Ավարայրի Վարդանանց հաղթանակը Աստվածորդու՝ Քրիստոսի՛ հաղթանակն է, որը Նա շնորհեց մեզ՝ հայերիս, պետակա՛նորեն, հավիտյանս:

Սա հայի և հայության համար անչա՛փ ու անօրինակ մեծության պարծանք է, որովհետև երկնային է:

Այդ երկնային շնորհի իմաստությունը, զորությունն ու կարողությունը հայն անձնապես և հայությունը հավաքակա-

նորեն ու պետակա՛նորեն ընդմիշտ կզգան և հարատևորեն կգործադրեն իրենց արդա՛ր նպատակների իրականացման համար եթե՛: Եթե մտայնությամբ, վերաբերմունքով ու գործերով համակվեն և (գոնե ի՛նչ-որ չափով) նմանվեն իրենց մեծ և սո՛ւրբ հայրերին՝ Վարդանանց, ժառանգեն նրանց հավատքը, հավատարմությունը, հետևողականությունը, և դրանից բխող ու դրա վրա հիմնըված գաղափարականությունն ու բարոյականությունը:

Ուրեմն հա՛յ, սրբացի՛ր՝ արդարացի՛ր ու այդ արդարությամբ սրբացրո՛ւ քո ազգը, պետությունը, սերունդը և Աստվածատո՛ւր շնորհներով բարձրացի՛ր ու հավե՛րժ երջանկացիր՝ ի փառս քո Արարիչ Հոր՝ Աստուծո:

22 - 09 - 1995

ԽՈՀԵՐ
ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
(1700-ամյակի առնչությամբ)

Հայ քրիստոնյայի կոչումի, նպատակի, գործերի (Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից) Աստվածային գերագույն շնորհի հետևանքով՝ հայ ազգի քրիստոնեացմամբ, հայ ազգի կյանքն էականորեն բարեփոխվեց: Դա դարավոր ակնհայտ իրողություն է, թեև այդ փոփոխությունը ոմանք, հատկապես սկսած 19-րդ դարից, բացասական համարեցին ասելով՝ եթե վանքերի տեղ բերդեր կառուցեինք և խունկ ծխելու փոխարեն վառոդ ծխեցնեինք, հայությունը դարերի ընթացքում չէր տկարանա և ստրկանա. այսինքն՝ հայ ազգի թուլության պատճառը մեկ այտին խփողին մյուս այտն էլ դեմ տալու քրիստոնեական պատգամին էին վերագրում, առանց հասկանալու դրա իմաստը:

Եվ այդպես էր մտածում, գրում և սերունդներ դաստիա-

րակում հայության մտավորականության մի զգալի մաս: Եվ ուղղակի կամ անուղղակի՝ աստիճանաբար այդ դաստիարակությունն ու մտայնությունը տարածվում էր հայ իրականության մեջ, որովհետև դրանց հեղինակները զգալիորեն ազդված դրսից, այնտեղից էլ ուղղորդվում ու աջակցություն էին գտնում: Եվ բացի այդ, իրենք շատ ավելի գործուն էին, քան ազգային-հոգևոր արժեքների պահպանման և գործարկման կողմնակիցները, որոնք, ինչպես կյանքը ցույց տվեց, աստիճանաբար նահանջեցին՝ զիջելով իրենց դիրքերը: Հատկանշական է նաև, որ հայ իրականության մեջ առաջացած այդ հակահոգեկան միտումը զուտ ազգային չէր. այն՝ մերո՛նց իսկ միջոցով մեր մեջ ներմուծվում էր Արևմուտքից ու Հյուսիսից, կարելի է ասել՝ առանց նույնիսկ «ազգային մաքսատուրքի»:

Մի պահ թողնելով այն հանգամանքը, որ այդ հայ ներմուծողները չարաչար սխալվում էին և են, անդրադառնանք նրան, թե ինչպես և ինչ արժեցավ դա հայությանը: Նրանք, որոնցից շատերը մտավորական և հասարակական դիրքեր ունեցողներ էին փաստորեն ներսից, տարբեր միջոցներով, իբրև թե հանուն միջազգային նպատակների և հանուն քաղաքակրթության, գիտության, արդիականության, զարգացման ու էլ չգիտես հանուն ինչերի, զգալի աշխատանք կատարեցին՝ խախտելու մեր ժողովրդի հավատամքը, որը նշանակում է շարունակել դեռևս կրակապաշտ պարսիկների ու այնուհետև տարբեր ազգերի ու ցեղերի, վերջում էլ թուրքերի գործը և հող պատրաստեցին ու գործակցեցին, աջակցեցին բոլշևիզմի աստվածամերժ դավադրությանը՝ ուղղված հիմնովին խախտելու մեր ժողովրդի հավատքը, որով և ազգային գաղափարականությունը, բարոյական ըմբռնումներն ու կենսաձևը: Այսինքն՝ ա՛յն կռվանները, որոնցով հայությունը դարերով ոչ միայն դիմանում էր բազմատեսակ ու բազմաբնույթ ճնշումներին, այլև ստեղծագործում և կրթական ու մշակութային որոշ վերելք ապրում:

Եվ այդ անողները մեծ մասամբ հաջողեցին: Այդ հայերից ոմանք հավանաբար, դա արեցին անգիտակցաբար, հայրենասիրությունից մղված, ուզում էին բարելավել իրենց ազգի վի-

ճակը, սակայն արդյունքը եղավ հակառակը: Նրանք ու թշնամու վարձկան գործակալները մեծ ավերներ գործելով Աստվածային շնորհով ստացված հավատքից բխող կյանքի ըմբըռնումների մեջ և դավադրաբար դառնալով «տրոյական ձի»՝ ներսից սկսեցին կործանել հայ ազգի գոյատևման բերդը՝ նրա մարդկային ու ազգային հոգեբարոյական և գաղափարական արժեքների իմաստը և չափանիշները, այդ արժեքներով ապրելու իմաստությունը, կամքը, վճռականությունն ու հմտությունը:

Ահա թե ինչպես փոխվեց հայ ազգը այդ «լուսավորյալների օգնությամբ»: Եվ դրա ցայտուն օրինակներից է 1920թ. հոկտեմբերին Կարսի անառիկ համարվող բերդի՝ արյունարբու թշնամուն առանց որևէ դիմադրության հանձնումը: Երբ հայը մենակ իրենից շատ ավելի զինված տասի դեմ էր քաջաբար կռվում՝ պաշտպանելու համար իր երկիրը, տունը, պատիվն ու ազատությունը և հաճախ էր հաղթական դուրս գալիս, գտնվեցին հայեր, որոնք Կարսի բերդում պատսպարված, ամեն ինչով ապահովված ու շատ ավելի լավ զինված լինելով հանդերձ հանձնվեցին այդ պահի սակավաթիվ և թույլ զինված ոխերիմ, դաժան հակառակորդին՝ ակնհայտորեն վտանգելով իրենց անձը, հայրենիքը, տունը, ազատությունը... Իսկ իրենց պատի՞վը: Բացի նրանց միջի որոշ ազնիվ ու իրենց կոչումին հավատարիմ, քաջ զինվորականներից, նրանց պատիվն արդե՛ն իսկ մեռել էր. նախքան իրենց անարգորեն գերեվարվելն ու ոչնչանալը:

***

Կանգնած ենք հայոց պետականորեն քրիստոնեացման 1700-ամյակի շեմին: Մտածում, ծրագրում ենք կազմակերպել բազմաթիվ միջոցառումներ: Ըստ երևույթին այդ բոլորը, ինչ որ ծրագրում ենք, նպատակ ունեն հայ ազգը ներկայացնելու աշխարհին, թե տեսեք, ինչքան ընդունակ ու առաջադեմ ազգ ենք, որ մեր պետությունն աշխարհում առաջինը քրիստոնեա-

ցավ: Սա վատ բան չէ. լա՛վ է, որ այլ ժողովուրդներ լավ, բարձր կարծիք կազմեն մեր մասին, հավանեն մեզ, գուցեև ավելի բարեկամանան մեզ հետ և ներառեն իրենց գործերում: Մեր ազգը, մեր նորանկախ պետությունը դրա կարիքն ունեն: Այդպիսի լավ տրամադրություններից ու հարաբերություններից կարելի է ստանալ քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և նոր հավելյալ հնարավորություններ: Այդ միջոցառումները ծրագրողների մի զգալի մասը, ըստ երևույթին, մտածում է նաև, որ դրանց կիրառումը կբարձրացնի մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվության զգացումը, հայրենասիրական ոգին ու միասնությունը և վերջին հաշվով մեզ լրացուցիչ հնարավորություններ ու կարողություններ կընձեռի՝ բազմաթիվ հարցերի լուծման և խնդիրների կատարման համար:

Սա էլ շատ լավ է, և բոլորս պետք է ամեն կերպ ջանանք, որ այդ ծրագրերը լավագույնս կենսագործվեն: Սակայն 1700-ամյակի դիմավորման նախապատրաստությունների մեջ, ըստ երևույթին, մի շատ կարևոր հարցի պատասխանն է բացակայում, մի շա՛տ կարևոր հանգամանք, առանց որի անիմաստ է դառնում 1700-ամյակի նշումը, և գուցե նաև հարցականի տակ է դրվում այն տոնելու մեր բարոյական իրավունքն ընդհա՛նրապես: Եվ այդ հանգամանքը հետևյալ հարցի ճիշտ պատասխանն ունենալն է:

1700 տարի առաջ աշխարհում պետականորեն առաջինը քրիստոնեացած հայ ազգը և նրա նորանկախ պետությունն այսօր ինչքանո՞վ ու ի՞նչ աստիճանի են քրիստոնյա:

Թվում է, որ այս հարցի պատասխանը պետք է տա ոչ միայն Հայաստանյայց առաքելական եկեղեցին, այլև քրիստոնեական հարանվանությունների հայ եկեղեցիները, հայկական երկու պետությունների ղեկավարները, ինչպես նաև յուրաքանչյուր հայ իր սրտով, խղճով, ազգային գիտակցությամբ ու այդ մասին լա՛վ մտածելով:

Այնուհանդերձ, հայ հոգևորականությունը, իր կոչումի համաձայն, մեծ ծառայություն կարող է մատուցել հայությանը,

հստակ պարզաբանելով, թե ինչ է ներկայացնում այն հավատքը, որ մեր նախահայրերը պատվաստեցին իրենց սրտերում, մտքերում և որի համար դարավոր փորձություններում իրենց հավատարմության համար շատ հաճախ վճարեցին մեծ գին: Բացատրեն ու սովորեցնեն նաև, թե ինչ է նշանակում քրիստոնյա անձ, քրիստոնյա ընտանիք, քրիստոնյա ժողովուրդ ու պետություն: Ի՞նչ պե՛տք է անենք և ի՞նչ չպե՛տք է անենք, որ մեր նախահայրերը մեզանից գոհ լինեն մտածելով. *«Մեր սերունդները, որպես քրիստոնյա, 1700 տարի հետո եթե մեզանից մի բանով առաջ չեն անցել, ապա գոնե հետ էլ չեն մնացել. արժանի՛ են լինել մեզ ժառանգորդ, իզուր չէ՞ին մեր՝ հավատքը, դրանով նաև մեր մարդկային ու ազգային ինքնությունը պահելու և նրանց փոխանցելու մեր պայքարը և կրած զրկանքներն ու զոհողությունները. իզուր չէր, որ մեծ ճգնանքներով նրանց համար հեղինակած մեր հոգևոր ու մտավոր գանձերի մեծ մասը մենք կարողացանք հասցնել նրանց»:*

Ու մեր նախնիները նաև ասեն. *«Մեր հոգիները հրճվում են՝ տեսնելով մեր սերունդներին, որ մարդկության մեջ հայորեն ապրելու, վարվելու կարգը գիտեն, պարտականությանը տեղյակ են, հետևում են մեր խրատներին, պատգամներին, լավ են օգտագործում մեր ժառանգությունը, և դրա հիման վրա զարգանալով իրենց ժամանակաշրջանի լա՛վ կրթությունից, գիտությունից, լա՛վ նպատակներ, լա՛վ ծրագրեր են որդեգրել և ժրաջանորեն աշխատում են դրանց վրա այնպես, որ իրենց թողած մեր ժառանգությունն ավելի հարստացրած իրենց զավակներին, թոռներին, սերունդներին փոխանցեն մեր սո՛ւրբ հավատքի և մեր սո՛ւրբ հայրենիք Հայաստանի ու պետության հետ միասին»:*

Սա այն մասին, թե ինչպես պետք է ներկայանանք մեր նախնիների հոգիներին, որոնց Աստվածաշնորհ հիասքա՛նչ հավատավորման շնորհիվ հոբելյանական ներկա տարեդարձն ենք պատրաստվում տոնել...

Բայց կա նաև մի առավելագույն սրբություն, արդարություն ու զորություն, Որին ներկայանալու մասին մտածելը ոչ

միայն տրամաբանական է (քրիստոնյայի համար), այլև կեն-սականորեն անհրաժեշտ ու հրամայական է անհամեմատ ավե-լի, քան որևէ բան, ներառյալ՝ այս աշխարհին ներկայանալը, որին պատրաստվում ենք բազմատեսակ միջոցառումներով:

Դա Սուրբ Երրորդությունն է՝ Հայրը, Որդին և Սուրբ Հո-գին՝ Աստված, Որի շնորհով հավատացինք և քրիստոնեացանք: Աստված հայ ազգին շնորհ արեց, որ պետականորեն առաջինը քրիստոնեանա: Հավատացել ենք դարերո՛վ, որ սա բացահայտ ապացույց է հայ ազգի նկատմամբ Աստվածային սիրո: Մա-սամբ հավատացել ենք նաև, որ այս եղելությունն ապացույց է նրա, որ Աստված հատուկ խնդիր է դրել հայ ազգի վրա և հատուկ ակնկալություն ունի մեզանից: Եվ սրանում է, որ երեկ ու այսօր մեր հոգևորականությունն ու պետական իշխանու-թյունը շատ մեծ գործ ունեն անելու. հայ ժողովրդին մատչե-լիորեն բացատրելու, որ պետականորեն քրիստոնեանալու առաջնության Աստվածապարգև պատվի հետ, նաև ***խնդիր-պարտականություն է դրվել հայ ազգի վրա*** (ավելի, քան ուրիշների), քանի որ Երկնային կանոնով ում շատ է տրվում, նրանից շատ էլ պահանջվում է:

Ուրեմն՝ ի՞նչ է պահանջվում հայ ազգից և մասնավորա-պես հայ հոգևորականներից, պետական իշխանավորներից, մտավորականներից և, վերջապես, հայրերից, մայրերից, տա-տերից, պապերից ու նաև զավակներից՝ մատաղ սերնդից, եթե ոչ՝ Սուրբ Երրորդությանը՝ Աստծուն ներկայանալ, մաքուր սրտի խորհուրդներով, բարեխիղճ գործերով, հայկական պե-տության ու Հայրապետության հանդեպ պարտականություններ-ի ինքնաբուխ կատարմամբ ու ըստ այնմ՝ մեր անձնական, ընտանեկան, հասարակական և հոգևոր ու պետական կյանքն արժանավայելորեն համապատասխանեցնելով աշխարհում առաջինը պետականորեն քրիստոնեացած ազգ անվանը, որ մեզ տրվել է որպես գերագույն շնորհ, պատիվ և վստահություն, մարդկության անդաստանում ծառայելու Իրեն, կատարելու Իր կամքը, Իր ծրագիրը և գործը:

Խորհրդային տիրապետության շրջանում նման խոհերի արտահայտումը կարող էր հանցավոր հետադիմական և կամ ծիծաղելի՝ «տերտերական», «պառավական», «ցնորական» համարվել (իր բոլոր կորստաբեր հետևանքներով): Այժմ, առանց որևէ վերապահության դրանք արտահայտում ենք, պարզապես իրերն իրենց անունով կոչելու համար: Եվ դա անում ենք, փառք Աստուծո, առանց երկյուղի, ***բայց մի մե՛ծ ցանկությամբ. ճի՛շտ հասկացվենք. հատկապես՝ մեր էությունը նշանավորող հավատքի 1700-ամյա հոբելյանական տոնակատարության հասկաղոցությա՛մբ, ըմբռնումո՛վ:***

Նոյեմբեր, 2002թ.

ՀԱՅ ԱԶԳԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԲԵՐԴ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Եկեղեցու զենքը՝ թուրն ու վահանը, Աստուծո խոսքը, հավատքով աղոթքը և դրանցով՝ հայ ժողովրդի հոգևոր դաստիարակությունն առաջնորդությունն է:

Հայոց Պետության զենքը՝ թուրն ու վահանը, Աստուծո հավատքի քաղաքացիացումը, քաղաքականացումը և այդ հավատքից առաջացած բարոյականությամբ՝ ազնիվ, հմուտ ու հեռանկարային կառավարումն է:

Եվ հայ հասարակությա՛ն անպարտելի զենքը՝ թուրն ու վահանը, այդ հավատքի գաղափարով, բարոյականությամբ, կենցաղավարությամբ ու քաղաքացիական պարտաճանաչությամբ ապրելն ու գործելն է:

Իսկ համա՛յն հայության այդպիսով՝ Աստվածասիրությամբ, հետևապես և մարդասիրությամբ ու հայկականության հոգեկանությամբ ապրումը, սուրբ սրտերից ու շրթներից բխող

աղոթքների հետ միասին՝ անսասան հիմքն է հայկական պետության ու անքակտելի շաղախն է ազգային միաբանության, միասնության, համատեղ՝ Աստվածահաճո՛ գործունեության ու ամեն ինչում հաղթանակների:

Եվ մեր հավատքը մեզ ուսուցանում է, որ ամեն ինչ, որ ստեղծագործ է, կառուցողական ու կենարար, ի վերջո սրբությամբ է: Իսկ *սրբությունն Աստուծո խոսքով ճշմարտության ճանաչումն է՝ Հիսուսի Աստվածությունը.* Եվ Աստվածորդին դիմելով հորն ասում է. «*Սրբացրո՛ւ նրանց Քո ճշմարտությամբ, որովհետև Քո խոսքը ճշմարտություն է: Ինչպես Դու Ինձ ուղարկեցիր աշխարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: Եվ ես Ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ» (Հովհաննես, 17.17-19):*

21 - 02 - 2003թ.

ՀԱՎԱՏՔԸ ՉԵԶՈՔ ՉԷ

Հավատքի մեջ չեզոքություն չի կարող լինել: Առավել ևս, չի կարո՛ղ լինել արհեստական կամ կիսատ հավատք: Չի՛ կարող լինել արհեստական կամ կիսատ եկեղեցի, արհեստական կամ կիսատ հոգևորական, արհեստական կամ կիսատ հայ քրիստոնյա, արհեստական կամ կիսատ հայ քրիստոնյա պետություն… Որովհետև, եթե լինի, ազգն այդպիսով ամուլ կդառնա, կզրկվի վարակամերժ զորությունից, գործելու կարողությունից, ու իր ինքնության կենսունակությունից: Ու այդպիսով ենթակա լինելով ամեն տեսակի հոգեկան, գաղափարական, բարոյական (նաև ֆիզիկական) ՄԻԱՎ-ի ախտահարման՝ զերծ կդառնա նաև ազատ, անկախ, բարգավաճ հայրենիքում Աստվածապատգամ քրիստոնեական կյանքով ապրելու թե՛ գիտակ-

ցությունից, թե՛ ցանկությունի՛ց և թե՛ կարողությունից, որովհետև այդպիսի ազգը զզվելի՛ և խո՛րթ կլինի Աստուծուն...

* * *

Տրդատ արքան երկրային կյանքի մարտահրավերը (տարբեր դաժան փորձություններից հետո) ընդունեց, սին կյանքի դեմ պայքարեց, հաղթեց ու սրբացավ:

1700 տարի և դեռ շատ ավելի երկար տարիների ընթացքում այդ մարտահրավերին դիմակայել են Հայկի սերունդները, նրանք երբեմն պարտվել, բայց հիմնականում հաղթել են իրենց բնազդական հավատքի հանդեպ ունեցած հավատարմության հարատևությամբ:

Վերջին երկհարյուրամյակում մարտահրավերն ավելի բարդ ու վտանգավոր դարձավ նրանով, որ հարձակումը նաև ներսից՝ մե՛ր իսկ միջից սաստկացավ: Եվ դա իսկականի ու կեղծի, մշտականի ու անցողիկի, հոգեկանի ու նյութականի և, վերջապես, բարու և չարի պայքարն է, որ նորանոր միջոցներով ու ձևերով այսօր էլ շարունակվում է: Ու ա՛յս պայմաններում, որպես մարդկային էակ և որպես հայ մարդ, մեր կյանքի ամենաէական, ամենավճռական ու ամենապատասխանատու որոշումը պիտի լինի՝ առանց շեղվելու քրիստոնեական հավատքից և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարից (որը մեզ համար Հայ Ազգային Գաղափարախոսությունն է), միշտ անշեղ ընթանալը հայոց տոհմիկ բարոյականության ուղիով:

Վերջին հաշվով, մեր ազգի, Հանրապետության ու Հայրապետության գլխավոր, հիմնական ու էական նպատակային խնդիրն է՝ սովորեցնել, խրախուսել և հաստատել յուրաքանչյուր հայի ու համայն հայության հավատարմությունը Աստուծո հավատքին և հարազատությունն Աստուծո Արքայությանը:

Եվ հայ ազգն ու հայրենիք Հայաստանն աշխարհում կլինեն Աստուծո Արքայության դաշնակից, գործակից ու նաև պաշտպանյալներ, դառնալով անպարտելի միշտ ու ամենուր,

բոլոր ճակատներում, բոլոր բնագավառներում, իսկ գերագույն ու հավերժական երջանկության համար կյանքում հաղթանակն ապահովված կլինի Աստվածային երաշխավորմամբ, Ալֆայով և Օմեգայով:

Ահա հայոց պետականության, պետության ու Հայրապետության ռազմավարությունը:

Ահա Ազգի ու Երկրի գոյության, անվտանգության, զարգացման և ամենա՛յն վերելքի հոգևոր ու աշխարհիկ քաղաքականությունը:

Եվ Քրիստոսանվեր մաքուր սրտով, մտքով ու սիրով համակված՝ հայի, հայության և պետության՝ Աստուծուն դաշնակցելու միայն ***ծգտումն իսկ*** կհարթի մեր երթը դեպի Քրիստոսափառ կյանք՝ այժմ և հավիտյանս:

2011թ.

ԻՆՉԸ ԻՆՉՈՎ Է ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ

Հավատքի՛ց պետք է բխի մշակույթը (ինչպես և կրթությունը) և լինի հավատքի համար՝ հավատքի ընկալման, հաստատման, տարածման ու ամրապնդման համար:

Այնժամ հավատքով մշակույթը (ինչպես և կրթությունը) կդառնա նախևառաջ հոգևոր, գաղափարական և բարոյական, այսինքն՝ իսկակա՛ն մշակույթ (ինչպես և կրթությունը)՝ ծառայելով մարդուն, մեր դեպքում հային ու հայությանը, բերելով նրան նաև բարություն, վեհություն, առաջադիմություն, երջանկություն ու ամեն ինչում ապահովություն: Եվ այդպիսի՛ մշակույթով (ինչպես և կրթությամբ) ապրող հայության համար կառաջանա նաև ազգային համապատասխան ինքնագիտակցություն, գաղափարականություն, բարոյականություն և ինքնաբուխ ու ինքնակառավարվող քաղաքացիական պարտաճանաչություն:

Վերջինս անհրաժեշտ է հատկապես հայությա՛ն համար, որի շուրջ երկու երրորդն աշխարհատարած է:

Կիրակի, 29 - 01 - 2017թ., ժամը 23:30

ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԻՐԱԿԱՆՈՒՄ ՊԻՂԾ ԵՆ ՈՒ ԿՈՐՍՏԱԲԵՐ

5-րդ, 6-րդ շարասյուները չեն կարող ստեղծվել ու բազմանալ հավատացյալ, գաղափարական, բարոյական, ազնիվ, հայրենագետ ու հայրենասեր հայերից, այլ առաջանում են այդ արժանիքներից ու հատկություններից զուրկ այլասերվածներից, որով և ծախվողներից...

Իսկ այլասերումն սկսվում է հոգեկանության տկարացումից, նվազումից, անբավարարությունից, որպես հավատազրկության հետևանք: Սրան հետևում է գաղափարազրկությունն ու այնուհետև բարոյականության և ըստ այնմ կենցաղավարության աղավաղումն ու փչացումը, որոնք առնչված են մարդկային-ազգային սրբությունների, ավանդությունների և մշակութային ու կենցաղային առանձնահատկությունների հետ, ներառյալ՝ կրթությունն ու դաստիարակությունը:

Ու երբ չարը, թշնամին նվաճում և տիրում է մեր ազգի ու հատկապես մատաղ սերնդի մի զգալի (կրիտիկական) չափի սրտերի ու մտքերի վրա, դրանով տեղավորվում է նաև մեր ազգի կառավարման՝ օրենսդիր, գործադիր ու դատական համակարգերում, որով և կրթական, մշակութային, տեղեկատվական հաստատություններում: Եվ ի՞նչ, այն, որ հայ մարդը, հատկապես տղաներն ու աղջիկներն սկսում են մտածել, բարոյապես ձևավորվել ու արդյունքում նաև հավատավորվել այդպիսի կողմերից ստեղծված և կառավարվող մարդկային-հայկականությանը խորթ տեսություններից, որոնք տանում են դեպի առերևույթ, իբրև թե մարդկային-հայկականության հոգևորը,

մտավորը, գաղափարականն ու նաև կենցաղայինը (մեջն էլ ազգային մոդայի, նորաձևությունների հանդեպ հակումը), սակայն իրականում գլխահակ քշում, տանում են դեպի «Բաբելոնի աշտարակ», որտեղից էլ մեծ հավանականությամբ՝ դեպի «Սոդոմի և Գոմորի» մարդկային գարշելիություն՝ իր բոլոր պիղծ, խայտառակ և կորստաբեր հետևանքներով:

Բայց սա չի՛ կարող հեռանկար լինել Հայկյան ազգի՝ Վարդանանց ժառանգներ հայության համար: Հայությունը չի՛ կարող այդպիսի հեռանկար ունենալ՝ ցավալի մեր մեծերի, սրբերի, նահատակների հոգիների համար, թշվառ ու վնասակար մեր իրականության համար և ամոթալի ու կորստաբեր՝ մեր սերունդների համար:

Այդպիսի հետևանք-հեռանկարի տանող ո՛րևէ պատճառ անընդունելի, վճռականապես մերժելի՛ պետք է լինի դեռ հայորեն մտածող, զգացող ու ապրող յուրաքանչյուր հայի համար: Սա առավել ևս այդպես պետք է լինի նրա հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունների համար, պետության ու եկեղեցվո համար և օրինական բոլո՛ր միջոցների գործադրմամբ պետք է վերացվի՛ դեպի պղծություն ու կորուստ տանող ո՛րևէ այդպիսի պատճառ: Այն պետք է վճռականորեն դուրս մղվի, վերացվի և ***փոխարինվի*** դեպի լույս, սրբություն ու կյանք պարգևող գործոններով, նախադրյալներով՝ Տիրոջ կամքով:

Ա՛յս ***փոխարինմանն*** են արժանի Հայկի, Մեսրոպի, Վարդանի և նրանց նմանների ժառանգ հայությունը և նրա սերունդները: Այդ արժանիքը կլինի հայոց կուռ հավատքո՛վ միասնությամբ, որի առկայության հաստա՛տ երաշխիքը մեր ազգի հոգևոր ու աշխարհիկ միասնությունն ու գործակցությունն է: Ինչպես հոգու և մարմնի իրար լրացնելով է մարդու գոյությունը:

Երկուշաբթի, 04 - 01 - 2016թ.

ԱՐԴՅՈ՞Ք ՇՏԿԵԼ ԵՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ դպրոցական կրթության մեջ անաստվածության, աթեիզմի նյութապաշտական՝ մատերիալիստական միտումները, թեև աննշան ի հայտ էին գալիս դեռ նախքան բոլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում: Սակայն խորհրդային տիրապետության 70-ամյա ժամանակաշրջանում այդ միտումները մեծ մասշտաբներով կոպտորեն բռնագործադրվեցին այդ ռեժիմի տակ ապրող համայն ու հատկապես հայաստանաբնակ հայության նկատմամբ: Եվ այդ իրողությունն այժմ յուրաքանչյուր մտածող հայի համար պարզ ու հասկանալի լինելով հանդերձ՝ հարց կարող է առաջացնել այդ երևույթի հիշատակման նպատակի մասին, թե ինչո՞ւ հենց այժմ:

Բայց այդ երևույթին անդրադառնալու նպատակը ստուգել, հասկանալն է, թե այժմ՝ մեր անկախության հռչակման 25-րդ տարում հայեցի կրթության մեջ, արդյոք այս կամ այն կերպով, ձևով և չափով աստվածամերժ նյութապաշտության ուսուցումը կամ դրա միտումը կամ խրախուսումը չի՞ շարունակվում Հայաստանի ու Արցախի հանրապետություններում, Ջավախքում և Սփյուռքում:

Շարունակվո՞ւմ է, թե՞ ոչ: Եթե ոչ՝ փառք ու պատիվ մեր հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին ու նաև կրթության բնագավառի ղեկավարությանը, իսկ եթե այո՛, եթե այդ մարդաքանդ ու ազգաքանդ ուսուցման նույնիսկ որևէ՛ ձևն ու չափն իսկ առկա է հայ դպրոցներում, ապա այդ դեպքում շատ վատ բաներ պետք է սպասել և դրա համար էլ, ըստ այնմ, պետք է ասել՝ առաջին հերթին հայ ղեկավարության, հոգևորականության, այդ բնագավառի պաշտոնեության և ընդհա՛նրա-

պես մտավորականության հասցեին, սակայն դրա հետ մեկտեղ շատ վատ բաներ պետք է ասվեն նաև յուրաքանչյուր հայի, հատկապես ծնողի, պապի ու տատի հասցեին՝ միաժամանակ նախատեսելով վերատեսության ենթարկել մեր մարդկային-ազգային ինքնագիտակցությունն ու խիղճը:

Մեծ հարց է նաև, թե արդյոք մնացե՞լ են մեր մեջ մեր նախնյաց հավատքը, դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությունը, բարոյականությունը, ըստ այնմ մտածելակերպը, դատողությունը և էլ չասած նրանց հավատքո՛վ գործերը, արարքները, որոնց շնորհիվ էլ մենք դեռ կա՛նք որպես մարդ և որպես հա՛յ մարդ՝ մեր Հայաստան ազգապետությամբ:

Պետություն, որը, թեև մեր հայրենիքի միայն մեկ կոտորակված տարածության վրա է, այն էլ բազմաթիվ և ծանր խնդիրներով, մարտահրավերներով ու առանց իր ժողովրդի՝ հայության երկու երրորդի և բնականոն ծովային ու այլ ելքի, սակայն եթե հավատքի հույսով և սիրով համակված հավատարիմ լինենք մեր Աստվածակերտ ազգային ինքնությանը, մեր երկրին ու պետությանը, ապա մեր վերընթացն ու բոլոր հարցերի լուծումը, և բոլոր պահանջների բավարարումը կլինի հաստատապես, Երկնայի՛ն երաշխավորությամբ:

Երեքշաբթի, 21 - 10 - 2014թ., ժամը 16:00, Մինսկ

ՉԱՆՏԵՍԵԼ ԷԱԿԱՆԸ՝ ԿՅԱՆՔԸ

Հանրահայտ է, և կյանքի փաստերն էլ ապացուցում են, որ նյութական նշանակության կառույցները, ներառյալ կրթական, գիտական, մշակութային, առողջապահական և նույնիսկ տնտեսական, ֆինանսական ու արտադրական, չե՛ն կարող ապահովել, բավարարել մարդու, հասարակության, ազգի, երկրի և պետության պահանջները՝ գոյատևելու, զարգանալու և համընդհանուր վերելք ունենալու համար՝ որպես մարդ և մարդկային հասարակություն: Եվ դա չի կարող լինել նաև հայ իրականության մեջ ***հոգեկանության հարաճուն անբավարարության պատճառով:***

Այդ չի կարող լինել նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցու մեջ, եթե հիմնականում գործում է ո՛չ թե համաձայն իր կոչումի և պարտականության՝ հայությունը դարձնելու Աստուծո ազգ և փրկելու հայոց հոգիները, այլ գործում է որպես ազգային ավանդապաշտ (թեկուզև հոգևոր) կառույց: Ու առավել ևս, այդ չի կարող լինել, եթե հանդես է գալիս որպես ազգի մշակութային հարատևության կառույց (ինչպես հատկապես սփյուռքյան որոշ կղերականներ հասկանում ու հայտարարում են իրենց կիրակնօրյա քարոզներում. «Հայ ազգի գոյատևման մեր պայքարին մեջ ամենակարևորը և էականը մշակույթն է, մեր մշակույթի պաշտպանելն ու պահպանելն է»):

Եվ չի՛ կարող այդ լինել նույնիսկ հոգևո՛ր արարողություններով, ծեսերով, եթե եկեղեցին չի ուսուցանում և ուսուցանողների (ու վերջիններիս ավագների) օրինակով իր հոտի սրտերում և մտքերում չի դրոշմում Աստուծո խոսքը՝ Ճշմարտությունը՝ Սրբությունը ու դրանցով ապրելու և գործելու ցանկությունն ու կերպերը (դա՛րձյալ իր օրինակով): Իսկ Հայաստան-

յայց առաքելական սուրբ եկեղեցվո հոտը համայն հայությունն է, իր պետությա՛մբ հանդերձ և նրա գլխավորությամբ: ***«Սրբացրո՛ւ նրանց Քո ճշմարտությամբ, որովհետև Քո խոսքը ճշմարտություն է... Եվ ես Ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ» (Հովհաննես, 17.19):***

Չէ՞ որ սրբացումն ու սրբությունն է վերածնունդի և փրկության Աստվածային արդար ճանապարհն ու հավերժ երաշխիքը:

Կարո՞ղ է հայության ազգային եկեղեցին ժողովրդի և պետության սրբացումն ու սրբությամբ ապրելը թիվ մեկ նպատակխնդիր և գործադրման ծրագիր դարձնել: Ու կարո՞ղ է իր բոլոր միջոցներով ու անկեղծ հետևողականությամբ ձգտել դրան, հավատալով, որ Աստուծո օգնությամբ՝ մեր եկեղեցվո, ժողովրդի և պետության միասնությամբ կդառնա 21-րդ դարում քրիստոնեական վերածննդի սկզբնավորման առաջին ազգի ու պետության եկեղեցին: Ինչպես 17 դար առաջ՝ 301 թվականին:

19.05. 2014թ., կեսգիշեր, Ստեփանակերտ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎԵՐԵԼՔ ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ

Այսօր և վաղն այս վերնագրում ասված վիճակին հասնելու համար մեկ ուղի կա, մեկ միջոց կա և մեկ հնարավորություն, որ շնորհ է ի վերուստ՝

- հայոց հոգևոր վերածնունդը: Դրանով.

- վերաճանաչումը, վերընդունումը և վերակիրառումը 17 դար առաջ սրբագործված մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության: Դրանցով.

- վերականգնումը Հայ Ազգային Բարոյական արժեհամակարգի, ըստ այնմ՝ կենցաղավարության, պետական մտածելա-

կերպի, պարտաճանաչության ու մարդկային-ազգային Աստվածահաճո կյանքի ապրումի:

Եվ հայության ազգային-հավաքակա՛ն ու հայի անձնակա՛ն այդպիսի ապրումը կլինի անկախ սեռից, տարիքից, սոցիալական վիճակից, ապրելու վայրից ու այլ պայմաններից:

Ու այս բոլորը կիրականանան, կլինեն՝ հոգևոր վերածննդով առ Աստված՝ մեր վերականգնված հավատքով՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Ուրեմն, հայության առաջնային նպատակ-խնդիրը՝ հոգևոր վերածնունդը, սկսվում է հայության հավատքի վերականգնումից՝ Ավետարանի նորո՛գ ճանաչմամբ, Խաչի խորհրդի նորո՛գ ընկալմամբ և ըստ այնմ՝ նորո՛գ ապրելակերպով: Իսկ սա նշանակում է, որ սուրբ Ավետարանի իմաստության, գիտության ու Սուրբ Խաչի խորհրդի և զորության ուսուցումը, ընկալումը, և ըստ այնմ՝ կյանքի ապրումը հայության կենսական, հիմնական խնդրի ու առաջնային գործի կատարումն է՝ որպես հաց հանապազօրյա: Եվ ով հետ մնա դրանից, հետ կմնա նախևառաջ Արարիչ Հոր շնորհից: Ով անտարբերությամբ կամ այլ պատճառով անտեսի, հրաժարվի դրանից, կուրանա իր Աստվածատուր ինքնությունը, որով և իր Արարչին, կորցնելով իր հոգին, իր իսկական եսը՝ իր հավիտենական կյանքը:

Որպեսզի հայության մեջ միայն մե՛կ իսկ այդպիսի թշվառական չլինի, առաջին հերթին ու առաջին շարքում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի՛ն պիտի գործի, պայքարի և կատարի իր փրկչական առաքելությունը՝ համաձայն իր կոչումի, պարտքի ու ընդհանրական գոյության:

Եվ քանի որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին այդպիսի պարտք ունի, նշանակում է համայն հայությունն ու յուրաքանչյուր հայ ևս ունեն այդ պարտքը, որը, որպես իրենց կյանքի իմաստավորում, պետք է անհապաղ և լիարժեքորեն կատարեն դարձյալ՝ անկախ սեռից, տարիքից, սոցիալական վիճակից ու ապրելու վայրից՝ միշտ, ամենուր, ամեն ինչում: Եվ դա անընդհատ կատարելագործվելով՝ հոգեպես, գաղափարապես, բարոյապես ու ըստ այնմ՝ կյանքի ապ-

րումով, ներառյալ՝ կենցաղավարությունն ու հորիզոնական և ուղղահայաց հարաբերությունները:

Իսկ քանի որ համայն հայությունն ու յուրաքանչյուր հայ պիտի այդ անեն, ապա այդ անելն Արարիչ Հոր լուսավորությամբ պիտի նախաձեռնեն, կազմակերպեն ու սկսեն հայոց պետականությունը, պետությունը և Հայրապետությունը:

Եվ այդ սկիզբը, անկախ նրանից, թե դրա համար խորթ ու օտար կողմերն ինչ կասեն և ինչ սպառնալիքներ կանեն, այդ սկզբնավորումը կլինի հավատքին, ինքնությանը, էությանը և արժանապատիվ նախնիների ժառանգությանը հավատարիմ հայկական ազգային արժեքներո՛վ պետության ու Հայրապետության առաջնային պարտքի աննկուն կատարումը հա՛յ ազգի առջև, հա՛յ սերունդների առջև, մարդկությա՛ն առջև ու ամենաէականը՝ Արարիչ Հոր՝ Աստուծո առջև:

21 - 06 - 2012թ.

ՄԻՇՏ, ԱՄԵՆՈՒՐ ԵՎ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
(Կարճ, բայց ըստ էության)

Հայությունը, եթե դեռ քրիստոնյա՛ է, և քրիստոնյա է Հայաստանը, ապա հայոց պետությունը չի՛ կարող լինել այլ ինչ, քան նո՛ւյնպես քրիստոնյա: Սա՛ է ճշմարիտը, սա՛ է տրամաբանականը, և սա՛ է արդարն ու օգտաշատը: Չի՛ կարելի իրականությունից մատի հետևում թաքնվել...

Ու եթե դա՛ է ճշմարտությունը, նշանակում է մեր անձնական, ընտանեկան, հասարակական ու պետական ***հարաբերությունները*** ևս պետք է լինեն քրիստոնեական, ու ըստ այդմ պետք է լինի մեր ***կյանքի ապրումը***՝ փրկելու և զերծ ու ազատ պահելու համար անհատին, ազգին ու պետությանը նյութապաշտությունից՝ մեր ժամանակների հեթանոսությունից, որով

և՝ կորստաբեր հավատազրկությունից, դրա հետևանք գաղափարազրկությունից, բարոյազրկությունից և արատավոր կենցաղավարությունից՝ գոհի վախճանից:

Հայության ընտանեկան, հասարակական ու պետական հարաբերությունների համակարգը պետք է լիովի՛ն զերծ լինի ամեն տեսակի հոգևոր, բարոյական ու նյութական կոռումպացումից՝ քրիստոնեանալով իրապե՛ս: Եվ դա հայերի և նրանց մեջ առաջի՛ն հերթին պետական պաշտոնատարների ու հասարակության առաջատարների գործն է՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո պատասխանատո՛ւ մասնակցությամբ: Եվ այդ գործը շատ հաճախ է ենթադրելու նաև վճռական պայքար…

Բայց դա Աստվածապատգա՛մ ու Աստվածահաճո՛ պայքար է, որ ամեն դիրքի, վիճակի և բնակավայրի գիտակից հայերն իր ժամանակին մղում են Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո Ղևոնդ Երեցյան նախաձեռնությամբ ու առաջնորդությամբ:

Եվ դա անում են ո՛չ թե որևէ իշխանության հասնելու և կամ իշխանություն բանեցնելու համար, ո՛չ էլ ինչ-որ իշխանամե՛տ երևալու համար, այլ հոգու հոժար պարտաճանաչությամբ ծառայելու համար Աստուծո՛ւն, որով և իրենց ազգին ու պետությանը, և դրանով հավատարիմ մնալու իրենց կոչմանը և իմաստավորելու համար իրենց ապրած կյանքը՝ արժանանալով երկնային հավերժակա՛ն կյանքին: Եվ հայերի՝ հավատքո՛վ այս գիտակցությունն ու պարտաճանաչությունը թող երբե՛ք հնացած, ներկա իրականությունից կտրված ու անհեռանկարային չթվա, որովհետև այն բխում է և հիմնված է մարդկային, հետևապես և մեր ազգային անանց արժեքների ու հավերժական կյանք պարգևող հավատքի վրա, որը մեզ հոգեպես ապրեցնող սուրբ ժառանգություն է՝ փոխանցված Արարիչ Հոր հավատարիմ մեր անմահ նախնիների, մեր մեծերի, մեր սրբերի կողմից, որպեսզի մենք էլ արժանանանք իրակա՛ն կյանքին. մե՛ր օրերում և հավիտյանս:

Չորեքշաբթի, 11 - 07 - 2018թ., ժամը 06:54

ՀԱՄԱՌՈՏ, ԲԱՅՑ ԿԱՐԵՎՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Տարոնի Հացեկաց գյուղից երանելի Վարդանի որդին՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցը և Մեծն Ներսես կաթողիկոսի որդի Սահակ Պարթև կաթողիկոսը (սուրբ Գրիգոր Լուսավորչի հավատարիմ, շնորհաշատ ժառանգները), Վռամշապուհ իմաստուն արքայի հովանավորությամբ, իրենց սրբագործ ջանքերով հայոց գրերի գյուտից և դրանց ուսուցման գործն սկսելուց անմիջապես հետո, սկիզբ դրեցին Սուրբ Թարգմանչաց շարժմանը և Հայոց Ոսկեդարին:

Եվ 5-րդ դարում սկիզբ առած՝ քրիստոնեացած հայ ազգի այդ շարժումը հավերժական ճանապարհ հարթեց նորոգ հոգեկանացած հայկականության ու հայ քրիստոնեական մշակույթի լինելիության համար:

Դարերի բազում վայրիվերումները և վտանգները հաղթահարելով՝ դրանք եկել, հասել են մեզ: Եվ մենք խստագույնս պարտավոր ենք դրանք փոխանցել սերունդներին, ուր և ինչ պայմաններում էլ մենք ու նրանք գտնվենք:

Այժմ՝ 2018 թվականին, համայն հայության, հայ պետության ու Հայրապետության համար կենսական պահանջ է, որ հայության և Հայաստանի մեջ վերականգնվի Թարգմանչաց շարժումը՝ ա՛նպայման ժամանակակից ձևով, սակայն նույն *տոհմիկ բովանդակությամբ և նպատակով:*

Իսկ նպատակը հայոց հոգեկանության, գաղափարականության, բարոյականության և ըստ այնմ՝ կենցաղավարության մերօրյա ձևերով հաստատումն է՝ համաձայն հայոց սրբագործված 17-դարյա հավատքի:

Ու այդ երեք հիմնասյուների՝ հոգեկանության, գաղափարականության և բարոյականության վրա հավատքով հարա-

ճունորեն պիտի աճի, զարգանա, զորանա և բարգավաճի հայ կյանքը՝ իր կրթությամբ, մշակույթով, կենցաղով, պետական գործունեությամբ և ներքին ու արտաքին քաղաքականությամբ:

Ուրբաթ, 14 - 12 - 2018թ., ժամը 07:40, Մոսկվա

ԻՆՉՊԵ՞Ս ԱՊՐԵԼ

«...Որովհետև, ով որ չվերցնի իր խաչը և Իմ հետևից չգա, չի կարող Իմ աշակերտը լինել»
(Ղուկաս, 14.27):

Ուրեմն յուրաքանչյուր անձ ու ազգ, ինչպես և հայն ու հայությունը, ունի «իր խաչը», որ պետք է վերցնի և Տիրոջ հետևից գնա, Նրա պատգամներով, որպեսզի **Նրա աշակերտը լինի:** Այսինքն՝ քրիստոնյա լինի, **հայը և հայությունը՝ քրիստոնյա**: Բայց սա մի ամբողջ գիտություն է, գե՛րգիտություն. աշխարհիկ մարդու համար «ծանր, անտանելի լուծ և բեռ», որն անկարելի է կրել, այն էլ՝ ամբողջ կյանքի ընթացքում, բոլոր պարագաներում, ու նաև կրել գոհունակությամբ, ժպիտով ու գերերջանիկ զգացումով: Սակայն այդ «անկարելին» լիովին ու հոյակապորե՛ն կարելի է դառնում Տիրոջ մեկ այլ պատգամի կատարմամբ. ***«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ., 11.28):***

Եվ մեր նախնիների, մեծերի, սրբերի ու նահատակների պես հավատքով դեպի Տերը գնալով, Նրա խոսքը լսելով և Նրանից սովորելով մենք հաստատ համոզվում ենք, որ Տիրոջ պատգամների կատարմա՛մբ պիտի ***իմաստավորվի*** մեր կարճատև ու փորձություններով լի կյանքը և արժանանա Նրա շնորհներին այժմ և հավիտյանս:

Առանց այս հավատքի, որի առանցքը անմահ հոգու (մարդու իսկական եսի) փրկությունն ու հավերժ երանելի կյանքին արժանանալու հույսն է, չկա քրիստոնյա և քրիստոնեություն, այլ կարող է լինել մասամբ՝ ծիսակատարություն և ի վերջո՝ աշխարհիկ հեթանոսական ինքնախաբեություն:

Բայց մարդկության և դրա մեջ հայության ու հայի կողմից ա՛յս հույսը (որը բացարձակապես գերազանցում է ինչ որ իրապաշտ, պրակտիկ, պրագմատիկ, ռացիոնալ հաստատուն և այլն է համարվում) աշխարհի ամեն քայլափոխում հարցադրվում է. մի՞թե կարելի է ապրել քրիստոնեական հավատքով և կյանքով, այն էլ պետականորեն:

Հարցը գուցե տեղին է և հույժ կարևոր, իսկ դրա հոգեբուխ պատասխանն այն է, որ ***չի՛ կարելի ապրել,*** եթե հույսդ դրել ես քո աշխարհիկ գիտության վրա և ապավինում ես աշխարհիկ ուժին ու ամեն տեսակի զորությանը, կարողությանը, որոնք «լայն դուռ են», սակայն՝ տանում են դեպի ճահճախրում ու կորուստ:

Եվ կարելի՛ է ապրել, եթե կյանքդ քրիստոնեական հավատքով է, որը կարող է, ինչ-որ ժամանակ «նեղ դուռ» էլ թվալ, բայց տանում է դեպի փրկություն և հավիտենական կյանք. եթե «մաքրում ես սիրտդ, դառնում մանուկ», որով լսո՛ւմ, վստահում, հասկանում և հետևո՛ւմ, կատարո՛ւմ ես Տիրոջ պատգամները՝ ***ապավինելով Նրան՝*** «աղավնու պես միամիտ» և լինելով Նրա հակառակորդների հանդեպ «օձի պես խորագետ», այսինքն՝ զգո՛ն, արթո՛ւն՝ չխաբվելու համար չարից, այլ հավատարմությամբ հավատքին՝ դառնալու երանելի՝ թե՛ ժամանակավոր և թե՛ հավիտենական կյանքում:

Արարիչ Հոր պարգևած ազատ կամքով ո՞ր դռնով մուտք գործելու ընտրությունը մարդո՛ւնն է, հայի՛նն է՝ մե՛րն է՝ մեր ընտանիքների՛նն ու պետությա՛նն է: Եվ Խաչյալ Աստվածորդու պատգամով մեր ընտրությունը «նե՛ղ դռնով» է: Եվ մեր իրա՛վ մեծերը, սրբերը, նահատակները՝ հավատքով՝ Խաչին և հավատարմությամբ՝ Քրիստոսի պատգամներին հաստատ ու անկունորեն այդ ուղղությամբ են գնացել ու այդ ընթացքն են մեզ

ժառանգություն թողել, որ մենք ու մեր հաջորդ սերունդները ևս կյանքում նրանց պես հաստատորե՛ն ընթանանք մոլորվածների կողմից չտեսնվող «նե՛ղ» դռնով դեպի իսկակա՛ն կյանք՝ ա՛յժմ և հավիտյանս:

30 - 07 - 2007թ.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ՝ ԸՍՏ ԵՐԵՎՈՒՅԹԻՆ ԴԺՎԱՐԱՑՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գուցե հարկ է դարձյալ ազգովին անդրադառնալ այն էական հարցին, թե Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին իր անանց կոչումի համաձայն՝ իր անանց պարտականությունները կատարելու և մասնավորապես 21-րդ դարասկզբի աշխարհում (ներառյալ որոշ հարուստ, զարգացած հորջորջվող երկրներում) հակաքրիստոնեական սաստկացող և մեր հայրենիքում էլ հայտնվող մարտահրավերները դիմագրավելով՝ ***հայության հոգեբարոյական անաղարտության պահպանման կենսական պահանջն ապահովելու խնդիրն ի՞նչ չափով է ընկալում և կատարում: Եվ ջանո՞ւմ է նաև այդ կատարմանը գործուն մասնակից դարձնել հայոց պետությանը և յուրաքանչյուր հայի:***

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին արդյոք կարողանո՞ւմ է ***լիարժեք կատարել*** այդ գնալով մեծացող, բարդացող, դժվարացող և հարաճունորեն վնասաբեր դարձող խնդիրը:

Եթե այո՛, ո՞ւր է այն, ինչո՞ւ չի երևում:

Իսկ եթե ոչ,երկու հարց:

Առաջին. ինչպիսի՞ն են չկարողանալու պատճառները և ի՞նչ է արվել, արվում է և կամ ծրագրվում է անել՝ հաղթահարելու, վերացնելու այդ պատճառները:

Երկրորդ հարց. ինչպիսի՞ն են չկարողանալու հետևանք-

ները մեր ժողովրդի հոգեկանության, գաղափարականության, բարոյականության և վարակամերժ կարողության վրա: Եթե հետևանքներն բացասակա՛ն են, ուրեմն մեր մարդկային ու ազգային էությունն անպաշտպա՞ն է չարի՝ 20-21-րդ դարերի պղծարշավից, իր բոլոր անկումային հետևանքներով:

Սրանք ներազգային անկեղծ, հարազատ և մտահոգ հարցադրումներ են:

Եվ դրանց հարակից (նույնքան անկեղծ, հարազատ ու մտահոգ) ևս երկու հարց:

Անցյալում մեր կրած դարավոր ճնշումներից և ահավոր կորուստներով լի 20-րդ դարի վերապրումից հետո՝ 21-րդ դարասկզբի մեր օրերում էլ աննախադեպ փորձություններին դեմ հանդիման՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ի՞նչ չափով է դիմադրում, դիմանում, ի՞նչ չափով է խոցելի այդ փորձություններից և ի՞նչ չափով է պաշտպանված ինքը և կարողանում է պաշտպանել հայրենաբնակ ու աշխարհատարած հայությանը:

Եվ մյուս հարցը (որն ինչքա՛ն էլ ցավոտ է և ցավո՛վ է տրվում, սակայն պե՛տք է տրվի, եթե իսկապես սիրում ենք մեր եկեղեցին ու հարազատ ենք նրան) հետևյալն է. արդյոք գոյություն ունեցող համատարած այլասեռությունը, նյութապաշտությունը և կոռուպցիան ինչ-որ կերպ ու ինչ-որ չափով չե՞ն սողոսկել, ներթափանցել մեր կղերականության մեջ՝ առաջացնելով հոգևոր, բարոյական և կազմակերպական ախտահարում: Եվ դրանով ինչ-որ չափով չե՞ն աղավաղվել արդյոք հայ կղերականի տոհմիկ սրբագործված կերպարը, գիտակցությունը, պատվախնդրությունը, պարտաճանաչությունը, նախանձախնդրությունն ու նվիրումն իր սրբազան կոչման և պարտականության հանդեպ:

Ու եթե, Աստված մի՛ արասցե, դա տեղի է ունեցել, ապա ինչպիսի՞ն են նաև դրա՛ հետևանքները Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կարողության վրա՝ կատարելու այսօր իր իսկակա՛ն, հիմնակա՛ն պարտականությունը՝ Տիրոջ, ազգի, հայրենիքի ու նաև մարդկության հանդեպ:

Ի՞նչ պետք է անել՝ հավաստիանալու համար, որ այդպիսի բան տեղի չի՛ ունեցել, և դրա վտանգը չկա՛: Որովհետև, եթե տեղի է ունեցել, և դեռ դրա վտանգն էլ շարունակվում է, ապա այդպիսի վիճակի մեջ լինելու գինը, որը շատ մեծ ու ծանր է, վճարելու են ոչ միայն առաջին հերթին մեր կղերականները, այլև մեր ազգային եկեղեցին, պետությունը և ազգն ու հայրենիքն ամբողջությամբ, ու նաև մեր անմեղ սերունդները, եթե Աստծո ողորմությամբ արժանի լինենք ունենալ...

Եվ քանի որ ինքնաճանաչումը, ինքնագնահատումը և ըստ այնմ՝ ինքնամաքրումը շա՛տ ավելին են, քան չարյաց փոքրագույնով բավարարվելը, ապա այդ հարցերին (իհարկե մեղայի գալով) ազգովին, սակայն ամենալավը մեր կղերականության նախաձեռնությամբ և գլխավորությամբ անդրադառնալն է՝ չսպասելով, որ այդ անի թշնամին ու չարը և նույնիսկ անի մեր ապակողմնորոշված, տկարացած հոտն իր հուսահատության մեջ խենթանալով: Ինչքան շուտ, խելացի և հոգեբուխ այդ հարցը բարձրաձայնվի և լուծվի (եթե այն կա), այնքան մեծ բարիք կլինի: Այդպիսով, կզորանա մեր ազգը, կհանգստանան մեր մեծերի, սրբերի, նահատակների հոգիները, և ամենակարևորը՝ մեր ազգից կգոհանա Արարիչ ու Փրկիչ Հայրը:

Շաբաթ, 13 - 04 - 2013թ., ժամը 10:00

Ո՞ՒՐ Է ՄԵՐ ՀՈԳԵՎՈ՛Ր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչն է բաժանում, հեռացնում մարդուն (հային) Աստծուց, եթե ոչ մեղքը, որի գագաթնակետը հոգևոր, գաղափարական և բարոյական կոռումպացումն է, որն առաջանում ու արտահայտվում է մարդու (հայի) խոհերում, նպատակներում և տարածվում, դառնում վերաբերմունք ու արարք:

Ուրեմն՝ եթե մենք սկսել ենք (փա՞ռք Աստուծո, որ սկսել ենք) մեր ազգային անվտանգության ռազմավարության մասին մտածել (կարծես թե մնացած մոտեցումներով մեր անվտանգության հարցերը լուծել ենք, մնացել է ռազմավարությունը), դա շատ լավ է, սակայն ինչո՞ւ պատշաճորեն չենք մտածում նաև մեր՝ հայ մարդու և համայն հայության ու նա՛և մեր պետության հոգևո՛ր, գաղափարակա՛ն և բարոյակա՛ն անվտանգության պաշտպանության ռազմավարության մշակման ու դրա կենսագործման ամենօրյա պայմանների ստեղծման մասին:

Ուրեմն սկսե՛լ ենք (կարծես թե դրա համար ազգն անպայման պետք է պետականանա՛ր, անկախանա՛ր, և մի քսան տարի էլ անցնե՛ր, որ հերթը գար «ազգային անվտանգության ռազմավարության մասին մտածել» սկսելո՞ւն), բայց չէ՞ որ հայության ազգային անվտանգությունը և դրանում ռազմավարությունը պետք են լինում (այն էլ ավելի շատ), երբ ազգը, ժողովուրդը ցիրուցան, անտեր, անկազմակերպ է, և հայրենիքը «մեր թշնամյաց ոտնակոխ է»:

Եվ հիմա՛ էլ, պետականանալուց հետո, երբ մեր ժողովրդի երկու երրո՛րդը, փաստորեն և առնվազն ֆիզիկապես ու իրավականորեն զուրկ է հայրենի պետականությունից, արդյո՞ք նրանք իրենց անվտանգության ռազմավարությունն ունեն: Հայ

ազգի մեծամասնությունը, երկու երրորդը՝ մեր «Սփյուռք» կոչածը, որը հայրենազուրկ է (և ազգային պատկանելության իմաստով ու գաղափարո՛վ ևս արագորեն հայրենազուրկ է դառնում) և ձուլման իրականության պայմաններում համարյա լիովի՛ն անհետանալու վտանգի ներքո հազիվհազ փորձում է երկարաձգել իր ազգային խարխլված գոյությունը, արդյոք իր ա՛յդ իսկ գոյության անվտանգության ռազմավարություն ունի՞ և դա գործնական մաս կազմո՞ւմ է մտածվող «ազգային անվտանգության ռազմավարությանը»: Եթե ունի, ո՞ւր է, թող ցույց տրվի դրա կիրառումն ու մեր տարբեր կողմերի մասնակցությունը, իսկ եթե չունի՞. դրա համար շատ բան կարելի է ասել, բայց մեկ խոսքով, ո՞ւր է մեր խի՛ղճը, ո՞ւր է մեր գիտակցությո՛ւնը և մեր «նամո՛ւսը», պատի՛վը, արժանապատվությո՛ւնը, և ո՞ւր է մեր սուրբ ու հերո՛ս նահատա՛կ նախնիների հոգիներին և մեր թոռների, սերունդների աչքերին բա՛ց ճակատով նայելու իրավունքը և պարտաճանաչությունը:

Իսկ մեր հոգո՛ւ պատասխանատվությո՞ւնը: Հոգով ի՞նչ պատասխան պիտի տրվի Տիրոջը, երբ մեր ազգի պետականացած հատվածին և հատկապես դրա ղեկավարությանը հարցնի. «Կայե՛ն, ո՞ւր է քո եղբայր Աբելը»: Ու ավելացնի. «Ես քեզ պաշտպանեցի փորձություններից, հանեցի ենթակայությունից, ազատեցի ու օգնեցի, որ պետականանաս, իսկ դու հիմա «զվարճացո՛ղ ես դարձել», ո՞ւր է քո Հայկյան գիտակցությունը և Իմ աչքի առաջ ամենա՛յն ազնվությամբ, հետևողականությամբ ու հարատևորեն պաշտպանելու, պահպանելու Իմ շնորհիվ քո վերականգնված պետությունն ու այդպիսով նաև համայն հայությանն ու հայրենիք Հայաստանին ծառայելու և հայավայե՛լ աստիճանի բարձրացնելու քո պարտաճանաչությունը»:

Եվ մեր այս ընթացքով, գուցե հասնենք նաև ա՛յն օրին, որ Տերը մեզ հարցնի, թե որտե՞ղ է քո հայրենիքը, քո Հայաստան դրախտավայրը և մենք պապանձվե՛նք, չկարողանանք պատասխանել:

Այստեղ գուցե պետք է դադար առնել, որովհետև մեր այս

վիճակի հետևությունները պարզ, ու ասելիքները շատ են և դրա մասին առանձի՛ն խոսակցություն է պետք...

Իսկ ի վերջո ու այնո՛ւամենայնիվ, եթե չկա հայության բոլո՛ր հատվածները ներառող համահայկական անվտանգության ռազմավարություն, ապա առաջնային ու անհապաղ հարց, ո՞վ, ովքե՞ր ու ե՞րբ են այդ ռազմավարությունը մշակելու և դրա գործադրումն սկսելու: Սա թե՛ համազգային, թե՛ պետական և թե՛ հայոց հոգեկա՛ն պարտականության հարց է, որի պատասխանն Աստվածապահա՛նջ է:

30 - 10 - 2008թ., ժամը 09:40

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայ Հոգևո՛ր Վերածննդի Ռազմավարությունը վերաբերում է համայն հայությանը՝ անկախ սեռից, տարիքից, սոցիալական վիճակից ու ապրելու վայրից:

Հայոց հոգևոր վերածննդի գոյացումը հայ պետականության, պետության և Հայրապետության առաջնային և հիմնական պարտականությունն ու գործն է:

Այն ներառում է ***հայոց հավատքը, գաղափարախոսությունը, բարոյական արժեհամակարգը, դրանց համահունչ կենցաղավարությունը, ազգային ներքին ու արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև խղճով ու հայ ազգային գիտակցությամբ՝ հայության, Հայաստանի և յուրաքանչյուր հայի հանդեպ պարտաճանաչությունը:***

Դրանցո՛վ, այդ հիմունքներով, հատկություններով և պարտքի զգացումով պետք է նպատակադրվեն, ծրագրվեն և կենսագործվեն մեր ժողովրդի գոյության ապահովումը, զարգացումը, առաջընթացն ու վերելքը:

Դրանցո՛վ հայ մարդը դարավոր ամենաանբարենպաստ իսկ պայմաններում կարողացավ պաշտպանել իր ինքնությունն ու այն փոխանցել սերունդներին:

Մեր նախնիք հավատքով այնքա՞ն էին լուսավորյալ, իմաստուն և գիտուն, որ հասկանում էին, թե հայը վերոնշյալ հիմունքներով, հատկություններով և պարտաճանաչությամբ՝ միայն կարող է հավատարիմ լինել իր մարդկային-ազգային Աստվածակերտ կոչումին, տեր կանգնել այդ կոչումից առաջացող պարտականությանը և ի վիճակի՛ լինել՝ կատարելո՛ւ իր այդ պարտականությունը:

Եվ նրանք կատարեցի՛ն այն. վկա՝ մեր այսօրվա (թեև որոշ չափով աղավաղված) գոյությունը, և վկա՝ դեռ մեր շատերի անկոտրում կամքը՝ պաշտպանելու, զարգացնելու և բարձրացնելու մեր ազգը, մեր երկիրը և մեր պետականությունն ու պետությունը: Այդպիսին լինելու և այդ անելու համար մարդկային պարզ տրամաբանությունն իսկ թելադրում է մեզ, լավագույնս իրազեկ լինել մեր նախնյաց հոգևոր ու մտավոր ժառանգությանը և օգտվելով դրանից՝ լավագույնս կատարենք մեր պարտքը՝ հանդեպ մեր ազգի, երկրի, պետականության, պետության և մեր երեխաների, թոռների, սերունդների:

Եվ դա կլինի նաև հօգուտ մարդկության և ի փառս մեր հավատքի, Աստուծո:

21-րդ դարասկզբի ըմբռնումների ու իրերի դրության համաձայն՝ Հայ Հոգևոր Վերածննդի Ռազմավարության մշակումը կարո՞ղ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի խնդիրը լինել, (կամ այլ՝ հատուկ կազմված խորհրդի, հանձնախմբի խնդիրը), որ կատարվի ազգային համապատասխան հաստատությունների և գերատեսչությունների համապատասխան աստիճանի մասնակցությամբ և համայն հայության հետ, համապատասխան խորհրդակցությամբ, որի կազմակերպումն ու համադրումը հայության ազգային և պետական ուրույն ոգու իմաստությա՛մբ կարող է լինել: Եվ այս հույժ էական նշանակության խնդրի հաջողության համար կա-

րևոր նախապայման է հայության աշխարհիկ և հոգևոր առաջնորդների (ղեկավարների) անմիջական հսկողությամբ՝

ա) տվյալ խնդրի հստակեցումը,

բ) խնդրի կատարման ծրագրումը,

գ) խնդրի և դրա կատարման նշանակության իրազեկումը, բացատրումը, մեկնաբանումը համայն հայությանը,

դ) հայության և նրա ղեկավար ու պատասխանատու հաստատությունների համապատասխան մասնակցությամբ այդ խնդրի անհետաձգելիորեն կատարումը:

Շաբաթ, 10 - 10 - 2015թ., ժամը 19:30

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿՈՒՌ ՇԱՂԱԽԸ

Եվ Հայոց Ազգային Միասնությունը հնարավոր է ու երաշխավորված է մեկ գլխավոր ու հիմնական պայմանով՝ հայության մեջ Ազգային Հոգեկան Միասնության առկայությամբ: Հետևապես, հայության մեջ դրա առաջացման ջանքերը պիտի կատարվեն ***Աստուծո հավատքով (Ավետարանով և Խաչով) ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու կենցաղավարությամբ:***

Ու այս ըմբռնումը՝ թե՛ մեկ և նույն հավատքի դավանումը, և դրանով գաղափարականացումը, բարոյականացումը, և կենցաղավարումը՝ բոլոր հայերի (որոնք ուզում են ապրել հայկականությամբ, այն է՝ որպես հայ և հայավայել մարդկայնությամբ՝ ավետարանական չափանիշներով իմաստավորված արժանապատիվ կյանք), այն ***Շ Ա Ղ Ա Խ Ն է, որն անքակտելիորեն միացնում է նրանց որպես հավատավո՛ր ազգ, կազմակերպում կենսունակ հայրենիքով ու զորացնում է***

ազնիվ, հմուտ և կարող պետականությամբ ու պետությամբ՝ հասցնելով մարդկային գոյության բարձրագույն աստիճանների:

Հայ ազգի դարավոր գոյության տարբեր ժամանակներում այդ ***Շ Ա Ղ Ա Խ Ը*** տարբեր պատճառներով տարբեր չափ ու որակ է ունեցել, ու ըստ այնմ եղել է նաև հայության միասնական դիմադրությունը մարդկային-ազգային ինքնության պաշտպանության ու պահպանման համար, ու նաև ըստ այնմ եղել է հույսը, գիտակցությունը, ձգտումն ու ջանքը՝ ունենալու ազատ, անկախ, արդար, զորեղ ու զարգացած երկիր և պետություն…

Ու այժմ էլ հայության և նրա հայրենիք Հայաստանի ազգային գերագույն շահի պաշտպանման ու հաստատման երաշխիքը (ինչպես նախկինում ու միշտ) ***հայության հավատարմությունն է Աստուծո հավատքին՝ Ավետարանով ու Խաչով, որով և հավատարմություն իր ազգային գաղափարականությանը, բարոյականությանը և կենցաղավարությանը:***

Հայությունը կարո՞ղ է վերաստեղծե՛լ, վերականգնե՛լ այդ ***Շ Ա Ղ Ա Խ Ը՝*** հաշվի առնելով իր դարավոր կորուստները, ներկայիս դիմագրաված փորձությունները և իր ունեցած հոգեկան կորովի, պետական մտածելակերպի և ընդհանուր կարողությունների որակը:

Համաձայն մարդկության և հայության պատմական փորձի ու փաստերի՝ այդ հարցի պատասխանը թե՛ այո է և թե՛ ոչ:

Ո՛չ է, եթե շարունակենք շեղվել մեր ազգային ինքնությունից՝ հիմնականում անհավատարմությամբ մեր հավատքին, որով և՝ գաղափարազրկությամբ, բարոյազրկությամբ, նյութապաշտությամբ, կոռումպացվածությամբ ու արատավոր կենսակերպով:

Եվ պատասխանը հաստատ ***այո՛ է,*** եթե այդ ***Շ Ա Ղ Ա Խ ի*** ստեղծումը (կամ վերաստեղծումը) դառնա վերամաքրված և իրենց կոչումին վերահաստատված մեր հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների գլխավորությամբ ու օրինակով հայության

կրիտիկական զանգվածի ազգային նպատակ, ***ծրագիր, քաղաքականություն և գործ:***

Բայց մի նախապայման ևս կա, որ գերէակա՛ն է. ***հայերս դառնանք Աստուծո ազգ՝ արժանի Աստվածային օգնության:*** Օգնություն, որով մեր իշխանությունների հետ բոլորս կիմաստնանանք, կզորանանք, կիմտանանք, կկազմակերպվենք ու (թեև առերևույթ գուցե փոքր միջոցներով և սահմանափա՛կ հնարավորություններով) կունենանք մե՛ծ ու էակա՛ն հաջողություններ, հաղթանակներ կյանքի բոլո՞ր բնագավառներում:

Նույնը կունենան նաև մեր զավակները, թոռները, սերունդները, քանի որ մեր այդպիսի՛ հայության հետ միշտ կլինի հաճությունն ու օրհնությունն Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո:

Կիրակի, 27 - 06 - 2008թ.

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԿՅԱՆՔ Է

Հայոց ազգային միությունը մեր ազգի և մեր նախնիների դարավոր բաղձանքն էր. եկեղեցիներում «Տեր ողորմյա» աղոթք-երգեցողության մեջ Աստծուց խնդրվում է. «Եվ տուր ազգիս հայոց՝ սեր, միություն»: Ու այդ դարավոր բաղձանքն այսօր էլ կա, միայն թե դրա իրականացման, ըստ երևույթին մեր ավելի թո՛ւյլ հույսով և նվա՛զ ջանքերով, թեև դրա կենսական կարևորությունը չի փոխվել: Ավելին՝ մեր այդ բաղձանքը ու նաև ձգտումը պետք է ավելի մեծանա ու վճռական դառնա, քանի որ մեր օրերում ազգը մասնատված, բաժանված է ոչ միայն օվկիանոսներով ու մեր չունեցած ծովերով, այլև մասնատված է քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական, գաղափարական, լեզվական, լեզվամտածողական ու այլ խորացող տարբերություններով: Հետևապես այդ պայմաննե-

րում հայ ազգի էական նպատակների, ծրագրերի քաղաքականության և դրանց կենսագործման համար միջոցների, կարողության և ներուժի համադրված, կազմակերպված կիրառությունը (որն էական է մեր գոյության համար) առավե՛լ ևս պայմանավորված է ազգային միասնությամբ:

Բայց չի ստացվում: Ինչո՞ւ: Ի՞նչ պետք է անել:

Սկսենք հարցուպատասխաններով.

-Մեզ ի՞նչն է միացնում կամ ի՞նչն է, որ պետք է միացնի: Ազգին ծառայե՞լը: Մեր ազգային ազնի՛վ ծառայությունն ու նաև փոխադարձ հարգա՞նքը, սե՞րը. դրանցով վստահությո՞ւնը և նման այլ զգացումնե՞րն ու տրամադրվածությո՞ւնը, արարքնե՞րը:

-Այո՛, դա ճշմարի՛տ է և շատ-շատ կարևո՛ր ու պարտադի՛ր է, բայց մեր ազգային լիարժեք, հարատև ու անխա՛խտ միասնության համար, բացի դրանցից կա նաև մի գե՛րկարևոր, գերէակա՛ն և ընդհանրակա՛ն պահանջ ու պայման՝ մեր **հավա՛տքը:** Մեր բոլորի ճշմարի՛տ հավատավորումը և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ և ըստ այնմ կենցաղավարությամբ ապրելը: Պահանջ ու պայման, որը մեծ մասամբ այլևս չե՛նք զգում կամ շատ թո՛ւյլ ենք զգում, ու ըստ այնմ վերաբերվում և փորձում կատարել, բայց դրանից չի՛ փոխվում այդ պահանջի ու պայմանի էական նշանակությունը, որը կարոտ է որոշակի հստակեցման, այն է՝ **մենք չե՛նք կարող ծառայել և չե՛նք ծառայում ինչպես պետք է ազգին. մենք կարո՛ղ ենք և պե՛տք է ծառայենք Աստծո՛ւն՝ ծառայելո՛վ ինչպես պետք է ազգին:** Այսինքն՝ մենք որպես մարդ ու հայ ստեղծվածներ Արարչի կողմից, մեր **ամբողջ էությամբ ծառայում ենք Արարիչ ու Տեր Ամենակալ Աստծուն, հետևողական, հարատև ու ազնի՛վորեն ծառայելով մեր հայ ազգին, հայրենիք Հայաստանին և պետությանը** (որը նաև Տիրոջ շնորհով առաջի՛նը քրիստոնեացավ):

Եվ Աստծուն այս հոգեբուխ, ծառայությամբ՝ հայ ազգին ինքնաբուխ ծառայությունը կարիք չունի ունայն խրախուսանքների, հորդորների (աբիսողոմայական պահանջների բավա-

րարման), քանի որ այդ ծառայությունը հոգու պարտականություն է:

Եվ սա բառախաղ չէ, սա կենսատու ճշմարտություն է. այն ունի և մեծ խորք, ու թեև կարող է թվալ, թե տարբերություն չկա ասվածի մեջ կամ աննշան է տարբերությունը, սակայն դա այդպես չէ: Գուցե թվո՛ւմ է, թե տարբերությունն աննշան է, սակայն իրականում այդ տարբերությունն անսահման է, որովհետև Աստվածությունն է անսահման ու բացարձակ:

Եվ այդ ճշմարտությունն է, որ մեզ միացնում է Աստուծուն՝ Ալֆային և Օմեգային. ծառայել Նրան՝ ծառայելո՛վ հայությանը, հայ ազգին, որով և Աստվածատուր հայրենիք Հայաստանին ու պետությանը: Եթե սա հասկանանք, ըմբռնենք, էապես շատ բան կփոխվի մեր անձնական ու ազգային կյանքում, և ապահովությունն ու վերելքը կդառնան բնականոն երևույթներ ու փաստացի եղելություններ...

-Ուրեմն, մեկ խոսքով, մեր ազգային կենսականությունը պայմանավորված է ո՛չ թե մեր ծառայությամբ հայ ազգին, այլ ծառայությամբ մեր Արարիչ հո՛րը՝ Աստծո՛ւն՝ ծառայելո՛վ հայ ազգին: Իսկ ինչպե՞ս ծառայել ազգին:

-Ծառայելով Հայաստանին:

-Իսկ ինչպե՞ս ծառայել Հայաստանին:

-Ծառայելով Հայոց պետությանը:

- Իսկ ինչպե՞ս ծառայել Հայոց պետությանը:

- Հայ ազգի և մեզանից յուրաքանչյուրի հավատքո՛վ ազնվացմամբ:

- Ինչպե՞ս կարող է ազնվանալ հայությունը՝ ազգը և յուրաքանչյուր հայ:

- Սրբությա՛մբ, սրբանալով: Որ Աստվածային շնորհով՝ ճշմարտության ճանաչմամբ է:

- Ո՞րն է ճշմարտությունը, ի՞նչ է ճշմարտությունը:

- Առաջնային, մեծագույն, էական և բացարձա՛կ ճշմարտությունը Հիսուսի Աստվածությունն է: Նրա Աստվածության ճանաչելը, պաշտելը և Նրա պատգամներն իմանալն ու կատարելն է: Դրանք կյանքի ապրում դարձնե՛լն է, որով և կարելի է

մոտենալ Նրան՝ բացարձակ ճշմարտությանը, արդարությանը և հաղորդվել Նրա զորությանը...

Այդպիսով, առաջանում և մեծանում է հայի Աստվածային շնորհը, որ բացում է հոգու տեսողությունը, լսողությունը և լուսավորում տրամաբանությունը, դատողությունը, որով և հայ մարդու համար առավել հասկանալի է դառնում և ընդունվում Ավետարանի իմաստությունը, գիտությունը և Խաչի խորհուրդն ու զորությունը:

Եվ մարդը, հա՛յ մարդը դառնում է ա՛յլ հայ մարդ՝ հողեղենի վրա ավելանում է հոգեղենը և նրա նյութական տկարությունը փոխվում է հոգեկան զորության. իր ժամանակավորությունը փոխվում է՝ մշտնջենականության, և նրա ունայնությունը՝ լիարժեքության:

Սա, վերաբերելով հայությանը, վերաբերում է նաև համայն մարդկությանը (եթե մարդկությունը ևս տոգորվի նույն հավատքով ու ընթանա դրա ճամփով):

- *Այդ ճշմարտության հաստատման համար մեզ ծեռնարկելիք ի՞նչ միջոց է պետք:*

- Պետք է իրացնե՛լ, կյանքի ապրում դարձնել մեր նախնիների, մեր սո՛ւրբ մեծերի՝ մեզ կտակած ժառանգությունը, իսկ դրա մեջ՝ նախևառաջ նրանց ապրած կյանքում նրանց վերաբերմունքի և գործերի օրինակը և նրանց կողմից մեզ ուղղված պատգամները: Իսկ մեր այդ սուրբ ժառանգությունը 21-րդ դարասկզբում իրացնելու համար մեզ պետք են նաև 4-5-րդ դարերում արտահայտված Թարգմանչաց շարժման ոգին, հավատքը, գաղափարականությունը, բարոյականությունը, գիտակցությունը, նվիրումը և դրանցով՝ պատասխանատվության զգացումը: Մեզ պետք են նաև դարերի ընթացքում նրանց ուղիով ընթացած մեր հայրերի, մայրերի մարդկայնությունը, հայկականությունը, կամքը, հետևողականությունը և հավատարմությունը հավատքին, ազգին, հայրենիքին և մարդկությանը:

Եվ պետք է, որ այդ բոլորը, յուրաքանչյուր հայի կյանքի առօրյա ապրումը դառնալով, հոգեկան նախանձախնդրությամբ տարածվի մեր ազգի մեջ բոլոր հարթություններում և

մանավանդ նոր սերնդի մեջ՝ 21-րդ դարի ձևակերպմամբ, ձևավորմամբ, սակայն հայկական տոհմիկ բովանդակությամբ:

Մեր ժողովուրդը և հատկապես նոր սերունդը պետք է էապե՛ս համակվի ***հայկականությա՛մբ***[1]**,** որը իսկական հայագիտության ու հայրենագիտության առանցքն է: Հայկականություն, որի մասին Հայոց պետությունը, Հայրապետությունը և յուրաքանչյուր մտավորական հայ իր չափով պետք է կատարելապես իրազեկ լինի, ինչպես նաև ուսուցանի ազգին, հատկապես նոր սերնդին՝ այդ անելով նաև որպես հայության հոգեբարոյական և գաղափարական իմունիտետի զորացում՝ վարակամերժ կարողության մեծացում:

Եվ ով, որ կոչված է (և ոչ թե պարտավորված), այլև օրհնված ու շնորհի արժանացած Աստուծուն ծառայելու՝ ծառայելով հայ ազգին, նրա հոգու պարտքն է դառնում նաև ըստ այնմ ծառայել մեր պետությանը, Հայրապետությանը և հայրենիք Հայաստանին՝ ***իրազեկելով*** նաև այդ մասին ազգին:

Հայ Ազգային (էական) իրազեկում: Այսինքն՝ ազգային իրազեկման (և ուսուցման) ծառայություն. իրազեկում՝ բոլոր կրթական, գիտական, մշակութային և տեղեկատվական միջոցներով, տարբեր հավաքներով ու նաև ուսուցում՝ նույնպես բոլոր տեղեկատվական միջոցներով, տարբեր ծավալի, ձևաչափի, մակարդակի հավաքներով և մա՛նավանդ նվիրյալների անձնական օրինակով:

- Եվ հայ ազգն իր մեջ, պետությունն իր մեջ և հայ անհատն իր մեջ պիտի՛, պե՛տք է պահեն, պահպանեն և կյանքում գործարկեն Աստուծո Հոգով՝ մարդուն տրված իմաստությունը,

---

[1] «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (Երևան, 1974, հատոր 3, էջ 283) **հայկականություն** բառը բացատրվում է որպես՝ հայկական բնույթ՝ հոգեբանություն՝ բնավորություն:

Ըստ «ՀԱՅՔ» հաստատության՝ դրա հետ և դրանից առաջ **հայկականությունը** նշանակում է հոգեկանություն, հավատք, Աստվածասիրություն, մարդասիրություն, բարեսրտություն, ազգասիրություն, հայրենասիրություն, մեծահոգություն, բարոյականություն, պատվախնդրություն, պարտաճանաչություն, պատրաստակամություն, երկնային ըմբռնումով աշխարհայացք և դրանցով հայ կյանքի ապրում Աստվածային օրհնությամբ:

որով և գաղափարականությունը, բարոյականությունը՝ կրթությամբ, գիտությամբ, մշակույթով՝ արվեստով, գրականությամբ, բայց նախ և առաջ հավատքով՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի՛ իմաստությամբ, գիտությամբ, Խաչի խորհուրդով, զորությամբ ու ըստ այնմ՝ կոռումպազերծ մտայնությամբ, գիտակցությամբ ազգային-հասարակական հարաբերություններով և կենցաղավարությամբ:

Սա բխում է Արարիչ Հոր Հոգուց, առանց որի չկա իրավ ու հեռանկարային գիտություն, ստեղծագործություն, և հետևապես՝ չկա իրավ ու հեռանկարային զարգացում, առաջընթաց և կյանք:

Բայց այդ չլինելը դեռ չարյաց ամբողջությունը չէ՛. առանց Տիրոջ Հոգու՝ չկա հայության (ինչպես և մարդկության) մեջ վարակամերժ կարողություն, որով հոգեբարոյական մաքրություն՝ անկեղծություն, վստահություն, որով և խաղաղություն, միասնություն, հարաբերությունների ներդաշնակություն և կյանքի առաջընթաց՝ իմաստ ու երջանկություն, երանություն:

Մինչդեռ այդ բոլորը լիովին լինում են հայի և հայության հայկականությա՛մբ ապրելով: Եվ այդպիսո՛վ է, որ՝

Աստված կգոհանա և կօգնի ու կպաշտպանի մեզ:

Մեր նախնյաց հոգինե՛րը կցնծան և կօրհնեն մեզ:

Ե՛վ մեր երեխաները, թոռները և սերունդները շնորհակալ կլինեն մեզ:

Բայց ամենակարևորը՝ նրանք կհետևեն մեր օրինակին՝ նույնն անելով իրենց հետնորդների համար՝ հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

ԵԿԵՂԵՑՎՈ (ՀԱՎԱՏՔ), ՊԵՏՈՒԹՅԱՆ (ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ (ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՄԻԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազգի, նրա հայրենիք Հայաստանի և պետության համար բացարձակ անհրաժեշտություն է, նախևառաջ ունենալ հավատավոր, Աստվածահաճո կյանք:

Եվ դրանով ունենալ՝ ներազգային ու արտաքին խաղաղություն, հոգևոր իմաստությամբ պետական սահմանադրություն, օրենքներ, կանոններ և ներքին ու արտաքին քաղաքականություն:

Ու այդպիսով նաև ունենալ անկեղծ, ուղղամիտ դիվանագիտություն բարեկամական, օգտաշատ հարաբերությունների ամրապնդման ու ընդարձակման համար, որը անվտանգության, ապահովության, համագործակցության և նման այլ բազմաթիվ պայմաններից բացի, կառաջացնի նաև ֆինանսատնտեսական կապերի շեշտակի զարգացում՝ շուկաների ստեղծմամբ կամ ընդարձակմամբ և գիտատեխնոլոգիական տարբեր բնագավառների ընդգրկմամբ: Եվ դրանցով կստեղծվեն նաև Հայաստանի նոր՝ բարձրակարգ տեխնոլոգիաների վրա հիմնված արդիական արդյունաբերություն, գյուղատնտեսություն, զարգացած տնտեսություն և ժողովրդի հոգևոր ու նյութական բարձր արժեքներ ու կենսաձև:

Դա իրականություն դարձնելու համար պետք են բաներ, որոնք մենք չունենք, բայց ունենք բաներ, որոնք ավելի կարևոր են և ի զորու են ստեղծելու այն, ինչը մեզ անհրաժեշտ է, բայց չունենք: Դրանցից՝ այդ կարևորներից է մեր ճանաչողական ու

ինքնաճանաչման հատկությունն ու հնարավորությունը, այն է՝ լավ ճանաչել մեզ, ներառյալ Սփյուռքը, առանձին-առանձին հատվածներով և խավերով (ի վերջո) առաջացնելու համար մեկ ազգ, մեկ հոգով, սրտով, նպատակով, հանձնառությամբ և ազգային հավաքական միջոցներով, կարողությամբ ու համահայկական կառավարմամբ: Ու նաև լավ ճանաչել ամբողջ աշխարհը և հետն աշխատել ու համագործակցել մտքով, հմտությամբ, բայց և հոգեկանությամբ: Այսինքն՝ նաև օգուտի ստացման փոխադարձ ա՛յն պարտաճանաչությամբ և ձգտումով, որը կապահովի օգտաշատ հարաբերությունների հարատևություն ու անընդհատ աճ:

Սա առաջին պայմանն է, որը մրցահրավեր է նետում բոլոր հայերին և հատկապես մեր որոշ ազգային կառույցներին՝ իրենց աշխատանքները որակապես փոխելու համար նոր գաղափարով, խղճով, գիտակցությամբ ու ըստ այնմ նոր ծրագրերով, նոր կազմակերպմամբ, կառավարմամբ ու պատասխանատվության զգացումով, որ առաջանում են հոգու պարտքի գիտակցումից, ըստ՝ մեր հավատքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ ազգային գաղափարախոսության ու բարոյականության:

Երկրորդ պայմանը Հայ ազգային գաղափարախոսության առավել հստակեցումն ու իրազեկումն է՝ որպես հայության ու յուրաքանչյուր հայի կյանքն իմաստավորող կռվան ու առաջնորդ, ուղեցույց:

Ինչպես վաղուց և բազմիցս ասել ենք, հայության վերապրումը, նրա հարատև անվտանգությունը, ամեն ինչում ապահովությունը, զարգացումը և վաղեմի իղձերի կատարումը պահանջում են որակ: Որա՛կ, որի առկայությունը մեր գոյության համար պարտադիր է, որովհետև ոչ միայն տեսանելի, այլև անգամ անտեսանելի ապագայում մենք չենք կարողանա հավասարվել մարդկային և նյութական ռեսուրսներով ու նաև աշխարհագրական ռազմավարական դիրքերով՝ մեր հակառակորդներին, մեր մրցակիցներին: Ուստի, մենք պե՛տք է, հրամայակա՛ն է, որ անձնական, ազգային և պետական ***համապա-***

տասխան որա՛կ ունենանք մեր խոհերում, հարաբերություններում ու գործերում: Մանավանդ որ մարդկության պատմական համընդհանուր զարգացումը մարդկային որակական գործոնի մեծացմամբ է տեղի ունենում: Եվ այդ գործոնը հայության արարումների և հաղթանակների նախապայմանն է:

Եվ կա նաև մի կենսատու հանգամանք, իրողություն, որ գերակա է ամե՛ն ինչից (թեև դժբախտաբար դա մենք չենք զգում կամ շատ քի՛չ ենք զգում). Աստված սիրո՛ւմ է հայ ազգը: Սիրո՛ւմ է և օժտել է որակական բազո՛ւմ հատկություններով, որոնք շատ հաճախ չենք օգտագործում կամ սխալ ենք օգտագործում, երբեմն էլ՝ հոգուտ օտարների և նույնիսկ հակառակորդների ու թշնամիների համար ենք գործածում:

Եվ Աստվածաշնորհ հայ ազգային այդ որակը, հոգեմտավո՛ր ըմբռնմամբ նախևառաջ արտահայտվում է մեր ազգի հոգեկանությամբ՝ հավատքով, դրանից բխող և դրա վրա հիմնված հայ ազգի գաղափարով, բարոյական արժեքներով, ըստ այնմ կրթությամբ, մշակույթով ու ազգի բոլոր բնագավառների գործերի, ջանքերի կազմակերպական կառավարմամբ, ազգի կենցաղավարությամբ և հասարակական ու ընտանեկան հարաբերություններով: Ու այ՛դ բոլորի առանցքը մեզ համար քրիստոնեական հավատքով հայկականության Աստվածապատգամ ու Աստվածահաճո ապրումն է, որը կլուսավորի, կիմաստավորի մեր ու մեր սերունդների կյանքը:

Ուրեմն՝ հավատքով հայկականությա՛մբ իմաստավորելով մեր կյանքը, վերստանա՛նք Աստվածաշնորհ որակը, որպես երաշխիք հայության ու Հայաստանի հարատև վերընթացի: Որը նաև հոգուտ մարդկության ու ամենաէականը՝ ի փառս մեր հավատքի է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԼՈԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, ԹԵ՞ ԱԶԳԱՆՊԱՍՏ ՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՄԵՏ ՀԱՏՈՒԿ ՄԻՈՒԹՅՈՒՆ

- Հայոց քրիստոնեական հավատքի պետական-իրավական-պատմական անխախտելի հիմունքները 12
- էական հարցեր 14
- Եկեղեցի և պետություն 26
- Ինչո՞ւ համար է բաժանումը և ի՞նչ պետք է արվի միացման համար 32
- Թող ներվի ասել 34
- Վարդանանք 36
- Երբ հավատքի ազգային քաղաքացիականացումը և քաղաքականացումն ապազգայնացվում են 38
- Ազատություն-ժողովրդավարություն-օրենքի իշխանություն 41
- Պետականակիր ազգ դառնալու և ազգային-պետական կյանքով ապրելու ճանապարհը 43
- Հայոց պետականության ու պետության գոյության և վերելքի օրինաչափ նախապայմանը 44
- Պատասխանատվություն Աստուծո առաջ 46
- Նման է, բայց նույնը չէ 47
- Հոգեբարոյական զարկերակի զգացողություն 50

• Հայկական ինչպիսի՞ պետություն 52
• Ինչ կգրեի, եթե 54
• Արդյո՞ք Աստված համաձայն է 57
• Անցյալը պահպանենք ապագայի ապահովմամբ 59
• Բարու աղբյուրը 59
• Սուրբ Հայաստան 60
• Մեծ ճեղքվածք առաջացնող «մանրուք» 62
• Կառավարման ազգային կառուցվածք 65
• Սուրբ պետություն, ըստ այնմ՝ որոշումներ ու գործելակերպ 66
• Հայ ազգի կենսական քաղաքականությունը 69

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿ ՈՒ ԸՆԹԱՑՔ

• Փրկություն հավատքի մերօրյա ճգնաժամից 72
• Մեծ ընտրությունը 74
• Կողմնորոշում. ինչպե՞ս 76
• Ի՞նչն եմ փնտրում 78
• Եթե Ավետարանը չտրվեր 79
• Քրիստոնյան և մանավանդ հայը պետք է մշտարթուն ու գործուն լինի 81
• Անփույթ ու աներևույթ մնացող շեղումներ 82
• Հայկականության քաղաքական փիլիսոփայությունը 84
• Ցավալի, բայց իրական 88
• Հայության կառավարումը 90
• Ազգային գերխնդիրներից 92
• Հայկական էական ընբռնումներ 95

• Վերջին հաշվով ովքե՞ր, ե՞րբ 97
• Տեղեկատվության դարաշրջանում հոգևոր անտեղյակություն՞ն 99
• Հավատքով՝ կրոն ու եկեղեցի և գաղափարախոսությամբ՝ բարոյականություն ու պետություն 100
• Ի՞նչ վիճակում է հոգևոր կյանքը Հայաստանում 101
• Մերժում և խուսափում հոգեբարոյական ու գաղափարական այլասերումից (դեգրադացիայից) 103
• Ո՞ւմ ղեկավարությամբ, ինչպե՞ս ու ե՞րբ պաշտպանվել ա՛յս պատերազմում 107
• Փրկություն հոգևոր կուրությունից, գաղափարական անդամալուծությունից ու բարոյական այլասերումից 109
• Բարի արդյունք՝ հավատքով 111
• Իսկ հիմա՞ 113
• Ավետարանի խոսքը՝ կողմնորոշող ուժ և փրկություն 114
• Ինքերցիայի ուժը 116
• Ներազգային թշնամություն 118
• Մեր հոգիների փրկության կռվանները 120
• Վերելք ազգային կոռումպազերծմամբ 122
• Ովքե՞ր կտնօրինեն մեր ժառանգությունը 127

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔՈՎ

• Խաչ 130
• Հավատք և կյանք 131
Փառավորագույն ճշմարտություն 134

- Խոհեր հայոց պետականորեն քրիստոնեանալու մասին 135
- Հայ ազգի, Հայաստանի և պետության գոյության միջնաբերդ հայկականության հոգեկանությունը 141
- Հավատքը չեզոք չէ 142
- Ի՞նչը ինչո՞վ է պայմանավորված 144
- Առերևույթ առաջադիմական նվաճումներ, որոնք իրականում պիղծ են ու կորստաբեր 145
- Արդյո՞ք շտկել ենք դպրոցական դասագրքերի բովանդակությունը 147
- Չանտեսել էականը՝ կյանքը 149
- Հայության և Հայաստանի հզորություն, ապահովություն ու վերելք ամեն ինչում 150
- Միշտ, ամենուր և բոլոր պայմաններում 152
- Համառոտ, բայց կարևոր անդրադարձ 154
- Ինչպե՞ս ապրել 155
- Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ ըստ երևույթին դժվարացող խնդիրները 157
- Ո՞ւր է մեր հոգևոր անվտանգության ռազմավարությունը 160
- Հայ հոգևոր վերածննդի ռազմավարություն 162
- Հայ ազգային միասնության ամրակուռ շաղախը 164
- Ճշմարտության ճանաչումը կյանք է 166

Վերջաբան. Եկեղեցվո (հավատք), պետության (գաղափարականություն) և հասարակության (բարոյականություն) անփոխարինելի միասնությունը 172

Վարդան Գրիգորյան

ԵԿԵՂԵՑԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Աստվածաշնորհ
հարատև գոյություն

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 992
Ստորագրված է տպագրության՝ 11.05.2020 թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 11.25 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 600 օրինակ:
Գիրքը վաճառքի ենթակա չէ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: